 բնակչության շրջանում առկա
 դժգոհությունները ժամանակի ընթացքում
 վերաճեցին զինված ապստամբությունների:
 Կարևոր տեղ է զբաղեցնում 1771 թվականին աբխազ
 բնակչության բարձրացրած ապստամբությունը,

⁴⁵ Տե՛ս В. Анчабадзе, “Очерк этнической истории абхазского народа”, издательство “Алашара”, Сухум, 1976, стр. 91

ի ն չ ի արդյունքում վերջիններին նույնիսկ հաջողվեց օսման ցիներին ցաղատագրել Սուխումի ամրոցը: Սակայն ապստամբության հետագա հաջող ընթացքը կանխեց աբխազ թավադներին օգնությունը օսմանյան բանակին⁴⁶: Օսմանյան կայսրությունը իր ազդեցությունը կրկին ամրապնդեց 1780-ականներին, երբ Աբխազիայի իշխանությունն գլուխ կանգնեց Քելեշ-բեյ Շարշավիձեն⁴⁷: Օսմանյան ազդեցության մեծացմանն էին նպաստում նաև Արևմտյան Վրաստանի և Աբխազիայի տարբեր իշխանական տների միջև պարբերաբար տեղի ունեցող զինված բախումները, ինչի հետևանքով շատ իշխանական տեր օգնություն համար դիմում էին թուրքական իշխանություններին: Աբխազիայում հետզհետե սկսվեց նկատվել նաև բնակչության մի հատվածի իսլամացման քաղաքականության հետևանքները: Բնակչության շրջանում առկա կրոնական տարբերությունները սկսեցին արտահայտվել նույնիսկ կենցաղում: Իսլամադավան բնակչության շրջանում որպես գրագրության լեզու վրացերենը իր տեղը սկսեց զիջել թուրքերենին և արաբերենին, միևնույն ժամանակ ազնավականության ներկայացուցիչները նախընտրություն էին տալիս Ստամբուլում և այլ օսմանյան քաղաքներում կրթություն ստանալուն: Իսլամի և իսլամական մշակույթի տարածումը Աբխազիայում հնարավորություն էր տալիս հակազդել Վրաստանի, իսկ հետագայում նաև Ռուսաստանի ազդեցության

⁴⁶ Իշխանական կոչում Վրաստանում XV-XVIII դարերում: Տե՛ս Д. Гордеев, “Черты феодального строя в Грузии и в ханствах Закавказья в новые века”, “Билютень КИАИ в Тифлисе”, № 8, Ленинград, 1931, стр.10-11

⁴⁷ Տե՛ս Н. Бердзинишвили, “История Грузии. С древних времен до начала XIX века”, Издательство Грузинской ССР, Тбилиси, 1962, стр. 178-179

մեծացմանը երկրամասում, որոնք իրենց նպատակին հասնելու համար օգտագործում էին քրիստոնեությունը: Արդեն XVIII դարի վերջին ամրապնդված կրոնական և մշակութային տարբերությունները աբխազական բնակչության շրջանում հանգեցնում էին նրան, որ Աբխազիայի իշխանությունը չէր կարողանում միասնական ճակատով հանդես գալ արտաքին ուժերի դեմ:

Սկսած XVIII դարի կեսերից սկսում է կտրուկ փոփոխվել աշխարհաքաղաքական իրավիճակը Յարավային Կովկասում, որտեղ հետզհետե սկսում է առանցքային դեր խաղալ Ցարական Ռուսաստանը: Վերջինիս հետևանք է ծ հոլյսեր էին կապում նաև Յարավային Կովկասի քրիստոնյա ժողովուրդները, որոնք գտնում էին, որ Ռուսական կայսրությունը կարող է հակակշիռ դառնալ օսմանյան և իրանական ազդեցությանը: Ռուսական իշխանությունները, իրենց հերթին փորձում էին օգտվել ստեղծված իրավիճակից և աջակցում էին տեղի քրիստոնյա բնակչության պայքարին ընդդեմ Օսմանյան կայսրության և Իրանի: 1768 թվականին սկսված ռուս-թուրքական պատերազմի տարիներին գրանցվեցին առաջին զինված բախումները Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև Յարավային Կովկասում: Եկատերինա II-ի կայսրուհուն ախաձեռնությունը վրաց-ռուսական համատեղ ուժերը ռազմական գործողություններ սկսեցին Աբխազիայում և Սամցխեում տեղակայված օսմանյան ուժերի նկատմամբ՝ նպատակ ունենալով կանխել օսմանյան զինված ուժերի տեղափոխումը պատերազմի հիմնական ռազմաճակատներ՝ Բալկանյան թերակղզի և Ղրիմ: Միևնույն ժամանակ

Քարթլի-Կախեթի թագավոր Իրակլի II-ին և Իմերեթիայի թագավոր Սողոմոն I-ին ռուսական կողմը երաշխավորեց վերջիններիս պաշտպանել նաև օսմանյան բանակի հետագա արշավանքներից⁴⁸: Չնայած նրան, որ 1774 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված Քյոնջուկ-Քայնարջայի խաղաղության պայմանագրով ցարական իշխանությունը ճանաչում էր Օսմանյան գերիշխանությունը Արևմտյան Վրաստանում և Սևծովյան ափամերձ շրջաններում, Ռուսաստանը զգալիորեն ամրապնդեց իր դիրքերը տարածաշրջանում: 1783 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված Գեորգիևյան դաշնագրով Ռուսական կայսրությունը ստանձնեց Արևելյան Վրաստանի (Քարթլի-Կախեթի) հովանավորչությունը, փոխարենը վրացական կողմը պարտավորվեց վարել ռուսական իշխանությունների հետ համակարգված արտաքին քաղաքականություն, ինչպես նաև ռուսական կողմին հանձնել բանակի կառավարումը: Փաստացիորեն դաշնագիրը դարձավ Արևելյան Վրաստանի Ռուսական կայսրությանը միացվելու գործընթացի սկիզբը, որը ավարտվեց 1801 թվականի սեպտեմբերի 12-ին Ալեքսանդր I-ի հրամանագրով, որով Քարթլի-Կախեթին վերածվեց ռուսական կայսրության վարչական միավորի⁴⁹:

Արևելյան Վրաստանի միացումից հետո ռուսական իշխանությունները ձեռնամուխ եղան նաև Արևմտյան Վրաստանի և Աբխազիայի նվաճման գործընթացին: Ռուսական նման քաղաքականությունը Արևմտյան Վրաստանի

⁴⁸ Տե՛ս R. Suny, “The Making of the Georgian Nation”, Indiana University Press, Bloomington, 1994, pp. 57-58

⁴⁹ Տե՛ս Н. Дубровин, “Георгий XII последний царь Грузии и Присоединение ее к России”, типография Д.В. Чичинадзе, Санкт-Петербург, 1897, стр. 171-172

շրջաններին դեկավարներին շրջանում տարբեր կերպ
 էր ընկալվում: Մի մասը պատրաստվում էին
 զինված դիմադրություն ցույց տալ ցարական
 զինված ուժերին, իսկ մյուս մասը ձգտում էին
 պահպանել իրենց իշխանությունները
 ընդգրկվելով Ռուսաստանի կայսրության
 կազմում: Նման իրողությունը ուսական իշխող
 վերնախավին հնարավորություն էր տալիս իր
 համար հնարավորինս շահավետ օգտագործել
 ստեղծված իրավիճակը մեկ-մեկ կայսրությանը
 միացնելով Արևմտյան Վրաստանի
 իշխանությունները: 1803 թվականի դեկտեմբերին
 Ռուսական կայսրության կազմում ընդգրկվեց
 Մեգրելիան: Մեգրելիայից հետո Ռուսական
 կայսրությանը միացվեցին նաև Իմերեթական
 թագավորությունը (1804 թ.) և Գուրիայի
 իշխանությունը (1810 թ.)⁵⁰: Դեպքերի նման
 զարգացումը չէր կարող դուրս մնալ այդ
 տարիներին Օսմանյան կայսրության
 հովանավորչության տակ գտնվող Աբխազիայի
 իշխող վերնախավի ուշադրության կենտրոնից:
 Յատկանշական է, որ Ռուսաստանի հետ
 հարաբերություններին հաստատմանն ուղղված
 առաջին քայլերը նախաձեռնեց օսմաններին
 աջակցությամբ իշխանության եկած Քելեշ-բեյը,
 որը ձգտում էր դուրս գալ օսմանյան
 ազդեցության տակից: Պետք է արձանագրել, որ
 աբխազ իշխանի ակնհայտ հակաթուրքական
 գործողություններին հետևանքով Աբխազիան
 հետզհետե սկսեց դուրս գալ շուրջ երեք դարյա
 օսմանյան գերիշխանությունից: Մասնավորապես

⁵⁰ Տե՛ս Ս. Կուրադի, «История Абхазии в датах», Сухум, 2011, стр. 50-51

1806-1812 թվականներին ռուս-թուրքական պատերազմի տարիներին Քելեշ-բեյը, փորձելով բարելավել հարաբերությունները Ռուսաստանի, թույլ չտվեց, որ պեսզի թուրքական զորքերը 1806 թվականի հոկտեմբերի 25-ին ափ դուրս գան Սուխումի նավահանգստում: Հատկանշական էր, որ նույն տարվա մայիսին Աբխազիայի իշխանը դիմել էր ռուսական իշխող վերնախավին, առաջարկելով Աբխազիան ընդգրկել Ռուսական կայսրության կազմում⁵¹: Սակայն ռուսական կողմի թերահավատությունը աբխազ իշխանի գործողություններին կատմամբ նպաստեցին նրան, որ փաստացիորեն Քելեշ-բեյը միայնակ մնաց Օսմանյան կայսրության դեմ: Վերջինիս Քելեշ-բեյի դեմ կազմակերպած մահափորձից հետո Աբխազիայում իշխանության եկավ Ասլան-բեյը, ում Օսմանյան կայսրության նկատմամբ ունեցած դրական վերաբերմունքը նպաստեց նրան, որ կարճ ժամանակով Աբխազիայում կրկին վերականգնվեց օսմաններին իշխանությունը: Սակայն արդեն 1810 թվականի հոկտեմբերին ռուսական զորքերին հաջողվում է գրավել Սուխումի բերդը և գահ բարձրացնել Ասլան-բեյի դավանափոխեղած եղբայր Գեորգիին⁵²: Վերջինիս իշխանության գալը հանգեցրեց նրան, որ Աբխազիայի կենտրոնական իշխանությունը սկսվեց գտնվել անմիջապես ռուսական ցարի ենթակայության տակ, սակայն միևնույն ժամանակ պետք է նշել, որ Ռուսաստանի կողմից նշանակված իշխաններին ազդեցությունը չէր տարածվում երկրի լեռնային և հյուսիսային

⁵¹ Նույն տեղում, ժող. 52

⁵² Տե՛ս Օ.Բաջբա, Ս.Լաօբա, «История Абхазии. С древнейших времен до наших дней», Сухум: 2007, ժող. 202-205

շրջանների վրա: Լեռնային Դալ, Յաբալ, Պսխո և Սադյան Աբխազիայի ծովափնյա շրջանները բնակչությանը հաջողվեց տևական ժամանակ դուրս մնալ Սոսխոմում տեղակայված իշխանի գերիշխանությունից: Չնայած նրան, որ 1812 թվականի մայիսի 16-ին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև կնքված խաղաղության պայմանագրով վերջինս ճանաչում էր ռուսական գերակայությունը Աբխազիայի նկատմամբ, օսմանները շարունակում էին սերտ կապեր պահպանել վերոնշյալ շրջանների իսլամադավան աբխազ բնակչության հետ: Սրանով է պայմանավորված, որ Աբխազիայի՝ Ռուսաստանին միանալուց հետո մինչև Կովկասյան պատերազմի ավարտը Աբխազիայում պարբերաբար գլուխ էին բարձրացնում հակառուսական ապստամբությունները: Ռուսական կայսրությանը շուրջ կես դար պահանջվեց, որպեսզի Օսմանյան կայսրության, Կովկասյան ցեղերի և տեղի մուսուլման բնակչության հետ բախումներից հետո կարողանա վերջնականապես իր ազդեցությունը հաստատի ողջ Աբխազիայի տարածքի վրա, վերջինս ընգրկելով կայսրության վարչական բաժանման միավորներում:

Պետք է արձանագրել, որ ռուսական իշխանավորների վարած նման քաղաքականությունը մեծամասամբ հանգեցրեց նրան, որ բնակչության զգալի մասը, որը հիմնականում դավանում էր իսլամ, բացասականորեն էր տրամադրված Ռուսաստանի նկատմամբ և վերջինիս այլընտրանք էր տեսնում Օսմանյան կայսրությանը, որի հետ առկա էին

կրոնական և մուսուլմանական մշակութային
կապեր: Պատահական չէ, որ նման
տրամադրությունները ազգաբնակչության
հանգեցրեցին հակառուսական
ապստամբությունների 1866 և 1877 թվականներին,
որոնք սակայն ճնշվեցին ռուսական բանակի
կողմից: Աբխազական համայնքը ժամանակակից
Թուրքիայի տարածքում սկսեց ձևավորվել XIX դարի
երկրորդ կեսից, երբ բավականին մեծ թվով
իսլամադավան հյուսիսկովկասյան
ժողովուրդների ներկայացուցիչները սկսեցին
գաղթել դեպի Օսմանյան կայսրություն:
Արտագաղթը ավելի զանգվածային բնույթ
ընդունեց, երբ Շեյխ Մանսուրի և Շեյխ Շամիլի
կողմից ղեկավարած ապստամբությունը ճնշվեց
ցարական զորքերի կողմից: Ցարական Ռուսաստանի
իշխանությունները հյուսիսկովկասյան
ժողովուրդներին նման ապստամբական
գործողությունները բացատրում էին Օսմանյան
կայսրության ունեցած ազդեցության հետ, ինչը
հանգեցրեց նրան, որ երկրամասի բնակչության
զգալի մասը կամ կամավոր արտագաղթեց, կամ
արտաքսվեց Օսմանյան կայսրություն: Այս
պատմական իրադարձությունը հետագայում ավելի
հայտնի դարձավ «Մոհաջիրական շարժում» անվան
տակ:

Չնայած նրան, որ գաղթականների մի զգալի
մասը մահացավ ճանապարհին, այնուամենայնիվ
նրանց մեծ մասին հաջողվել նավերով հասնել
Օսմանյան կայսրություն: Գաղթականներին
օսմանյան իշխանությունները մեծասամբ նոր
բնակավայրեր էին հատկացնում երկրի

կենտրոնական և արևելյան շրջաններում: Գաղթականների առաջին ալիքը (1864թ.) թուրքական իշխանությունների կողմից բնակեցվեցին Սամսուն-Յաթայ ճանապարհի երկայնքով: Ռուս-թուրքական պատերազմին (1877-78թթ.) հաջորդած գաղթականների երկրորդ ալիքը բնակեցվեց Սևծովյան կենտրոնական և արևմտյան շրջաններում⁵³: Այս կերպ օսմանյան իշխանությունները նաև ձգտում էին փոխել վերոնշյալ մեծասամաբ հայերով, ասորիներով և այլազգերի ներկայացուցիչներով բնակեցված շրջանների դեմոգրաֆիկ պատկերը: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ մտավորականությունը և հարուստ խավը բնակություն հաստատեց Ստամբուլում:

Յատկանշական է, որ ներգաղթյալը ստացան չերքեզները նդհանրական անունը, չնայած նրան, որ բաղկացած տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչներից (ադրդներ, աբխազներ, կարաչայներ, նոռայներ, կաբարդիներ և այլն): 1864-77 թվականներին Օսմանյան կայսրությունն արտագաղթած հյուսիսկովկասյան ժողովուրդներից ադրդներից հետո խոշորագույն համայնքը աբխազներինն էր (շուրջ 138.000): Վերջիններս նախնական շրջանում բնակություն հաստատեցին 150-160 գյուղերում⁵⁴: Ընդհանուր դավանանքը նպաստեցին նրան, որ մնացյալ հյուսիսկովկասյան ժողովուրդների նման աբխազական համայնքը նույնպես բավականին արագորեն ինտեգրվեց հասարակաքաղաքական

⁵³ Տե՛ս K. Karpat, "Ottoman Population 1830-1914", University of Wisconsin, Wisconsin, 1985, p. 65

⁵⁴ Տե՛ս Г. Дзидзария, "Махаджирство и проблемы истории Абхазии XIX столетия", издательство "Алашара", Сухум, 1982, Стр. 373

կյանքին : 1908 թվականին 1876 թվականի
 սահմանադրու թյան վերահաստատումը և Օսմանյան
 կայսրու թյունում մեկնարկած
 փոփոխու թյունները բավականին դրական
 արձագանք գտան չեքեզական համայնքում :
 Յյուսիսկովկասյան բնակչու թյան շրջանում
 նկատվող մեծածավալ արտագաղթը դեպի Օսմանյան
 կայսրու թյուն խոսում էր այն մասին , որ
 օսմանյան պետու թյունը Յյուսիսային Կովկասի
 իսլամադավան բնակչու թյան կողմից դիտարկվում
 էր որպես առանցքային դաշնակի և հովանավոր :
 Պատահական չէ , որ ցարական իշխանու թյունները
 տարածաշրջանի կայունու թյան ապահովման համար ,
 որպես հիմնական գործիք օգտագործում էին
 քրիստոնեու թյան տարածումը` փորձելով այս
 կերպ նվազեցնել իսլամական /թուրքական
 ազդեցու թյունը տարածաշրջանում : Օսմանյան
 կայսրու թյան հետ իրենց ունեցած կապերի
 պատճառով էր պայմանավորված , որ ընդհուկումինչև
 1907 թվականը արխագները համարվում էին «մեղավոր
 ազգ» , և միայն Նիկոլայ II-ի հրամանով նրանց վրայից
 հանվեց այս կարգավիճակը ⁵⁵ :

Չնայած նրան , որ ռուսական
 իշխանու թյունները հստակ քաղաքականու թյուն
 էին վարում ուղղված թուրքամետ
 տրամադրու թյունների վերացմանը , սակայն
 բնակչու թյան` հատկապես ազնվականու թյան
 շրջանում շարունակում էին զգալի թիվ կազմել
 մարդիկ , ովքեր ցարական իշխանու թյուններին
 այլ ընտրանք էին դիտարկում Օսմանյան

⁵⁵ Տե՛ս F. Mostashari, “Colonial Dilemmas: Russian Policies in the Muslim Caucasus”, “Religion and Empire: Missions, Conversion, and Tolerance in Tsarist Russia” (R. Geraci խմբ.), Cornell University Press, New York, 2001, pp. 229-249

կայսրութեանը: 1917 թվականին նոյեմբերի 8-ին իր աշխատանքներն է սկսում Աբխազների Ազգային ժողովը, որի առաքելութունը դառնում է աբխազ բնակչության ինքնորոշման իրավունքի իրագործումը: Նույն ամսում ձևավորվում է Լեռնային կամ Հյուսիսկովկասյան հանրապետության կառավարությունը: Նորաստեղծ հանրապետության կազմի մեջ էին մտնում Աբխազիան, Ադըղեանն, Օսիան, Դաղստանը, Կարաչաևո-Բալկարիան և Կաբարդան: Սակայն Աբխազիայում սկսված բոլշևիկյան ապստամբությունները էպետ դանդաղեցրեցին հանրապետության ձևավորումը: Միայն հաջորդ տարվա մայիսի 11-ին Օսմանյան կայսրության արդարադատության նախարար Հալիլբեյի գլխավորությամբ Բաթումում ընթացող հաշտության կոնֆերանսում հայտարարվեց Հյուսիսային Կովկասի Լեռնային Հանրապետության անկախության մասին, որը անմիջապես ճանաչվեց Օսմանյան կայսրության կողմից⁵⁶: Հատկանշական է, որ նոր հանրապետության կազմավորմամբ առաջին հերթին հետաքրքրված էին օսմանյան իշխանությունները, որոնք հնարավորության սահմաններում փորձում էին աջակցել աբխազներին և մյուս հյուսիսկովկասյան ժողովուրդներին: Օսմանյան կայսրության աջակցությամբ էր պայմանավորված, որ Լեռնային հանրապետության ներկայացուցիչները նաև մասնակցում էին Բաթումի հաշտության բանակցություններին: Օսմանների աջակցության մասին է խոսում նաև

⁵⁶ Տե՛ս Օ. Բաջբա, Ս. Լաօբա, «История Абхазии. С древнейших времен до наших дней», Сухум: 2007, стр. 277

փաստը, որ Բաթուլմի բանակցությունները ժամանած
աբխազական պատվիրական հետ սերտ
համագործակցում էին նաև օսմանյան բանակի
սպաներ Ջ. Մարշանիան, Մ. Մարգանիան, Ս. Բզանբան և
Յ. Բուտբան, ովքեր ներկայացնում էին Օսմանյան
կայսրությունն ձևավորված աբխազական
համայնքը⁵⁷:

Սակայն նորաստեղծ հանրապետությանը
չհաջողվեց երկար կյանք ունենալ: Արդեն նույն
տարվա հունիսին վրացական զինված ուժերը
գետերալ Գ. Մազնիաշվիլիի գլխավորությամբ
գրավում են Աբխազիան: Վրացական կողմի նման
գործողությունները դժգոհություններ են
առաջացնում աբխազ բնակչության շրջանում, իսկ
Աբխազների Ազգային Խորհուրդը օգնության
կանչով է դիմում Օսմանյան կայսրությունում
բնակվող աբխազական համայնքին: Արդյունքում Ջ.
Մարշանիայի գլխավորությամբ վրացական զինված
ուժերի դեմ պայքարելու համար Աբխազիա են
ժամանում կամավորական ջոկատներ: Վրացական
կողմին հաջողվում է բավականին արագ
պարտության մատնել աբխազական զինված
խմբավորումներին, ինչից հետո Աբխազական
Ազգային Խորհրդի անդամների զգալի մասը կամ
արտաքսվում է երկրից, կամ բանտարկվում է
վրացական բանտերում: Արդյունքում Աբխազիան
կրկին կորցրեց իր անկախությունը, իսկ արդեն 1919
թվականի մարտին վերաձևավորվեց ինքնավար
մարզի Վրաստանի Դեմոկրատական
հանրապետության կազմում⁵⁸: Աբխազիայի
կարգավիճակի հարցում նշանակալից

⁵⁷ Նույն տեղում

⁵⁸ Տե՛ս Т.Ачугба, “История Абхазии в датах”, Сухум, 2011, стр. 100-103

փոփոխություններ չնկատվեցին մինչև 1921 թվականի փետրվարը, երբ խորհրդայնացվեց Աբխազիան և Վրաստանը:

Կարելի է եզրակացնել, որ սկսած XV դարից Աբխազիան եղել է թուրքական պետության համար առաջնային ազդեցության գոտիներից մեկը: Կարևոր էր նկատել նաև այն փաստը, որ եթե պատմական այս ժամանակահատվածում թուրքական իշխանությունները Աբխազիայում իրենց ներկայությունը արդարացնում էին տեղի մուսուլման բնակչության անվտանգությունը ապահովելու պահանջով, ապա ներկայումս Թուրքիան Աբխազական հակամարտությունում իրեն դիրքավորում է, որպես չեզոք կողմ, սակայն իրականում իր ազդեցության տարածման համար օգտագործում է Աբխազական զգալի սփյուռքը: Նաև պետք է մատնանշել, որ Ցարական Ռուսաստանի վարած քաղաքականությունը հնարավորություն տվեց զգալի նվազեցնել թուրքական ազդեցությունը Աբխազիայում, իսկ բոլոր թուրքամետ տարրերին դուրս մղել երկրի տարածքից: Հակառակ դեպքում կարելի էր ենթադրել, որ Թուրքիայի ներգրավվածությունը Աբխազական հակամարտությունում կլիներ ներկայիս ծավալներից ավելի մեծ:

1.2 ԱԲԽԱԶԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ (1992-93 թթ. ԵՎ 2008 թ. ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ) ԵՎ ԹՈՒՐԹԻԱՆ

Ազգային հողի վրա ձևավորված գրեթե բոլոր հակամարտություններում կարևոր են պատմության տարբեր ժամանակաշրջաններում տեղ գտած զարգացումները: Հիմնականում

հակամարտող կողմերը առաջ քաշելով «պատմական արդարություն» հիմքերը փորձում են այդ կերպ արդարացնել իրենց պահանջները: Այս տրամաբանությունը շարժվելով անհրաժեշտ է պատկերացում կազմել 1980-ականներին նոր թափստացած վրաց-աբխազական հակամարտության և 1992-93թթ. վրաց-աբխազական պատերազմի պատճառներին, պատմական հիմքերին և Թուրքիայի ունեցած դիրքորոշման մասին:

«Մոհաջիրական շարժումը», ապստամբություններին ընթացքում կորցրած մարդկային կորուստները, այլազգի բնակչության թվի մեծացումը և ռուսական կառավարումը բավականին լուրջ ժողովրդագրական նշանակություն ունեցան երկրամասի համար՝ նպաստելով շրջանի աբխազական բնակչության համեմատական թվի նվազեցմանը: Այս իրողություն արտացոլումն է 1926 թվականին անցկացված մարդահամարը, որտեղ առաջին անգամ վրացախոս բնակչության թիվը (33.6%) գերազանցեց այն մարդկանց թվին, ովքեր իրենց մայրենի լեզուն համարում էին աբխազերենը (27.3%)⁵⁹: Փաստացիորեն ժողովրդագրական նմանօրինակ տեղաշարժերը դարձան Աբխազիայում բնակվող աբխազների և վրացիների միջև երկրամասի պատկանելիության շուրջ առաջացած հակամարտության հիմնապատճառներից մեկը:

Հակամարտության ձևավորման համատեքստում կարևոր փոփոխություններ առաջ եկան 1917 թվականին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխություններից հետո: 1918 թվականին

⁵⁹ Աբխազիայի ժողովրդագրական տեղաշարժերի մասին ավելի մանրամասն տե՛ս «Всесоюзная перепись населения 1926 года», том 14, Москва, 1929

ն եր կ այ ի ս Յ ա յ ա ս տ ա ն ի , Վ ր ա ս տ ա ն ի և Ա դ ր բ ե ջ ա ն ի
հ ա ն ր ա պ ե տ ու լ թ յ ու լ ն ն եր ի տ ա ր ա ծ ք ու մ ձ և ա վ ո թ վ ե ց
Ա ն դ ր կ ո վ կ ա ս յ ա ն Դ ե մ ո կ ր ա տ ա կ ա ն Ֆ ե դ ե ր ա տ ի վ
Յ ա ն ր ա պ ե տ ու լ թ յ ու լ ն ը (Ա Դ Ֆ Յ) : Ս ա կ ա յ ն պ ե տ ա կ ա ն ա յ ս
մ ի ա վ ո թ ու մ ը ու լ ն ե ց ա վ շ ա տ կ ա ր ճ կ յ ա ն ք և մ ա յ ի ս ի 26-
ի ն վ ր ա ց ա կ ա ն կ ո ղ մ ը ա ն կ ա խ ու լ թ յ ու լ ն հ ա յ տ ա ր ա ր ե ց `
կ ա զ մ ա վ ո թ ե լ ո վ Վ ր ա ս տ ա ն ի Դ ե մ ո կ ր ա տ ա կ ա ն
Յ ա ն ր ա պ ե տ ու լ թ յ ու լ ն ը (Վ Դ Յ) : Ա բ խ ա զ ի ա յ ու մ ` ի
տ ա ր բ ե թ ու լ թ յ ու լ ն Վ ր ա ս տ ա ն ի , ո թ տ ե ղ ի շ խ ա ն ու լ թ յ ա ն
ե կ ա ն մ ե ն շ և ի կ ն եր ը , Ա բ խ ա զ ի ա յ ու մ զ գ ա լ ի
ա զ դ ե ց ու լ թ յ ու լ ն ձ ե ո ք բ ե թ ե ց ի ն բ ո լ շ և ի կ ն եր ը
Ն ե ս թ ո թ Լ ա կ ո բ ա յ ի գ լ խ ա վ ո թ ու լ թ յ ա մ բ :
Բ ո լ շ և ի կ ն եր ը , ո թ ո ն ց մ ե ծ ա մ ա ս ն ու լ թ յ ու լ ն ը
ա բ խ ա զ ն եր է ի ն , 1918 թ վ ա կ ա ն ի ն ձ և ա վ ո թ ե ց ի ն
ա բ խ ա զ ա կ ա ն ի ն ք ն ա պ ա շ տ պ ա ն ա կ ա ն ջ ո կ ա տ ն եր ը `
կ ի ա ր ա զ ն եր և ա պ ս տ ա մ բ ու լ թ յ ու լ ն բ ա ր ձ ր ա ց թ ե ց ի ն
Վ ր ա ս տ ա ն ի ս ո ց ի ա լ -դ ե մ ո կ ր ա տ ա կ ա ն
կ ա ո ա վ ա ր ու լ թ յ ա ն դ ե մ ի ն ք ն ա վ ա ր ու լ թ յ ա ն
պ ա հ ա ն ջ ո վ ⁶⁰: Կ ա ր ճ ժ ա մ ա ն ա կ ա ն ց պ ա շ տ ո ն ա կ ա ն
Թ բ ի լ ի ս ի ն Վ ր ա ս տ ա ն ի Դ ե մ ո կ ր ա տ ա կ ա ն
Յ ա ն ր ա պ ե տ ու լ թ յ ա ն կ ա զ մ ու մ Ա բ խ ա զ ի ա յ ի ն շ ն ո թ հ ե ց
ի ն ք ն ա վ ա ր ու լ թ յ ու լ ն , ի ս կ ա պ ս տ ա մ բ ու լ թ յ ա ն բ ո լ շ և ի կ
ա ո ա ջ ն ո թ դ ն եր ի ն ա ր տ ա ք ս ե ց եր կ թ ի ց : Ու շ ա գ ր ա վ է
ո թ չ ն ա յ ա ծ Ա բ խ ա զ ի ա յ ի ն շ ն ո թ հ վ ե ց
ի ն ք ն ա վ ա ր ու լ թ յ ու լ ն , ս ա կ ա յ ն վ եր ջ ի ն ի ս
կ ա ր գ ա վ ի ճ ա կ ը վ եր ջ ն ա կ ա ն ա պ ե ս չ հ ս տ ա կ ե ց վ ե ց ⁶¹:

1921 թ վ ա կ ա ն ի ն խ ո թ հ թ դ ա յ ի ն Կ ա ր մ ի թ բ ա ն ա կ ի
Վ ր ա ս տ ա ն ն եր խ ու ժ ե լ ու ց և Ս ու խ ու մ ը գ ր ա վ ե լ ու ց
հ ե տ ո Ս . Օ թ ջ ո ն ի կ ի ձ ե ի ն ա խ ա ձ ե ո ն ու լ թ յ ա մ բ մ ա ր տ ի 31-

⁶⁰Տ ե ` ս Գ. Дзидзария, “Роль Советов и «Киараза» в истории революционной борьбы в Абхазии 1917-1921 гг.”, издательство “Алашара”, Сухум, 1971

⁶¹Տ ե ` ս С. Welt, “A Fateful Moment: Ethnic Autonomy and Revolutionary violence in the Democratic Republic of Georgia (1918–1921)”, Jones Stephen F., “The Making of Modern Georgia, 1918 – 2012: The first Georgian Republic and its successors”, New York City, 2012, pp. 214-215

ի ն հռչակվում է Աբխազիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ստեղծումը: Նույն տարվա դեկտեմբերի 16-ին վրացական և աբխազական կողմերի միջև կնքված պայմանագրով դաշնության հիմունքներով Աբխազիայի ԽՍՀ-ն միանում է Վրաստանի ԽՍՀ-ին⁶²: Հատկանշական է, որ հենց այս կարգավիճակն է ամրագրված 1925 թվականին ընդունված աբխազական սահմանադրությունում, որի վերականգման պահանջը դարձավ վրաց-աբխազական պատերազմի դրդապատճառներից մեկը⁶³: Սակայն 1931 թվականին Աբխազիայի ԽՍՀ-ի կարգավիճակը իջեցվում և վերափոխվում է ինքնավար հանրապետության: Այս որոշմանը անմիջապես հաջորդում են զանգվածային ցույցերը, որոնք հետագայում կրկնվում են 1957, 1967, 1978 և 1989 թվականներին⁶⁴: Կարելի է արձանագրել, որ 1917-21թթ. սեղի ունեցած այս զարգացումները նպաստեցին նրան, որ աբխազ բնակչության շրջանում կրկին լայն արձագանք գտավ ազգային պետություն և նենալու գաղափարը: Հենց այդ պատմական իրադարձությունների տրամանաբանական շարունակությունն է 1992 թվականին աբխազական կախ պետության ձևավորումը համապատասխան ազգային ինքնագիտակցությամբ:

ԽՍՀՄ գոյության գրեթե ողջ ընթացքում աբխազական կողմը շարունակում էր պայքարել հանրապետության կարգավիճակի վերականգման համար, ինչի մասին են վկայում այդ տարիների ընթացքում կայացած բազմաթիվ ցույցերը:

⁶² Տե՛ս В. Чирикба "Документы по политической истории Абхазии", Сухум, 2015, стр. 51-52

⁶³ Նույն ստեղծում, стр. 33

⁶⁴ Տե՛ս S. Lakoba, "Abkhazia is Abkhazia", Central Asian Survey, № 14 (1), 1995, p. 97-105

Աբխազներին՝ Վրաստանից անկախ հանրապետություն ունենալու ձգտումը նոր թափ առավ Մ. Գարբաշևի իշխանություն գալուց հետո: Վերջինիս որդեգրած «վերակառուցման քաղաքականությունը» բնակչության շրջանում կրկին հույս արթնացրեց վերադառնալու 1921 թվականի պայմանագրով նախատեսված կարգավիճակին: Դրանով էր պայմանավորված, որ 1989 թվականի մարտի 18-ին Լիխնոգյուղում կայացված շուրջ 30000 հոգուց բաղկացած հավաք, որի ընթացքում ընդունվեց «Լիխնոյի հռչակագիրը», որով հավաքի մասնակիցները պահանջում էին վերականգնել 1925 թվականի աբխազական սահմանադրությունը և Աբխազիային շնորհել ինքնիշխան հանրապետության կարգավիճակ⁶⁵: Սակայն այս հռչակագիրը բավականին սուր ընդունվեց շրջանի վրացական բնակչության շրջանում՝ առավել և արելով երկու էթնիկ խմբերի միջև հարաբերությունները: Առաջին զինված բխումները տեղի ունեցան նույն տարվա հուլիսամսին Սուխումում, երբ վրացական իշխանությունները որոշում կայացրեցին Սուխումի պետական համալսարանը վերակազմավորել Թբիլիսիի պետական համալսարանի մասնաճյուղի: Յամալսարանի վերակազմավորման դեմ ցույցերը վերաճեցին վրացական դպրոցի վրա կատարված հարձակման և ազգամիջյան փոդոցային բխումների: Ըստ պաշտոնական տվյալների, այս բխումների ընթացքում գրանցվեց 18 զոհ և 448 վիրավոր,

⁶⁵ Տե՛ս Al. Zverev, “Ethnic Conflicts in the Caucasus 1988-1994”, B. Coppieters (խմբ.) “Contested Borders in the Caucasus”, Brussels, 1996, p. 40

որոնցից 302-ը վրացիներ էին⁶⁶: Չնայած նրան, որ արբիազական բնակչուն թյանց ույցերը պարբերաբար կրկնվում էին նաև նախորդ տարիների ընթացքում, Սուխումի անկարգությունները առաջինն էին, երբց ույցը ստացավ հստակ ազգամիջյան բախման երանգահան գեցրեց գոհերի և վիրավորների մասնակից 2 կողմերի շրջանում: Արբիայում տեղի ունեցած դեպքերը հանգեցրեցին նրան, որ զանգվածայինց ույցեր սկսվեցին նաև Թբիլիսիում: Ապրիլի 4-ին 2. Գամսախուրդիան իր կողմնակիցների հետանժամկետց ույցեր են սկսում Թբիլիսիում, որի ժամանակց ուցարարները պահանջում էին պատժել «Լիխնոյի հռչակագրի» հեղինակներին: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընգծել, որց ույցերի ընթացքում հաճախակիացան ազգայնական բնույթի հայտարարությունները: Երկրում հակաարբիազական տրամադրությունները հատկապես սրվեցին, երբ Վրաստանում իշխանություն եկավ ազգայնական թևի ներկայացուցիչ 2. Գամսախուրդիան⁶⁷: Վերջինիս կառավարման տարիներին Վրաստանում նոր թափստացած ազգայնականությունը նպաստեց նրան, որ արբիազները ստեղծված պայմաններում միակելքը տեսնում էին անկախ պետություն և ստեղծելումեջ: Վրաստանի անկախության հռչակումից հետո մինչև 2. Գամսախուրդիայի իշխանություն տապալումը վրացական կողմի որդեգրած քաղաքականությունը նախատեսում էր ունիթոր պետության ստեղծում, որտեղ իշխանությունը պետք է կենտրոնացած լինի վրացիների ձեռքերում: Նման մոտեցումները

⁶⁶ Սուխումի բախումների մասին ավելի մանրամասն տե՛ս S. Kaufman, *Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War*, Cornell University Press, New York, 2001, pp 104-106
⁶⁷ Տե՛ս Г. Лежава, «Политическая ситуация в Грузинской ССР и абхазский вопрос (1987-1992 гг.)», Сухум, 1993

հանգեցրեցին բազմաթիվ ցույցերի Աբխազիայում, Յարավային Օսիայում և Վրաստանի այլ շրջաններում:

Միևնույն ժամանակ երկրում հաստատվեց հարաբերական խաղաղություն, որովհետև կողմերը չունեին բավականաչափ միջոցներ միմյանց դեմ զինված պայքար սկսելու համար, իսկ պաշտոնական Մոսկվան խնդրի լուծումը թողեց Թբիլիսիին: Վրաց-աբխազական հարաբերությունների այս փուլը ստացավ «օրենքների պատերազմ» անվանումը, որովհետև կողմերը երկար ժամանակ փորձում էին գտնել ստեղծված իրավիճակից դուրս գալու իրավական կարգավորումները: Երկու կողմերի հարաբերությունների կարգավորմանը չնպաստեց նաև 1991 թվականին կայացած Աբխազիայի Գերագույն խորհրդի ընտրությունները: Նորընտիր օրենսդիր մարմնում պատգամավորական 64 մանդատներից 28-ը բաժին հասան աբխազներին (բնակչության 17.8%), վրացական կողմը (45.7%) ստացավ 26 մանդատ, իսկ մնացած 11 մանդատները բաժանվեցին Աբխազիայում բնակվող այլ ազգությունների միջև (33%)⁶⁸: Փաստացիորեն նորընտիր խորհրդարանում աբխազները՝ բնակչության թվով գրեթե 2 անգամ զիջելով վրացիներին, ստացան խորհրդարանական մեծամասնությունը: Ակնհայտ է, որ այս փաստը բացասական արձագանք ստացավ վրացական բնակչության շրջանում, իսկ ընտրված վրացի պատգամավորները մայիս ամսից սկսեցին բոյկոտել խորհրդարանի նիստերը:

Յուլի 23-ին Աբխազիայի Գերագույն խորհուրդը առանց վրացի պատգամավորների

⁶⁸ Տե՛ս C. Zürcher, “Georgia’s Time of Troubles, 1989-1993”, Bruno Coppieters & Robert Legvold (Ed.) “Statehood and Security: Georgia after the Rose Revolution”, London, 2005, p. 95

մասնակցությունը նդունեց հռչակագիր, որով երկիրը վերադառնում էր 1925 թվականի սահմանադրությունը և «հռչակվում էր ինքնիշխան հանրապետություն ԽՍՀՄ կազմում»⁶⁹: Չնայած նրան, որ 1925թ. սահմանադրությամբ սահմանվում էր, որ Աբխազիան և Վրաստանը դաշնային հիմունքներով կազմում էին միասնական պետություն, սակայն դե ֆակտո աբխազական կողմը այս որոշմամբ սկսում էր Վրաստանից անկախանալու գործընթացը: Վրացական կողմի արձագանքը երկար սպասեցնել չտվեց: Է. Շևարդնաձեի գլխավորությամբ Վրաստանի իշխանությունները՝ օգտագործելով Գամսախուրդիայի համակիրներին կողմից օգոստոսի 11-ին վրացի բարձրաստիճան պաշտոնյաների գերեվարման փաստը և նրանց Աբխազիա տեղափոխելու մասին լուրերը, գերիներին ազատելու և երկաթուղու անվտանգության պահպանության պատրվակով օգոստոսի 14-ին Աբխազիա են ուղարկում ոստիկանություն և Ազգային գվարդիայի ջոկատները⁷⁰: Արձիսբայի գլխավորած աբխազական կառավարությունը ստիպված Սուխումից տեղափոխվում է Գուդաուտա: Կարճ ժամանակում վրացական զինված ուժերին հաջողվում է իրենց վերահսկողության տակ վերցնել Սուխումը, Գագրան և Աբխազիայի գգալի մասը: Նույն տարվա սեպտեմբերի 3-ին Մոսկվայում կայանում է Բ. Ելցինի, Վ. Արձիսբայի և Է. Շևարդնաձեի

⁶⁹ Ավելի մանրամասն տե՛ս Աբխազիայի Գերագույն խորհրդի Վրաստանի Հանրապետության քաղխորհրդին ուղղված ուղերձում, Սուխում, 1992 (<https://goo.gl/vux7y1>)

⁷⁰ Տե՛ս «Human Rights Watch. Georgia/Abkhazia: Violations Of The Laws Of War And Russia's Role In The Conflict», Vol. 7/7, 1995 (<https://goo.gl/47zM8R>)

հանդիպումը, որի արդյունքում Ռուսաստանի միջնորդությունը և երաշխավորությունը գիտնականադարեկներում շնորհի միջև: Սակայն եթե վրացական կողմը՝ հետևելով գիտնականադարի պահանջներին, շփման գծից դուրս բերեց իր ծանր տեսնական և խմբավորումների մի մասը, ապա արխագները այս ժամանակահատվածը օգտագործեցին իրենց ուժերը վերակազմավորելու, սփյուռքից և Յունաստանի Կովկասի այլ ժողովուրդներին օգնություն ստանալու համար: Յուրեղմբերին արխագական գիտնականները անցնում են հակահարձակման և գրավում են Գագրան: Վերականգնելով իրենց վերահսկողությունը ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող այս շրջանի նկատմամբ արխագական կողմը սկսում է նախապատրաստվել Սուխումի ազատագրմանը: 1992 թ. աշնանից մինչև 1993 թվականի ամառը ռազմական գործողություններում զգալի տեղաշարժեր տեղի չեն ունենում: Արխագական գործերի վերջին հարձակումը տեղի է ունենում սեպտեմբերի 17-30-ը նկատ հատվածում, որի ժամանակ արխագական գիտնական խմբավորումներին հաջողվում է ազատագրել Սուխումը (սեպտեմբերի 27) և հասնել մինչև վրաց-արխագական սահմանով անցնող Ինգուր գետին (սեպտեմբերի 30): 1994 թ. մայիսի 14-ին Մոսկվայում Արխագիայի և Վրաստանի ներկայացուցիչները ստորագրում են գիտնականադարի հաստատման մասին համաձայնագիր⁷¹: Պատերազմի արդյունքում

⁷¹ 1992-93 թթ. վրաց-արխագական պատերազմի մասին ավելի մանրամասն տե՛ս «Абхазия 1992—1993 годы: Хроника Отечественной Войны», Москва, 1995

Թբիլիսիսի կոնցրետի ազդեցությունը Աբխազիայում, որտեղ ձևավորվեց դեֆակտո անկախ պետական միավոր: Սակայն պատերազմի հաջորդող տարիներին ընթացքում Աբխազիան ստիպված էր գոյատևել ծանր տնտեսական պայմաններում՝ գտնվելով շրջափակման մեջ թե՛ Վրաստանի, թե՛ Ռուսաստանի կողմից: Պատերազմը դարձավ նաև հետխորհրդային տարածքում տեղի ունեցած ամենաարյունոտ հակամարտություններից մեկը, որը խլեց շուրջ 18000 մարդու կյանք: Դրան գուցա հենց աբխազական զինված ուժերի հաղթանակից հետո շուրջ 250.000 վրացիներ ստիպված էին արտագաղթել Վրաստան: Չինված բախումների հետևանքով կողմերը կրեցին շուրջ 10.7 միլիարդ դոլարի կորուստ⁷²:

«Երկաթե վարագույրի» վերացումից հետո Թուրքիան 1921 թվականից հետո առաջին անգամ 1980-ականների երկրորդ կեսին կրկին հնարավորություն ստացավ հարաբերությունների հաստատել Յարավային Կովկասի երկրների հետ: Պատահական չէ, որ Թուրքիան, ունենալով պատմականորեն ձևավորված հարաբերություններ տարածաշրջանի երկրների հետ և լինելով Այսրկովկասի հետ ընդհանուր սահման ունեցող Յուլսիսատլանտյան դաշինքի միակ երկիրը, չէր կարող անմասն մնալ տարածաշրջանում ընթացող գործընթացներից: Արդեն 1990-ականներին Անկարայի տարածաշրջանային քաղաքականության օրակարգում առանցքային դեր ստացավ Աբխազական հակամարտությունը: Անհրաժեշտություն առաջացավ ուրվագծել հարաբերությունները

⁷² Տե՛ս «Human Rights Watch. Georgia/Abkhazia: Violations Of The Laws Of War And Russia's Role In The Conflict», Vol. 7/7, 1995 (<https://goo.gl/47zM8R>)

հակամարտության մասնակից 2 կողմերի՝ Վրաստանի և Աբխազիայի հետ, ինչպես նաև մշակել հստակ մոտեցում այս խնդրի լուծման հարցում: Նման անհրաժեշտությանը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով, որոնցից կարելի է մատնանշել Աբխազիայում և Վրաստանում ռուսական ազդեցությանը հակակշիռ ստեղծելու անհրաժեշտությանը, Վրաստանի կարևորությանը տարածաշրջանային էներգետիկ ծրագրերում, ինչպես նաև Թուրքիայում բնակվող մեծաթիվ աբխազական համայնքը և աբխազական համայնքների գործունեությունը: Այս փաստով կարելի է բացատրել թուրքական պետության և այնտեղ հաստատված աբխազական համայնքի ներգրավվածությունը հակամարտությանում:

Արդեն 1992 թվականին, երբ թե՛ Աբխազիայի, թե՛ Վրաստանի իշխանությունները արդեն կանխատեսում էին հնարավոր զինված բախումները, Անկարան սկսվեց դիտարկվել որպես հնարավոր դաշնակից երկու կողմերի համար: Հատկապես նման մոտեցումները գերիշխում էին Աբխազիայում, որտեղ մեծ հոլյսեր էին կապում Թուրքիայի տարածքում բնակվող աբխազական համայնքի հետ: 1925 թվականի սահմանադրությանը վերադառնալու աբխազական Գերագույն խորհրդի հոլիսի 23-ի որոշումից անմիջապես հետո Վ.Արծինբան և աբխազայլ բարձրաստիճան պաշտոնյաններ հոլիսի 24-31 այցով մեկնում են Թուրքիա, հանդիպումներ ունենալով Ստամբուլում, Անկարայում և այլ քաղաքներում⁷³: Մեկնաբանելով իր այցը Թուրքիա,

⁷³Պատվիրակության մաս էին կազմում Էկոնոմոկիայի և սոցիալական ապահովության հարցերով հանձնաժողովի նախագահ

Վ. Արզիսբան հիշեցրել է, որ այդ երկրում ապրում է ավելի քան 400.000-անոց աբխազական համայնք⁷⁴: Աբխազիայի առաջնորդի այցելությունը մեծ ոգևորություն առաջացրեց աբխազների շրջանում, ովքեր երթեր ու ցույցեր էին կազմակերպում երկրի տարբեր քաղաքներում: Միևնույն ժամանակ Վ. Արզիսբայի այս այցը բավականին սուր քննադատություն առժանացավ Մոսկվայի և Թբիլիսիի կողմից, որոնք չէին ակնկալում նման ընդունելություն համայնքի կողմից⁷⁵:

Այցի շրջանակներում աբխազական պատվիրակությանը չհաջողվեց պաշտոնական հանդիպումներ ունենալ թուրքական իշխանությունների հետ: Թուրքական իշխանությունները հնարավորինս խուսափում էին Վրաստանի կամ Ռուսաստանի հետ հարաբերություններին սրացումից: Թուրքական կողմի նման մոտեցման արդյունքում Վ. Արզիսբանի ր այցի ընթացքում սահմանափակվեց Թուրքիայում գործող չերքեզական և աբխազական հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումներով: Սակայն պետք է արձանագրել, որ աբխազական պատվիրակության այցը, ինչպես նաև աբխազական և չերքեզական համայնքների կողմից իրականացված երթերը և ցույցերը էապես նպաստեցին Թուրքիայում Աբխազիայում տեղի ունեցող իրադարձությունների հանրային հնչեղություն մեծացմանը: Դրամասին է խոսում

Վ. Օզգանը, «Եկերգե տիկայի և տրանսպորտի նախարար Գ. Դոպուլա, Մշակույթի և կրթության նախարար Ն. Չանբան

⁷⁴Տե՛ս S. Chervonnaya, “Conflict in the Caucasus: Georgia, Abkhazia, and the Russian Shadow”, Gothic Image, Somerset, 1994, p. 113

⁷⁵Տե՛ս С. Лакоба, “Абхазия – де-факто или Грузия де-юре?: о политике России в Абхазии в постсоветский период, 1991-2000 гг.”, “Slavic Research Center in Hokkaido University”, Саппоро, 2001, стр. 27

այն, որ Աբխազիայում պատերազմի սկսվելուց հետո օգոստոսի 26-ին թուրքական «Դեմոկրատական աջ կուսակցության» (թուրք. «Demokratik Sol Parti») նախագահող Բ. Էջեվիթը հանդես եկավ թուրքական կառավարության խիստ քննադատությամբ, կարծիք հայտնելով, որ ռազմական գործողությունները Աբխազիայում հնարավոր կլինե՞ր կանխել, եթե Վ. Արձիսբայի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական ընդունելության արժանանար Թուրքիայում⁷⁶:

Վրաց-աբխազական պատերազմի տարիներին թուրքական իշխանությունները մեծապես հանդես էին գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության դիրքերից, հաճախակի են նաև երկկողմ դիվանագիտական այցելությունները, ինչպես նաև համագործակցությունը տարբեր միջազգային կազմակերպություններում: Սակայն չի կարելի վստահորեն նշել, որ Անկարան վարում էր միակողմանի վրացամետ քաղաքականություն Աբխազական հակամարտության հարցում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրքական իշխանությունները երբեմն նաև հանդես էին գալիս վրացական կողմի գործողությունների քննադատությամբ: Թուրքական իշխանություններն ման քաղաքականությունը պատճառներից մեկը երկրում բնակվող և վրաց-աբխազական գիևված բախումների տարիներին բավականին ակտիվ գործունեություն ծավալող չերքեզական և աբխազական համայնքներն էին: Վրաստանի օգտին ուղղված միակողմանի քաղաքականությունը

⁷⁶ Տե՛ս ՝ u Журнал «Абаз», № 1, 1995, стр. 20

Թուրքիայի համար վտանգ էր ներկայացնում ներքաղաքական իրավիճակի և արված թյուրևեմը և Թուրքիայի քաղաքացի հանդիսացող չեքեզներին աբխազների շրջանում դժգոլ թյուրևեմի բարձրացումը: Դրան գուցա հենթուրքական կողմը նաև չէր կարող թույլ տալ, որպեսզի Աբխազիայում ռուսական ազդեցությունը չունենար հակազիռի դեմս Թուրքիայի: Ըստ աբխազական աղբյուրների, Անկարայի տարբերակված քաղաքականության արտացոլումներինց էր սեպտեմբերի 1-ին Թուրքիայի նախագահ Թ. Օզալի ելույթը երկրի խորհրդարանում, որի ժամանակ վերջինս մտահոգություն է հայտնում Աբխազիայում վրացական ուժերի գործողությունների վերաբերյալ՝ վրացական կառավարությանը անվանելով «գինված հանցավոր խմբավորում»: Իր հերթին թուրքական խորհրդարանի անդամները երկրի վարչապետ Ս. Դեմիրելին մեղադրանքներ ներկայացրեցին Վրաստանի նախագահ Էդ. Շևարդնաձեի հետ հանցավոր համաձայնության գալու համար⁷⁷⁸: Սակայն այս հայտարարություններին հաջորդեցին Ռուսաստանում և Վրաստանում գտնվող թուրք դիվանագետների հայտարարությունները վերոնշյալ ելույթների հերքմամբ: Նույնամսվա ընթացքում թուրքական խորհրդարանում տեղի ունեցան ևս մեկ նվիրված վրաց-աբխազական

⁷⁷ Գտնվող անշակալները, որ վերոնշյալ տեղեկությունները ներկայացված են միայն աբխազական աղբյուրներում, իսկ թուրքական խորհրդարանի նիստերի արձանագրություններում բացակայում է նման քննարկումների մասին տեղեկությունները: Ավելի մանրամասն տե՛ս Թուրքիայի խորհրդարանի պաշտոնական կայքում հրատարակված նիստի արձանագրությունում (<https://goo.gl/zJvMZ1>)

⁷⁸ Տե՛ս С. Лакоба, “Абхазия – де-факто или Грузия де-юре?: о политике России в Абхазии в постсоветский период, 1991-2000 гг.”, “Slavic Research Center in Hokkaido University”, Саппоро, 2001, стр. 27

խնդրին, որի արդյունքում պատգամավորները հանդես եկան Աբխազիա խորհրդարանական հանձնաժողովում ղարկելու առաջարկությամբ, որը պետք է տեղում ծանոթանար իրավիճակին⁷⁹: Թուրքիայի քաղաքականությամբ Աբխազական հակամարտության հարցում բնորոշում է վերոնշյալ նիստի ժամանակ Թուրքիայի վարչապետի տեղակալը Է. Ինոնյուի հայտարարությամբ, որ «Թուրքիան չպետք է վանի կամ նեղացնի Վրաստանին, սակայն Աբխազիայի խնդիրը անհրաժեշտ է լուծել խաղաղ ճանապարհով»: Քաղաքականության այս տեսլականը նաև նկատվում է Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի 2005-ին համար արված հայտարարությամբ, որում նշվում է, որ «թուրքական կողմը բազմիցս փորձել է կանխել արյունահեղությամբ Աբխազիայում, սակայն այդ փորձերը հաջողությամբ չեն լինել»⁸⁰:

Թուրքական իշխանությունների հայտարարությամբ և գործողություններով մեծամասամբ պայմանավորված էին նաև երկրում գործող աբխազական և չեքեզական կազմակերպությունների գործունեությամբ: Վ. Արձիսբայի հոլդինգայն այցելությունները մեծ նշանակություն էին առաջ բերել աբխազական սփյուռքում: Արդեն օգոստոսին Աբխազիայում սկսված ռազմական գործողությունները լայն արձագանք գտան թուրքաբնակ աբխազական համայնքում: Պատերազմի առաջին օրերից երկրում սկսեց գործել «Կովկասյան Աբխազիայի

⁷⁹ Տե՛ս Թուրքիայի խորհրդարանի պաշտոնական կայքում հրապարակված 15.09.1992-ին կայացած նիստի արձանագրությունը (<https://goo.gl/pZRZoA>)

⁸⁰ Տե՛ս Журнал «Абаз», № 1, 1995, стр. 22

ս ո լ ի դ ար ու թ յ ան հ ան ձ ն ա ժ ո ղ ո վ ը » (Kafkas Abhazya Dayanışma Komitesi)⁸¹: Արդեն օգոստոսի 18-ին թուրքական Ադափազար քաղաքում տեղի ունեցավ բազմահազարանոց ցույցի պաշտպանությունը Աբխազիայի: Օգոստոսի 19-ին և 21-ին աբխազական մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչները հանդիպումներ ունեցած Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի հետ, ով խոստացավ բանակցել Վրաստանի նախագահ Էդ. Շևարդնաձեի հետ ռազմական գործողությունները դադարեցնելու համար: Օգոստոսի 23-ին բազմահազարանոց բողոքի ցույցեր տեղի ունեցած Անկարայում և Ադափազարում: Տուցարարները վրացական իշխանություններից պահանջում էին գործեր անհապաղ դուրս բերում Աբխազիայից և հակամարտության խաղաղ կարգավորում: Օգոստոսի 24-ին աբխազական և չերքեզական կազմակերպությունների ներկայացուցիչները հանդիպում ունեցած Թուրքիայի նախագահ Թ. Օզալի հետ, որի ժամանակ քննարկվեց հակամարտության հետևանքով Թուրքիային սպասվող հնարավոր վտանգները: Համայնքի ներկայացուցիչները նաև սկսեցին անցկացնել խորհրդարանական լուումներ և մամլո ասուլիսներ նվիրված Աբխազիայում տեղի ունեցող դեպքերին ⁸²: Թուրքիայում գործող կազմակերպությունները օգտագործում էին

⁸¹ «Կովկասյան Աբխազիայի սոլիդարության հանձնաժողովը»-ը ստեղծվել էր 1992 թվականի օգոստոսին՝ նպատակ ունենալով միավորել Թուրքիայում բնակվող աբխազական բնակչությանը Աբխազիայի հետ կապերը ամրապնդելու և անկախությանը նպաստելու համար: Կազմակերպության գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս կազմակերպության պաշտոնական կայքում (<http://abhazya.org/wp/>)

⁸² Տե՛ս Журнал «Абаз», № 1, 1995, стр. 20

ի ր Ե ն ց բ ո լ ն ր հ ն ա ր ա վ ո ր կ ա պ Ե ր ը և մ ի ջ ո ց ն Ե ր ը Ա ք խ ա զ ի ա յ ի ն օ գ ն Ե լ ո ւ հ ա մ ա ր : Ն ր ա ն ց մ ի ջ ո ց ն Ե ր ո վ Թ ո ւ ր ք ի ա յ ո ւ մ հ ա վ ա ք ո ւ մ Է ր մ ա ր դ ա ս ի ր ա կ ա ն օ գ ն ո ւ թ յ ո ւ ն , ո ր ը հ Ե տ ա զ ա յ ո ւ մ պ Ե տ ք Է տ Ե ղ ա փ ո խ վ Ե ր Ա ք խ ա զ ի ա ⁸³: Ա ք խ ա զ ա կ ա ն հ ա մ ա յ ն ք ի ձ Ե ռ ն ա ր կ ա ծ ա յ ս ք ա յ լ Ե ր ը ն պ ա ս տ ո ւ մ Է ի ն ն ր ա ն , ո ր Ե ր կ ր ո ւ մ վ Ե ր ա ն ո ւ մ Է ր ս տ Ե ղ ծ վ ա ծ տ Ե ղ Ե կ ա տ վ ա կ ա ն վ ա կ ո ւ ո ւ մ ը Ա ք խ ա զ ի ա յ ո ւ մ կ ա տ ա ր վ ո ղ ի ր ա դ ա ր ձ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի վ Ե ր ա ք Ե ր յ ա լ , ի ս կ թ ո ւ ր ք ա կ ա ն ի շ խ ա ն ա կ ա ն տ ա ր ք Ե ր օ ղ ա կ ն Ե ր ո ւ մ պ ա ր ք Ե ր ա ք ա ր ք ն ն ա ր կ վ ո ւ մ Է ր Ա ք խ ա զ ա կ ա ն հ ա կ ա մ ա ր տ ո ւ թ յ ա ն լ ո ւ ծ մ ա ն հ ն ա ր ա վ ո ր տ ա ր ք Ե ր ա կ ն Ե ր ը : Յ ա տ կ ա ն շ ա կ ա ն Է , ո ր ա ք խ ա զ ա կ ա ն հ ա մ ա յ ն ք ի հ Ե տ զ ո ւ զ ա հ Ե ռ ք ա վ ա կ ա ն ի ն ա կ տ ի վ Է ի ն գ ո ր ծ ո ւ մ ն ա ն Թ ո ւ ր ք ի ա յ ո ւ մ Կ ո վ կ ա ս յ ա ն մ յ ո ւ ս ժ ո ղ ո վ ո ւ ր դ ն Ե ր ի հ ա մ ա յ ն ք ն Ե ր ը : Տ Ե ղ Ե կ ա տ վ ա կ ա ն և ն յ ո ւ թ ա կ ա ն օ գ ն ո ւ թ յ ա ն ը զ ո ւ զ ա հ Ե ռ ա ք խ ա զ ա կ ա ն հ ա մ ա յ ն ք ի ն Ե ր կ ա յ ա ց ո ւ ց ի չ ն Ե ր ը կ ա մ ա վ ո ր ա կ ա ն ջ ո կ ա տ ն Ե ր Է ի ն կ ա զ մ ո ւ մ և մ Ե կ ն ո ւ մ Է ի ն Ա ք խ ա զ ի ա : Ն մ ա ն օ ր ի ն ա կ ա ռ ա ջ ի ն ջ ո կ ա տ ը ք ա ղ կ ա ց ա ծ 35 հ ո գ ո ւ ց օ գ ո ս տ ո ս ի 23-ի ն ժ ա մ ա ն ո ւ մ Է Գ ո ւ դ ա ո ւ տ ա ⁸⁴: Ա ք խ ա զ ի ա յ ո ւ մ ռ ա զ մ ա կ ա ն գ ո ր ծ ո ղ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի ն թ ո ւ ր ք ի ա յ ա ք ն ա կ ա ք խ ա զ ն Ե ր ի մ ա ս ն ա կ ց ո ւ թ յ ա ն մ ա ս ի ն Ե ն խ ո ս ո ւ մ ն ա ն Ա ք խ ա զ ի ա յ ի կ ո ղ մ ի ց մ ա ր տ ն չ ո ղ դ ա շ տ ա յ ի ն հ ր ա մ ա ն ա տ ա ր ն Ե ր ի հ ո ւ շ Ե ր ը ռ ա զ մ ա կ ա ն գ ո ր ծ ո ղ ո ւ թ յ ո ւ ն ն Ե ր ի մ ա ս ի ն : Մ ա ս ն ա վ ո ր ա պ Ե ս 1992-1993 թ վ ա կ ա ն ն Ե ր ի վ ր ա ց - ա ք խ ա զ ա կ ա ն պ ա տ Ե ր ա զ մ ի տ ա ր ի ն Ե ր ի ն «Կ ո վ կ ա ս յ ա ն ժ ո ղ ո վ ո ւ ր դ ն Ե ր ի կ ո ն Ֆ Ե դ Ե ր ա ց ի ա յ ի » ո ւ ժ Ե ր ի հ ր ա մ ա ն ա տ ա ր ծ ա մ ի լ Բ ա ս ա յ և ը հ ա յ տ ն ո ւ մ Է ի ր

⁸³ Տ Ե ' ս Բ. Gültekin, "Abkhazia for the Integration of the Black Sea", Center for Middle Eastern Studies and Economic Policy Research Foundation of Turkey, Ankara, 2009, pp. 11-13

⁸⁴ Տ Ե ' ս Ա. Авидзба, "Проблемы военно-политической истории Отечественной войны в Абхазии (1992-1993 гг.)", Книга I, Сухум, 2013, стр 517

ջ ո կ ա տ ու մ մ ար տ ն չ ո ղ Թ ու ր ք ի ա յ ի ց ե կ ա ծ ք ա զ մ ա թ ի վ
ա ք խ ա զ ն եր ի մ ա ս ի ն ⁸⁵:

Փ ա ս տ ա ց ի ո Ր Ե ն 1992-1993 թ վ ա կ ա ն ն եր ի վ ր ա ց -
ա ք խ ա զ ա կ ա ն ք ա խ ու մ ն եր ի ը ն թ ա ց ք ու մ թ ու ր ք ա կ ա ն
կ ո ղ մ ը փ ո Ր ձ ու մ Ե Ր պ ա հ պ ա ն ե լ հ ա վ ա ս ար ա կ շ ո վ ա ծ
ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն եր կ ու կ ո ղ մ եր ի ն կ ա տ մ ա մ ք :
Պ ա շ տ ո ն ա կ ա ն հ ա յ տ ար ար ու թ յ ու ն ն եր ու մ
թ ու ր ք ա կ ա ն ի շ խ ա ն ու թ յ ու ն ն եր ը հ ա ն դ Ե ս Ե ի ն
գ ա լ ի ս Վ ր ա ս տ ա ն ի տ ար ա ծ ք ա յ ի ն
ա մ ք ո ղ ջ ա կ ա ն ու թ յ ու ն ը պ ա շ տ պ ա ն ո ղ
հ ա յ տ ար ար ու թ յ ու ն ն եր ո վ , ս ա կ ա յ ն մ ի ն ն ու յ ն
ժ ա մ ա ն ա կ կ ո չ Ե ի ն ա ն ու մ դ ա դ ար ե ց ն ե լ ո ա զ մ ա կ ա ն
գ ո Ր ծ ո ղ ու թ յ ու ն ն եր ը : Ա ն հ ր ա ժ ե շ տ Ե ար ձ ա ն ա գր ե լ
ն ա ն , ո Ր թ ու ր ք ա կ ա ն ի շ խ ա ն ու թ յ ու ն ն եր ը չ Ե ի ն
խ ո չ ը ն դ ո տ ու մ ն ա ն գ գ ա լ ի թ վ ո վ ն յ ու թ ա կ ա ն
օ գ ն ու թ յ ա ն և կ ա մ ա վ ո Ր ն եր ի տ ե ղ ա փ ո խ մ ա ն ը
Ա ք խ ա զ ի ա : Թ եր ն ս Ա ն կ ար ա յ ի ն մ ա ն տ ար ք եր ա կ վ ա ծ ,
ք ա յ ց ո Ր ո շ ա կ ի ո Ր Ե ն հ ա վ ա ս ար ա կ շ ո վ ա ծ
ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն ը հ ն ար ա վ ո Ր ու թ յ ու ն տ վ ե ց ի ն
թ ու ր ք ա կ ա ն ի շ խ ա ն ու թ յ ու ն ն եր ի ն գ գ ա լ ի ո Ր Ե ն
ա մ ր ա պ ն դ ե լ ի Ր Ե ն ց ա զ դ ե ց ու թ յ ու ն ը թ ե ' Վ
Վ ր ա ս տ ա ն ու մ , թ ե ' Ա ք խ ա զ ի ա յ ու մ

1994 թ վ ա կ ա ն ի ն կ ն ք վ ա ծ գ ի ն ա ն ա դ ա դ ար ի ց հ ե տ ո
Վ ր ա ս տ ա ն ի և Ա ք խ ա զ ի ա յ ի հ ա կ ա մ ար տ ու թ յ ու ն ը
շ ար ու ն ա կ վ ե ց ծ ա վ ա լ վ ե լ մ ե ծ ա մ ա ս ա մ ք
ք ա ն ա կ ց ա յ ի ն ս ե ղ ա ն ի շ ու ր ջ , ք ա ց ա ու թ յ ա մ ք
մ եր թ ը ն դ մ եր թ ս ա հ մ ա ն ա յ ի ն հ ա տ վ ա ծ ն եր ու մ
ն կ ա տ վ ո ղ գ ի ն վ ա ծ ք ա խ ու մ ն եր ի ն ⁸⁶: Ս ա կ ա յ ն
եր կ կ ո ղ մ հ ար ա ք եր ու թ յ ու ն ն եր ու մ կ տր ու կ

⁸⁵ Տ ե ' ս Ю. Воронов, “Белая книга Абхазии. Документы, материалы, свидетельства. 1992-1993”, ТОО “ВНЕКОМ”, Москва, 1993

փոփոխություններ տեղի ունեցան 2008 թվականի օգոստոսին, երբ վրացական զինված ուժերը հրետանային հարվածներ հասցրեցին Յարավային Օսիայի մայրաքաղաք Ցխինվալի ուղղությամբ: Չնայած նրան, որ վրացական ուժերի գործողությունները ուղղված չէին Աբխազիայի դեմ, սակայն աբխազական իշխանություններին մոտմտավախություն առաջացավ, որ Յարավային Օսիայից հետո վրացական ուժերի հաջորդ թիրախը լինելու է Աբխազիան: Օգոստոսի 8-ին աբխազական իշխանությունները, խախտելով 1994 թվականի Մոսկվայի պայմանագիրը, ծանր տեխնիկա են տեղակայում սահմանամերձ շրջաններում, իսկ օգոստոսի 9-ին հրետանային հարվածներ են կատարվում Կոդորի կիրճի վերին հատվածի ուղղությամբ: Օգոստոսի 12-ին աբխազական զինված ուժերին հաջողվում է նաև վերահսկողություն հաստատել վերոնշյալ տարածքների նկատմամբ⁸⁷: Չինված գործողություններին հաջորդեց օգոստոսի 25-ին Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Յարավային Օսիայի անկախությունների ճանաչումը:

2008 թվականի օգոստոսյան դեպքերը բավականին լուրջ մարտահրավեր դարձան Ռեջեփ Թայիփ Էրդոգանի վարչակազմի համար: Սակայն ի տարբերություն 1992-1993 թվականների իրադարձությունների զգալիորեն փոխվել էին տարածաշրջանային իրողությունները: Եթե նախորդ դարի 90-ականներին Թուրքիան հարաբերություններ էր կառուցում տարածաշրջանային նորանկախ պետությունների,

⁸⁷ Տե՛ս «Доклад Генерального секретаря ООН о положении в Абхазии», Тбилиси, 03.10.2008

ապա արդեն 2008 թվականին ձևավորվել էին հստակ տնտեսական և քաղաքական հարաբերություններ տարածաշրջանի գրեթե բոլոր երկրների հետ: Առաջին հերթին կարելի է նշել թուրքական կապիտալի մեծ ներհոսքը Վրաստան: Այս փաստը պայմանավորված էր Վրաստանի և Ադրբեջանի հետ համատեղ տարածաշրջանային տնտեսական ծրագրերի մշակմամբ և իրագործմամբ:

Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունում առկա մյուս զգալի փոփոխությունը արտաքին քաղաքական նոր դոկտրինի որդեգրումն էր, որի հեղինակը համարվում է Ահմեթ Դավուլթօղլուն⁸⁸: Նոր արտաքին քաղաքականության դիսկուրսը նախատեսում էր, որ Թուրքիան պետք է սկսի հավակնել միջազգային հարաբերություններում ավելի մեծ դեր ունենալուն՝ դառնալով տարածաշրջանային հիմնական դերակատարներից մեկը: Միևնույն ժամանակ արտաքին քաղաքականության մեջ կարևորվեց «Օխնդիրների հարևանների հետ» մոտեցումը, որով նախատեսվում էր լուծել գոյություն ունեցող խնդիրները անմիջական հարևանների հետ և կառուցել խաղաղ հարաբերություններ վերջիններիս հետ: Միևնույն ժամանակ Թուրքիայի ունեցած աշխարհաքաղաքական դիրքը երկրի իշխանություններին հնարավորություններ էր տալիս մասնակցել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ծրագրերին Ենեթետիկ քաղաքականության և այլ ոլորտներում: Արտաքին քաղաքականություն այս տեսլականը հատկապես

⁸⁸ Տե՛ս A. Davutoğlu, “Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu”, Kure Yayinlari, İstanbul, 2001

ամրապնդվեց 2002 թվականին «Արդարություն և
զարգացում» կուսակցության իշխանության
գալուց հետո: Արտաքին քաղաքականության այս
դոկտրինի տեսանկյունից կարելի է բացատրել
Անկարայի կողմից վարած խաղաղարարական
քաղաքականությունը Յարավային Կովկասում և
առաջ քաշած տարածաշրջանային անվտանգության
պահպանման ձևաչափը, որի հաջող իրականացումը
հնարավորություն էր բարիդրացիական
հարաբերություններ կառուցել հարևանների հետ
և խուսափել թեժ օջախների հայտնվելուց երկրի
անմիջական ազդեցության գոտիներից մեկում:

Առկա պայմաններում Թուրքիայի համար
առանձնային դարձավ տարածաշրջանային
քաղաքականության մշակումը, որը
հնարավորություն կտար պահպանել թե՛ Վրաստանի,
թե՛ Աբխազիայի հետ ձևավորված
հարաբերությունները: Օգոստոսյան դեպքերից
հետո Թուրքիան հանդես եկավ տարածաշրջանային
անվտանգության համակարգ ստեղծելու
առաջարկով: Անկարայի առաջարկած նոր
անվտանգության ձևաչափի մասին քննարկումները
մեկնարկեցին 2008 թվականի օգոստոսի 11-ին՝
Թուրքիայի նախագահ Ռ.Էրդողանի և Ռուսաստանի
նախագահ Դ. Մեդվեդևի միջև կայացած Մոսկովյան
հանդիպման շրջանակներում: Անկարայի նոր
նախագծով նախատեսվում էր, որ «Կովկասում
կայունություն և համագործակցության հարթակը»
պետք է գործեր «3+2» ձևաչափով, որը նախատեսում էր
Յարավային Կովկասի 3 հանրապետությունների,
ինչպես նաև Թուրքիայի և Ռուսաստանի

մասնակցությունը⁸⁹: Անկարայի այս նախաձեռնությունն հաջող իրականացումը հնարավորություն էր բարի դրացիական հարաբերություններ կառուցել հարևանների հետ և խուսափել թեժ օջախների հայտնվելուց երկրի անմիջական ազդեցության գոտիներից մեկում: Չնայած նրան, որ թուրքական նախաձեռնությունը չունեցավ նախատեսվող հաջողությունը, Անկարային հաջողվեց պահպանել ձևավորված հարաբերությունները Վրաստանի և Աբխազիայի հետ: Ավելին, Ռուսաստանի և Վրաստանի միջև հարաբերությունների սրումը հանգեցրեց նրան, որ Թուրքիան դարձավ վրացական կողմի հիմնական առևտրային գործընկերը: Միևնույն ժամանակ Աբխազիայի անկախության ճանաչումը ՌԴ կողմից դրական տեղաշարժեր բերեց թուրք-աբխազական տնտեսական հարաբերություններում:

Չի կարելի նաև անուշադրություն մատնել աբխազական համայնքի գործունեությունը Թուրքիայում: Աբխազական կազմակերպությունները բավականին ակտիվ արձանագանքեցին Վրաստանի և Աբխազիայի միջև վերսկսված գործողություններին: Կրկին սկսվեցին կազմակերպվել ցույցեր, որոնց ընթացքում հնչող հիմնական պահանջներից մեկը Թուրքիայի կողմից Աբխազիայի անկախության ճանաչումն էր⁹⁰:

Ի տարբերություն նախորդ դարի վերջում տեղի ունեցած իրադարձությունների, աբխազական համայնքը 2008 թվականի գիսված բախումների

⁸⁹ Նույն տեղում

⁹⁰ Տե՛ս А. Кривенюк, “Абхазия-Турция: отношения, которых нет”, Абхазия-Информ, 29.01.2016 (<https://goo.gl/124t6L>)

ընթացքում մեծամասամբ սահմանափակվեց Աբխազիայի անկախության ճանաչմանը ուղղված լոբբիստական գործունեությունը: Օգոստոսյան դեպքերի կարճատևությունը, ինչպես նաև արևազական զինված ուժերի արագ հաջողությունները նպաստեցին նրան, որ չառաջացավ մարդասիրական օգնություն հավաքման և կամավորական ջոկատների Աբխազիա ժամանելու անհրաժեշտություն:

1.3 ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎԱՐԱՇՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1991-2010 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան չէր կարող բաց թողնել տարածաշրջանում առանցքային ուժերից մեկը դառնալու հնարավորությունը: Դրանով է պայմանավորված, որ թուրքական իշխանությունները անմիջապես փորձեցին կարևոր դեր ստանձնել բերել անկախացած պետություններում: Աբխազիայի պարագայում Թուրքիայի քաղաքականության վրա նաև զգալի ազդեցություն է ունեցել երկրում ապրող արևազական համայնքը: Թուրքիան, պաշտոնապես պաշտպանելով Վրաստանի տարածքային ամբողջականությունը և քննադատելով արևազական տեղական իշխանությունների գործողությունները, չէր կարող ամբողջովին հետկանգնել Աբխազիայում գործունեություն ծավալելու և ազդեցության լծակներ ձեռք բերելու մտադրությունից: Դրանով է պայմանավորված, որ թուրքական իշխանությունները՝ քողարկելով իրենց

գործողությունները արխագական սփյուռքով,
փորձում էին հնարավորինս արագ և զգալի
նշանակություն ձեռք բերել արխագական
պետություն համար:

Թուրքիայում բնակվող արխագական համայնքը
ձգտում էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել
պատմական հայրենիքին, իսկ թուրքական
իշխանությունները իրենց հերթին փորձում էին
չխոչընդոտել նման ակտիվությունը՝ փորձելով
որոշակի օգուտներ քաղել ստեղծված իրավիճակից:
Առաջին հերթին Թուրքիայի համար կարևոր էր իր
ազդեցություն հաստատումը այս
տարածաշրջանում՝ խոլսափելով Վրաստանի
կողմից հնարավոր հակազդեցությունից:
Լեռնային Ղարաբաղում ընթացող պատերազմի
պայմաններում Վրաստանը կարևոր կապող օղակ էր
հանդիսանում Թուրքիայի և Ադրբեյջանի միջև, որի
կորուստը կարող էր անդամնալի հետևանքներ
ունենալ ապագա էներգետիկ ծրագրերի վրա:
Ստեղծված պայմաններում Անկարան
հնարավորություն ստացավ Թուրքիայում
բնակվող արխագական համայնքի միջոցով իր
կապիտալը շրջանառություն մեջ դնել
Արխագիայում և կառավարել արխագական
տնտեսության զգալի մասնաբաժինը: Համայնքի
կողմից Արխագիային օգնություն
տրամադրվելու գուճահեն վերոնշյալ
ժամանակահատվածում հետզհետե մեծանում էր
Թուրքիայի կշիռը արխագական
տնտեսությունում⁹¹: Տրապիզոնում, Սամսոնում
և Սևծովյան շրջաններում ապրող գործարարներին

⁹¹Տե՛ս B. Gültekin, “Questioning The Embargo On Abkhazia: Turkey's Role In Integrating Into The Black Sea Region”, Turkish Policy Quarterly, Vol. 8, № 4, Istanbul, 2009, p. 78-79

առևտրական ներքին համար Աբխազիան սկսեց դիտարկվել որպես բավականին շահավետ ներդրումային հեռանկար ունեցող շրջան՝ հաշվի առնելով երկրում առկա օգտակար հանածոները և մյուս ոլորտներում վրաց-աբխազական պատերազմից հետո մարդկային ռեսուրսի արտագաղթի և ավերածուծ թյունների հետևանքով առաջացած բացերը: Դրան գուգահեռ թուրքաբնակ գործարները դիտարկում էին Աբխազիայի միջոցով ՌԴ հարավային շրջանների շուկա դուրս գալու հնարավորությունը: Թուրքաբնակ գործարարների ակտիվ գործունեություն մասին է վկայում, որ մինչև ռուսական կողմի ակտիվ ներգրավվումը Աբխազիայի տնտեսություն մեջ, պետական բյուջեի 30%-ը ձևավորվում էր թուրքական ապրանքների համար գանձված մաքսային վճարներից⁹²: Արդեն 2000 թվականի տվյալներով Թուրքիան բավականին լուրջ մասնակցություն ուներ աբխազական տնտեսությունում: Ըստ Վրաստանի խորհրդարանի բյուջե տային գրասենյակի տվյալների, Աբխազիա 1 տարվա կտրվածքով ներկրվող ապրանքների 60%-ը (մոտ 6.780.000 ԱՄՆ դոլար) բաժին էր ընկնում Թուրքիային, իսկ մնացածը՝ Ռուսաստանին: Արտահանման պարագայում Թուրքիային բաժին էր ընկնում 45%-ը (մոտ 2.5 միլիոն ԱՄՆ դոլար), իսկ Ռուսաստանին՝ 54%⁹³: Այդ տարիներին թուրքական կազմակերպությունների և անհատների հետ առևտրում գերակշռում էին մեկանգամյա

⁹² Տե՛ս N. Clayton, “What us Turkey Doing in Abkhazia?” Heinrich Boell Stiftung, 16.01.2014 (<https://goo.gl/8XRNuV>)

⁹³ Թվերը վերցված են 2000 թվականի վերաբերյալ Աբխազիայի ապրանքաշրջանառության մասին հրապարակված տվյալներից: Ավելի մանրամասն տե՛ս Д. Кляйн, Н. Мириманова, Ф. Шампейн, “От экономики войны к экономике мира на Южном Кавказе”, “International Alert” Лондон, 2004, стр. 147-148

գործարքները, բանկային համակարգում կապիտալի պակասի պատճառով բացակայում էին ֆինանսական այլ գործողությունները: Ներկրվում էր այն, որ, ցորեն, շաքար, յուղ, կարտոֆիլ և վառելանյութ, իսկ արտահանվում էր թեյ, մրգեր, ծխախոտային հումք, երկաթ և փայտանյութ⁹⁴:

Տնտեսության ոլորտում թուրքական ձեռքբերումներից զատ, նաև պետք է ուշադրություն դարձնել այն փաստին, որ թուրքական իշխանությունները այս ընթացքում ստիպված էին գործունեանալ Աբխազիայի հարցում Վրաստանի իշխանությունների վարած քաղաքականության հետ: Եթե հաշվի առնենք Թբիլիսիի ունեցած տնտեսական և քաղաքական նշանակությունը Անկարայի համար, ապա ակնհայտ է դառնում, որ շատ հաճախ թուրքական իշխանությունները ստիպված էին զգալիորեն սահմանափակել իրենց քաղաքացիների գործունեությունը Աբխազիայում՝ պաշտոնապես հանդես գալով Վրաստանի տարածքային ամբողջականությունը պաշտպանող հայտարարություններով: Վրաստանի հետ հարաբերություններին խորացմամբ և ռազմավարական համագործակցությամբ էր պայմանավորված, որ 1996 թվականին արգելվեց խորհրդային նմուշի անձնագրեր ունեցող անձանց մուտքը Թուրքիա, որին հաջորդեց Սուլխումի և Տրապիզոնի միջև լաստանավային հաղորդակցության դադարեցումը⁹⁵: 1996 թվականից ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների խորհրդի

⁹⁴Տե՛ս M. Vindimian, “Evolution of Turkish Foreign Policy towards Georgia”, ISPI Policy Brief, № 196, Milan, 2010, p. 8

⁹⁵Տե՛ս “Abkhazian access to turkey curbed”, The Jamestown foundation, 24.09.1996 (<https://goo.gl/bQQNzz>)

որոշմամբ Աբխազիայի նկատմամբ սկսվեց կիրառվել տնտեսական պատժամիջոցներ, որոնց հետևանքներ էր Ռուսաստանի և Վրաստանի կողմից շրջափակումը, ինչի հետևանքով Աբխազիան զրկվեց թե՛ ծովային, թե՛ ցամաքային ճանապարհներով արտաքին աշխարհի հետ կապվելու հնարավորությունից⁹⁶:

Աբխազիայի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները ծանր ազդեցություն էին թողնում երկրի բնակչության վրա հատկապես այն ժամանակաշրջանում, երբ Ռուսաստանի Դաշնությունը հավատարիմ էր մնում ամբողջական շրջափակման քաղաքականությունը: Թուրքիան իր հերթին փորձում էր հնարավոր միջոցներով կանխել թուրք գործարարների ակտիվությունը Աբխազիայում՝ չնայած նրան, որ նրանց միջոցով երկիրը կարող էր որոշակիորեն մեղմել ստեղծված իրավիճակը՝ ստանալով որոշակի բարոյական և տնտեսական օգնություն: Սակայն անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ նման քաղաքականությունը վարելով հարևան երկրները չկարողացան բերել զգալի օգուտներ: Թուրք-աբխազական կապերի ամրապնդմանը նպաստեց նաև Ռուսաստանի 2008 թվականին կայացրած որոշումը, որով վերջինս չեղյալ էր հայտարարում 1996 թվականին ԱՊՀ անդամ երկրների ղեկավարների խորհրդի որոշման համաձայն Աբխազիայի դեմ կիրառվող տնտեսական, ֆինանսական և տրանսպորտային պատժամիջոցները⁹⁷: Պատժամիջոցները վերացումը նշանակում էր, որ թուրք գործարարները կարող

⁹⁶ Տե՛ս Решение Совета глав государств СНГ "О мерах по урегулированию конфликта в Абхазии, Грузия", 19.01.1996

⁹⁷ Տե՛ս "Россия отменила санкции в отношении Абхазии", РИА Новости, 16.05.2008 (<https://bit.ly/2J4I99N>)

Է ի ն առանց խոչընդոտների իրենց կապիտալը տեղափոխել Աբխազիա և ներդրումներ կատարել տեղի տնտեսության զարգացման մեջ: Այս փոփոխությունների շնորհիվ իրենց հայրենիքին օգնելու հնարավորությունն ստացան նաև Թուրքիայում բնակվող աբխազական համայնքի անդամները: Պաշտոնական հարաբերությունների բացակայությունը երկու երկրների միջև չի խոչընդոտում նրան, որ Թուրքիան անուղղակիորեն մեծ մասնակցություն ունենա Աբխազիայի տնտեսական և մշակութային կյանքում:

Հետզհետե սկսում է նկատվել Թուրքիայի հետ առևտրային ապրանքաշրջանառության ծավալների մեծացում: Ռուսաստանի կողմից Աբխազիայի ճանաչումը և նոր սահմանային կարգավորումները բավականին դրական ազդեցություն ունեցան թուրք գործարարների, առևտրականների և աբխազական համայնքի համար: Վերջիններս հնարավորություն ստացան բավականին հեշտունթյամբ կապ պահպանել Սուխումի հետ՝ ամրապնդելով թե՛ տնտեսական, թե՛ մշակութային կապերը: Դրա մասին են վկայում Աբխազիայի իշխանությունների կողմից ներկայացված պաշտոնական թվերը արտաքին առևտրի վերաբերյալ: Եթե 2010 թվականին Աբխազիայի ցարտահանվող ապրանքների 31%-ն էր բաժին ընկնում Թուրքիային (մոտ 22 միլիոն ԱՄՆ դոլար), ապա 2016 թվականին այդ ցուցանիշը կազմում էր 35% (ավելի քան 32 միլիոն ԱՄՆ դոլար): Եթե արտահանման ոլորտում Թուրքիայի տեսակարար կշիռը տարեցտարի աճում է, ապա ներկրումների գործընթացում նկատվում է հակառակ

գործընթացը: Եթե 2012 թ.-ին Թուրքիայի ցներկրվող ապրանքները կազմում էին 20%-ը (մոտ 71 միլիոն ԱՄՆ դոլար), ապա 2016 թ.-ին այդ ցուցանիշը կազմում է միայն 4% (գրեթե 14 միլիոն ԱՄՆ դոլար)⁹⁸: Նման տարբերությունը կարելի է բացատրել նրանով, որ Թուրքիայի հետ առևտուրը իրականացվում է դոլարով, իսկ Աբխազիայում լայնորեն գործածվող արժույթը ռուսական ռուբլին է: 2014 թվականին ռուբլու արժեզրկումը ԱՄՆ դոլարի նկատմամբ հանգեցրեց նրան, որ աբխազական կողմին այլևս չահապետ չէր Թուրքիայի ցներկրել այն ապրանքները, որոնք հնարավոր էր ռուբլիով ձեռք բերել Ռուսաստանից:

Չնայած Աբխազիայի ցներկրվող և արտահանվող ապրանքների տեսակարար կշռում Թուրքիայի չափաբաժնի նվազեցմանը, պաշտոնական թվերը ցույց են տալիս, որ ընդհանուր առևտրային ապրանքաշրջանառությունը 2 երկնների միջև 2016 թվականին կազմում էր ավելի քան 46 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը գրեթե 400% գերազանցում է 2000 թվականի ցուցանիշը⁹⁹: Նաև պետք է նշել, որ պաշտոնական թվերը չեն արտացոլում երկու երկնների միջև ապրանքաշրջանառության իրական ծավալները, որովհետև բազմաթիվ նավեր թուրքական նավահանգիստներին ցուղևորվում են Սոչի, ինչից հետո միայն շարունակում են իրենց ճանապարհը դեպի Սուխում և հակառակը, ինչը թուրքական չի տալիս լիովին վերահսկել Թուրքիայի

⁹⁸Ներկրման ծավալների մասին պաշտոնական տվյալները ըստ երկրների հայտնի են միայն 2012 թվականից:

⁹⁹Աբխազիայի և Թուրքիայի միջև ապրանքաշրջանառության մասին ավելի մանրամասն տվյալներ տե՛ս Աբխազիայի Չանրապետության Մաքսային հանձնաժողովի տարեկան հաշվետվություններում (<https://goo.gl/wMth8K>)

հետի րականացվող առևտրի ծավալները: Ըստ Հասան Կանբոլատի՝ «Today's Zaman»-ում տպագրված հոդվածում ներկայացրած տվյալների, երկու երկրների միջև ընդհանուր առևտրային ապրանքաշրջանառությունը արդեն 2013 թվականին հասել էր 600 միլիոն դոլարի¹⁰⁰: Հեղինակը այս տվյալները ներկայացնում է Սոչիի նավահանգստով Թուրքիայի և Ռուսաստանի միջև ապրանքաշրջանառության տվյալների հիման վրա: Կարևոր քայլ էր նաև 1994 թվականից Սուխումի և Տրապիզոնի միջև լաստանավային հաղորդակցության հաստատումը¹⁰¹:

Կարելի է արձանագրել, որ Թուրքիային հաջողվել է դառնալ 2-րդ պետությունը Աբխազիայի տնտեսությունում իր ունեցած մասնաբաժնով, չնայած նրան, որ մինչ օրս երկու պետությունների միջև չկան դիվանագիտական հարաբերություններ, իսկ Թուրքիան իր հերթին Աբխազիայի նկատմամբ կիրառում է նաև միջարք պատժամիջոցներ: Անկարային հաջողվել է Աբխազիայի համար դառնալ կարևոր տնտեսական գործընկեր, որը ձգտում է տարեցտարի ավելացնել իր ֆինանսական ներգրավվածությունը այս երկրում: Այս կերպ Թուրքիան ձգտում է որոշակիորեն նաև նվազեցնել Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում՝ արխազական իշխանությունների մատնանշելով նաև տնտեսական զարգացման թուրքական ուղղվածությունը: Թուրք-արխազական հարաբերություններին հաստատման գործում նաև

¹⁰⁰Տե՛ս H. Kanbolat, “A new Era in Turkey-Abkhazia Relations”, Today’s Zaman, 01.09.2014 (<https://goo.gl/HFZ5rb>)
¹⁰¹Տե՛ս B. Gültekin, “Abkhazia for the Integration of the Black Sea”, Center for Middle Eastern Studies and Economic Policy Research Foundation of Turkey, Ankara, 2009, p.6

կարևոր է առանձնացել երկու երկրների միջև դիվանագիտական կապեր հաստատելու փորձերը:

Թբիլիսի կատարած այցի ժամանակ Թուրքիայի Արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն Լրագրողների հետ հանդիպմանը հայտարարել է, որ ծրագրում է այցելել Աբխազիա՝ մատնանշելով, որ այս կերպ Թուրքիան ձգտում է ճանաչել Աբխազիան և բարելավել վերջինիս հարաբերությունները Վրաստանի հետ: Դրանից որոշ ժամանակ անց՝ 2009 թվականի սեպտեմբերի 10-ին, Աբխազիա է մեկնում թուրք դիվանագետ Ունալ Չևիքոզը, որտեղ հանդիպումներ է ունենում Աբխազիայի ԱԳ նախարար Սերգեյ Շամբայի հետ¹⁰²: Այս հանդիպումներին հաջորդում են նաև թուրք միջարք դիվանագետների այցելությունները Աբխազիա և երկրի վարչապետի հետ հանդիպումները: Կարելի է առանձնացնել 2010 թվականին Վրաստանում Թուրքիայի դեսպան Մուրաթ Բուրհանի այցելությունը Սուխում, որի ժամանակ կողմերի միջև քննարկվող թեմաների շարքում էր «Աբխազիայի հետ անմիջական առևտրի հաստատման հնարավորությունը»¹⁰³:

Ակնհայտ է, որ այս կերպ Թուրքիան ցանկանում էր բարձրացնել իր դերը տարածաշրջանում, այդ թվում, նաև Աբխազիայում: Անկարայի համար կարևորագույն խնդիր է Աբխազիայի դեմ կիրառվող ծովային շրջափակման խնդիրը, որը թուրք դիվանագետները փորձում են լուծել Վրաստանի և Աբխազիայի իշխանությունների հետ ունեցած հանդիպումներում: Պատժամիջոցների վերացումը Թուրքիային հնարավորություն կտա առանց

¹⁰² Տե՛ս С. Маркедонов, «Абхазское Окно Турции», 16.09.2009 (<https://goo.gl/LDX2vF>)

¹⁰³ Տե՛ս “Turkish Investment and Trade Booms In Abkhazia”, Tabula, 01.04.2011 (<https://goo.gl/v6NQT5>)

միջնորդներին ուղղակիորեն ներդրումներ կատարել արխագական տնտեսության մեջ, ինչը հնարավորություն է կտա որոշակիորեն մրցակցության մեջ մտնել Ռուսաստանի Դաշնության հետ: Իրենց հերթին, արխագական իշխանություններին համար ակնհայտ է, որ Թուրքիայի հետ հարաբերություններին սերտացումը հնարավորություն է կտա կապեր հաստատել նաև Սև ծովի ավազանի այլ երկրների հետ, ինչի շնորհիվ երկիրը կկարողանա ադուրս գալ միակողմանի մեկուսացումից: Թուրքական իշխանությունները իրենց քաղաքականությամբ ցանկանում էին նաև Յարավային Կովկասի հակամարտություններին մասնակից կողմերի համար ստանձնել միջնորդի կարևոր դերը: Դրանով է բացատրվում Անկարայի ներգրավվածությունը թե՛ Արխագիայի և Յարավային Օսիայի, թե՛ Լեռնային Ղարաբաղի հակամարտություններում: Թուրքիան, լինելով Յյուսիսատլանտյան դաշինքի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների անդամ, փորձում է օգտագործել իր հեղինակությունը, որպեսզի ազդեցություն ձեռք բերի տարածաշրջանում:

Քաղաքական և տնտեսական ազդեցությունը զուգահեռ ցանկացած երկրի համար կարևոր են նաև մշակութային կապերը: Թուրքիան, որը բավականին երկար ժամանակ ամուր մշակութային և կրոնական ազդեցություն ունեւր Արխագիայի վրա, չէր կարող անմասն մնալ վերջինիս մշակութային և կրոնական կյանքից: Թուրքական իշխանությունները հաջողություններ կարողանում էին օգտագործել իրենց երկրում ապրող արխագական համայնքը՝

Աբխազիայում իր մշակութային ազդեցությունը տարածելու համար: Այս նպատակին էր ուղղված 1995 թվականին «Բաշարան» վարժարանի բացումը, որտեղ սկզբնական շրջանում դասերը ընթանում էին բավականին ծանր պայմաններում՝ չկար ջուր և էլեկտրաէներգիա, իսկ շրջափակման պատճառով բացակայում էին թուրքիայի հետ կապերը: Սակայն այդ տարիներին «Բաշարան» վարժարանը միակ ուսումնական հաստատությունն էր, որտեղ հնարավոր էր օգտագործել համակարգիչներ և սովորել երկու օտար լեզուներ՝ անգլերեն և ռուսերեն: Դպրոցը իր գործունեությունը դադարեցրեց 2010 թվականին, երբ Աբխազիայի կրթության նախարարի պատասխանատուները ետևան չեցին դպրոցին տված արտոնագրերը: Աբխազական իշխանությունների նման քաղաքականությունը բացատրվում էր իսլամիստական գաղափարախոսության տարածման մտավախություններով¹⁰⁴:

Բաշարան վարժարանը բավականին հայտնի ուսումնական հաստատություն էր: Դպրոցում առարկաները հիմնականում դասավանդվում են երեք լեզուներով՝ անգլերեն, ռուսերեն և թուրքերեն: Այս կերպ թուրքիան հնարավորություն է ստանում իր մշակութային ազդեցությունը Աբխազիայում տարածել տեղի ամենահեղինակավոր ուսումնական հաստատություններից մեկի միջոցով: Դրան են նպաստում նաև թուրք գործարարների զգալի մասի սերտ կապերը վարժարանի հետ: Կարելի է նշել, որ այս կերպ թուրքիայի առաջնային նպատակներից է

¹⁰⁴ Տե՛ս «В Абхазии закрывается турецкий колледж», Кавказский Узел, 03.08.2010 (<https://goo.gl/rh4eBV>)

թո՛ւրք-աբխազական մշակութային հարաբերություններին սերտացումը կրթության միջոցով: Դրամասին է խոսում նաև այն փաստը, որ վարժարանի շրջանավարտները բավականին մտչելի տարբերակով կարողանում էին իրենց ուսումնառությունը շարունակել թո՛ւրքական տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում¹⁰⁵: Նման քաղաքականությունը հնարավորություն էր տալիս Աբխազիայում ձևավորվել Թո՛ւրքիայի հանդեպ բավականին դրականորեն տրամադրված սերունդ, որը երկրի զարգացումը տեսնում է ոչ թե Ռուսաստանի հետ հետագա համագործակցությունամբ, այլ Թո՛ւրքիայի հետ հարաբերություններին սերտացմամբ: Նաև աբխազ ուսանողների Թո՛ւրքիայում կրթությունը ստանալու հնարավորությունը թույլ է տալիս կապեր հաստատել աբխազական համայնքի ներկայացուցիչների և բոլև Աբխազիայի բնակիչների մեջ՝ կոտրելով երկար տարիների ընթացքում ձևավորված անջրպետը:

Երկու երկրների հարաբերություններում նաև կարևորագույն դեր է կատարում կրոնը: Չնայած նրան, որ Աբխազիայի բնակչության մեծամասնությունը ուղղափառ եկեղեցու հետևորդներ են, Աբխազիայում զգալի թիվ են ներկայացնում նաև իսլամադավանները¹⁰⁶: Ըստ 2003 թվականի տվյալների, Աբխազիայի բնակչության 16%-ը դավանում է իսլամ: Հատկանշական է, որ նրանց զգալի մասը հայրենադարձ աբխազներ են

¹⁰⁵ Տե՛ս B. Gültekin, “Abkhazia for the Integration of the Black Sea”, Center for Middle Eastern Studies and Economic Policy Research Foundation of Turkey, Ankara, 2009, p.11-31
¹⁰⁶ Տե՛ս P. Kilpadi, “Islam and Tolerance in Wider Europe”, Open Society Institute, Budapest, 2006, p. 66-67

Թ ու ը ք ի ա յ ի ց ¹⁰⁷: Թ ու ը ք ա կ ա ն ի շ խ ա ն ու թ յ ու ն ն ե ը ը փ ո ը ճ ու մ ե ն ն ա ն օ գ տ ա գ ո ը ծ ե լ ա յ ս լ ծ ա կ ը հ ա ը ա ք ե ը ու թ յ ու ն ն ե ը ի գ ա ը զ ա գ մ ա ն հ ա մ ա ը ` Թ ու ը ք ի ա յ ի Կ ը ո ն ա կ ա ն հ ա ը ց ե ը ո վ ն ա խ ա գ ա հ ու թ յ ու ն ը ի ը օ գ ն ու թ յ ու ն ն է ա ճ ա ջ ա ը կ ու մ տ ա ը ա ծ ա շ ը ջ ա ն ն ի մ ու ս ու լ լ մ ա ն ն ե ը ի ն , ի ն չ ի ա ը դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ա ն մ ա ս ի ն խ ո ս ու մ է ա յ ն փ ա ս տ ը , ո ը ք ա գ մ ա թ ի վ ի ս լ ա մ ա դ ա վ ա ն ե ը ի տ ա ս ա ը դ ն ե ը կ ա ը ո ղ ա ն ու մ ե ն կ ը թ ու թ յ ու ն ս տ ա ն ա լ Թ ու ը ք ի ա յ ու մ և ա ը տ ե ը կ ը ի ա յ լ հ ե ղ ի ն ա կ ա վ ո ը կ ե ն տ ը ո ն ն ե ը ու մ ¹⁰⁸:

Կ ա ը ե լ ի է ա ը ճ ա ն ա գ ը ե լ , ո ը ա ը դ ե ն XVI դ ա ը ի ց Օ ս մ ա ն յ ա ն կ ա յ ս ը ու թ յ ու ն ը , ի ս կ հ ե տ ա գ ա յ ու մ ն ա ն Թ ու ը ք ի ա ն ձ գ տ ու մ է ի ն հ ն ա ը ա վ ո ը ի ն ս ա մ ու ը դ ի ը ք ե ը ձ ե ճ ք ք ե ը ե լ Ա ք խ ա գ ի ա յ ու մ : Մ ի ն ն ու յ ն ժ ա մ ա ն ա կ ա ն հ ը ա ժ ե շ տ է ու շ ա դ ը ու թ յ ու ն դ ա ը ճ ն ե լ ա յ ն փ ա ս տ ի վ ը ա , ո ը ժ ա մ ա ն ա կ ի ը ն թ ա ց ք ու մ է ա պ ե ս փ ո փ ո խ վ ե լ է թ ու ը ք ա կ ա ն պ ե տ ու թ յ ա ն կ ո ղ մ ի ց օ գ տ ա գ ո ը ծ վ ո ղ գ ո ը ծ ի ք ա կ ա գ մ ը : Ե թ ե Օ ս մ ա ն յ ա ն կ ա յ ս ը ու թ յ ու ն ը Ա ք խ ա գ ի ա յ ու մ ի ը ա գ դ ե ց ու թ յ ու ն ը փ ո ը ճ ու մ է ը ա մ ը ա պ ն դ ե լ ճ ա գ մ ա վ ա ը ա կ ա ն ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ու ն ե ց ո ղ ա մ ը ո ց ն ե ը ու մ և ք ա ղ ա ք ն ե ը ու մ կ ա յ ա գ ո ը ն ե ը ի տ ե ղ ա կ ա յ մ ա մ ք , հ ա ճ ա խ կ ը կ ն վ ո ղ ա ը շ ա վ ա ն ք ն ե ը ի և ք ն ա կ չ ու թ յ ա ն լ ա յ ն շ ե ը տ ե ը ի ի ս լ ա մ ա ց մ ա մ ք , ա պ ա ն ե ը կ ա յ ու մ ս թ ու ը ք ա կ ա ն ի շ խ ա ն ու թ յ ու ն ն ե ը ի կ ո ղ մ ի ց ո ը դ ե գ ը ա ծ « փ ա փ ու կ ու ժ ի » ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն ը թ ու յ լ է տ ա լ ի ս Ա ք խ ա գ ի ա յ ի տ ն տ ե ս ու թ յ ու ն ու մ ա ճ կ ա թ ու ը ք ա կ ա ն կ ա պ ի տ ա լ ի և Թ ու ը ք ի ա յ ու մ ք ն ա կ վ ո ղ ա ք խ ա գ ա կ ա ն ս փ յ ու ն ք ի

¹⁰⁷ Տ ե ' ս Ա.Крылов, “Секрет абхазской веротерпимости”, Независимая газета, 17.04.2004
¹⁰⁸ Տ ե ' ս “Islam and Islamic Practices in Georgia. Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies”, Berkeley, 2004, p. 15

միջոցով առանցքային դեր ստանալ արխագական իշխանությունների համար: Անհրաժեշտ է ընդգծել, որ Արխագական հակամարտության հարցում Անկարան առանձնանում է հարաբերական չեզոքությամբ, ինչը թույլ է տալիս արդյունավետ հարաբերություններ կառուցել հակամարտության երկու կողմերի հետ: Հատկանշական է նաև այն փաստը, որ Արխագիայի հետ հարաբերությունները թուրքական կողմը պահպանում է միջնանկային մակարդակի վրա՝ խուսափելով պաշտոնական հարաբերություններ հաստատելուց:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Կ Ր ՈՐ Դ
Ա Բ Խ Ա Չ Ի Ա Յ Ի Գ ՈՐ Շ ՈՆ Ը Թ ՈՒ Ր Ք Ի Ա Յ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ր Տ Ա Ք Ի Ն Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՈՒ Մ
2.1 Ա Բ Խ Ա Չ Ի Ա Յ Ի Գ ՈՐ Շ ՈՆ Ը Թ ՈՒ Ր Ք -Վ Ր Ա Ց Ա Կ Ա Ն
Հ Ա Ր Ա Բ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Տ Ե Ք Ս Տ ՈՒ Մ 1991-2010
Թ Վ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Ն

Սկսած նախորդ դարի 1990-ականներից Թուրքիայի և Վրաստանի միջև հարաբերություններում գրանցվել է կտրուկ առաջընթաց տնտեսության, քաղաքականության և տարածաշրջանային համագործակցության ոլորտներում: Ըստ Թուրքիայի արտաքին գործերի նախկին նախարար Ահ. Դավուդթոփուլի, Վրաստանի հետ ձևավորված հարաբերությունները «հանդիսանում են թուրքական արտաքին

քաղաքականության հաջողության գուցիչները
մեկը»¹⁰⁹: Թուրքիան, լինելով Վրաստանի հետ
ընդհանուր սահմանունեցող ՅՆՍԻՍատլանտյան
դաշինքի միակ երկիրը և ունենալով ամուր
ձևավորված կապեր Արևմուտքի երկրների հետ,
կարևոր դեր է կատարում ԵՄ-ին և
ՅՆՍԻՍատլանտյան դաշինքին անդամագրվելու
ուղղված վրացական կողմի վարած
քաղաքականությունը: Իր հերթին Վրաստանը
ազգավարական կապող օղակ է Թուրքիայի և
Ադրբեյջանի միջև: Կասպյան ավազանը Եվրոպայի
հետ կապող տնտեսական ծրագրերի իրագործումը իր
հերթին առանցքային դեր ունի Թուրքիայի,
Վրաստանի և Ադրբեյջանի համար:
Տարածաշրջանային տնտեսական ծրագրերի
իրականացումը Անկարային թույլ է տալիս «թեթև
ուժի» կիրառմամբ ամրապնդել իր ազդեցությունը
Յարավային Կովկասում, իսկ Թբիլիսին և Բաքուն
իրենց հերթին այլընտրանք են ձեռք բերում
Մոսկվային:

Նախորդող երկու տասնամյակներում
Վրաստանի և Թուրքիայի հարաբերությունները
առանձնանում են երկկողմ առևտրի և տնտեսական
համագործակցության զարգացմանն ուղղված
քաղաքականությամբ երկու երկրների
իշխանությունների կողմից: Թուրքիայի
իշխանությունները ձգտում էին ամուր
տնտեսական կապեր հաստատել հարևան երկրների
հետ և նպաստել այդ երկրներում թուրքական
գործարարների ակտիվությանը, իսկ վրացական
կողմի համար առանցքային նշանակություններ

¹⁰⁹ Տե՛ս Ah. Davutoğlu, “Turkey’s Foreign Policy Vision: An assessment of 2007”, “Insight Turkey”, Vol. 10, № 1, SETA Foundation, Washington, 2008, p. 80

տնտեսություն տարբեր ոլորտներում տնտեսական մրցակցության ի հայտ գալը, ինչպես նաև նպաստավոր պայմանների ստեղծումը հնարավոր օտարերկրյա ներդրողների համար: Արդեն Էդ. Շևարդնաձեի կառավարման տարիներին թուրք-վրացական հարաբերություններում նկատվող մերձեցումը կապված էր համատեղ խոշոր էներգետիկ ծրագրերի իրականացմամբ: Երկկողմ տնտեսական հարաբերությունները հատկապես կտրուկ զարգացում ապրեցին 2000-ականների կեսերից, երբ Թուրքիայում իշխանության եկավ «Արդարություն և զարգացում կուսակցությունը», իսկ վրաց-ռուսական հարաբերություններում հետզհետե սկսեց աճել երկկողմ լարվածությունը¹¹⁰:

Թուրք-վրացական հարաբերություններում առանցքային տեղ են զբաղեցնում էներգետիկ ոլորտում իրականացված ծրագրերը: Խոշորագույն նախագծերի թվում են 2006 թվականին գործարկված Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, որը հնարավորություն էր տալիս Կասպից ծովի ավազանի նավթը Վրաստանի տարածքով հասցնել Թուրքիա, ինչպես նաև նույն տարում գործարկված Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը: Թուրքական կողմի մասնակցությամբ մյուս տարածաշրջանային կարևոր նշանակություն ունեցող ծրագիրը Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղին էր, որի ստեղծման մասին համաձայնագիրը 2007 թվականին ստորագրել էին Թուրքիայի, Վրաստանի և Ադրբեյջանի ղեկավարները: Երկաթուղին շահագործման

¹¹⁰ 2006 թվականին ՌԴ իշխանությունները արգելեցին վրացական միջարքապրանքների վաճառքը երկրի տարածքում

հանձնվեց միայն 2017 թվականին, չնայած նրան, որ նախատեսվում էր այն ավարտին հասցնել արդեն 2010 թվականին ¹¹¹:

Թուրքական ընկերությունները ներդրումներ սկսեցին կատարել Վրաստանի տնտեսության տարբեր ոլորտներում: Մասնավորապես կարելի է առանձնացնել ներդրումները շինարարության և հիդրոէներգետիկ ծրագրերում: Թուրքական «TAV Havalimanları Holding A.Ş» ընկերության տնօրինության տակ են գտնվում նաև Բաթումի և Թբիլիսի միջազգային օդանավակայանները ¹¹²: Ըստ Վրաստանի զբոսաշրջության ազգային վարչության տվյալների, արդեն 2010 թվականին Վրաստան պետական սահմանը հատած մարդկանց մոտ 26.5%-ը կազմել են Թուրքիայի քաղաքացիները ¹¹³: Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստող քայլեր էին նաև 2005 թվականից առանց վիզա ճանապարհորդելու հնարավորությունը, 2007 թվականին ստորագրված ազատ առևտրի պայմանագիրը և 2012 թվականից ուժի մեջ մտած առանց անձնագրի պետական սահմանը հատելու հնարավորությունը ¹¹⁴: Թուրքական կապիտալի ներհոսքը Վրաստան, ինչպես նաև երկու պետությունների կողմից տնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված քաղաքականությունը նպաստել է նրան, որ 2002

¹¹¹Տե՛ս «Բաթում-Թբիլիսի-Վարսերկաթուղին հանձնվեց շահագործման», Ազատություն ռադիոկայան, 30.10.2017 (<https://goo.gl/d6yoJM>)


¹¹²Տե՛ս «TAV Havalimanları Holding A.Ş.»-ի պաշտոնական կայքում, 04.25.2018 (<https://goo.gl/ZYdaEU>)

¹¹³Վրաստան այցելած օտարերկյալ քաղաքացիների վիճակագրությունը տե՛ս «Վրաստանի ազգային զբոսաշրջության վարչության» կայքում հրապարակված հաշվետվություններում (<https://goo.gl/rYGVn4>)

¹¹⁴Թուրքիայի և Վրաստանի միջև գործող երկկողմ պայմանագրերի մասին տե՛ս Թուրքիայի ԱԳՆ պաշտոնական կայքում (<https://goo.gl/zKiX64>)

Թվականի համեմատ 2010 թվականին Վրաստանի և Թուրքիայի միջև ապրանքաշրջանառության ծավալները աճել են գրեթե 500%-ով :

Աղյուսակ 1 Ներկրման և արտահանման ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված էն Թուրքիայի վիճակագրությունի ստիտուտի հրապարակած պաշտոնական տվյալներից (<https://goo.gl/ioEyjx>)



Տնտեսության ոլորտում նման համագործակցությանը գուժահեռ Անկարան և Թբիլիսին կարևորություն էին տալիս նաև քաղաքական կապերի ամրապնդմանը: Այս մասին է խոսում այն, որ արդեն 2011 թվականի Վրաստանի Ազգային անվտանգության հայեցակարգում նշվում է, որ «Թուրքիան Վրաստանի տարածաշրջանային առաջատար գործընկերն է:

Թուրքիան աջակցում է Վրաստանի ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը»¹¹⁵: Երկու երկրների իշխանությունները համագործակցության մասին է խոսում նաև այն, որ Սև ծովի ավազանի երկրներից Թուրքիայի վարչապետը Ռուսաստանի Դաշնությանը հետո ամենահաճախ պաշտոնական այցերը ունեցել է դեպի Վրաստան¹¹⁶: Վրաստանը Թուրքիային կարևոր գործընկեր է համարում նաև ռազմական համագործակցության ոլորտում: «Թուրքիան, լինելով Յուրուսիսատլանտյան դաշինքի անդամ և տարածաշրջանային առաջատար երկիր, կարևոր ռազմական գործընկեր է Վրաստանի համար», - նշվում է Վրաստանի Ազգային Անվտանգության հայեցակարգում¹¹⁷: 1997 թվականին Վրաստանի և Թուրքիայի իշխանությունները ստորագրում են պաշտպանության ոլորտում համագործակցության համաձայնագիր, որը թարմացվում է 2000 թվականին: Պայմանագրի վերաստորագրումով նախատեսվում էր, որ 2.8 միլիոն ԱՄՆ դոլար օգտագործել Կոդորիում և Գորիում ռազմական վարժանքների կենտրոններ և Թբիլիսիի մոտակայքում հրաձգարան կառուցելու համար: 2001 թվականին Մարնետուլում վերաբացված ռազմաօդային ուժերի ռազմաբազան, որի վերականգման համար թուրքական կողմը տրամադրել էր մոտ 1.5 միլիոն դոլար¹¹⁸:

¹¹⁵ Տե՛ս Վրաստանի Ազգային Անվտանգության հայեցակարգը, էջ 20 (<https://goo.gl/gHR6Px>)

¹¹⁶ 2003-2011 թվականներին Թուրքիայի վարչապետը պաշտոնական այցով Վրաստանում եղել է 11 անգամ

¹¹⁷ Տե՛ս Վրաստանի Ազգային Անվտանգության հայեցակարգը, էջ 20 (<https://goo.gl/gHR6Px>)

¹¹⁸ Տե՛ս M. Çelikpala, “From a Failed State to a Weak One? Georgia and Turkish-Georgian Relations”, The Turkish Yearbook of International Relations, № 36, Ankara University Press, Ankara, 2005, pp. 189-192

Վերոնշյալ ոլորտներում Անկարայի և
Թբիլիսիի միջև սերտ համագործակցությանը
գուգահեռ երկկողմ հարաբերություններում
առկա են մի շարք խնդիրներ, որոնք պարբերաբար
հայտնվում են երկու երկրների
իշխանություններին ու շարունակական
կենտրոնում: Նման խնդիրների շարքում
առանցքայիններից մեկը կարելի է համարել
Աբխազական հիմնահարցը: Վրացական կողմի
դժգոհությունները հիմնական պատճառները
Աբխազիայի նկատմամբ թուրքական
իշխանությունների վարած քաղաքականությունն
է, ինչպես նաև Թուրքիայում բնակվող աբխազական
համայնքի գործունեությունը: Չնայած նրան, որ
թուրքական կողմը իր հայտարարություններում
բազմիցս նշել է, որ Աբխազիայի հարցում Անկարան
պաշտպանում է Վրաստանի տարածքային
ամբողջականության սկզբունքը, տարբեր
ժամանակահատվածներում նկատվում է
լարվածություն մեծացում երկկողմ
հարաբերություններում:

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան դարձավ
առաջին պետություններից մեկը, որ 1992 թվականի
մայիսի 21-ին պաշտոնական դիվանագիտական
հարաբերություններ հաստատեց Վրաստանի հետ,
ինչից հետո Էդ. Շևարնաձեին հրավիրեցին
մասնակցել հունիսի 25-27-ին Ստամբուլում
կայանալիք Սևծովյան ավազանի երկրների
ղեկավարների հանդիպմանը: Ստամբուլում
կայացած հանդիպման արդյունքում մասնակից 11
երկրները ստորագրեցին Սևծովյան տնտեսական
համագործակցության վերաբերյալ

հռչակագրի րը ¹¹⁹: Յատկանշական է, որ պայմանագրով
 նախատեսվող գործունեության ոլորտներին ցմեկը
 տարածաշրջանային անվտանգության
 պահպանության էր: Փաստացիորեն այս
 նախաձեռնությունը թուրքական
 իշխանությունները ցանկանում էին նաև
 միջևորդի դերը ստանձնել տարածաշրջանում առկա
 ազգամիջյան հակամարտություններում: Այս
 հարթակի շրջանակներում Վրաստանի հետ
 համագործակցությունը տարածաշրջանային
 անվտանգության ոլորտում, ինչպես նաև
 թյուրքիայաբնակաբնակաբնակաբնակաբնակաբնակ
 ձևավորված կապերը Աբխազիայի հետ թուրքիային
 հնարավորություն էին տալիս միջևորդի դեր
 ստանալ հակամարտության խաղաղ կարգավորման
 հարցում: Միևնույն ժամանակ թուրքիան
 հնարավորություն էր ստանում մրցակցել
 Ռուսաստանի հետ տարածաշրջանային
 ազդեցության հարցում: Լինելով
 տարածաշրջանում միակերկիրը, որը ունեւր հստակ
 արևմտամետ դիրքորոշում, թուրքիան իր
 տարածաշրջանային քաղաքականության հարցում
 նաև ստանում էր ԱՄՆ աջակցությունը, որի համար
 առաջնային էր տարածաշրջանում ռուսական
 ազդեցության վերահաստատման և Իրանի
 ազդեցության ամրապնդման կանխումը:

Տարածաշրջանային իր դիրքերը և
 ազդեցությունը ամրապնդելու
 անհրաժեշտությունը պայմանավորված թուրքիայի
 համար անմիջական կարևորությունն ստացավ

¹¹⁹Հռչակագրի անգլերեն տարբերակը տե՛ս Սևծովյան տնտեսական
 համագործակցության կազմակերպության պաշտոնական կայքում
 (<https://goo.gl/M4A64E>)

Վրաստանը, ինչի հետևանքով թուրքական կողմը
 արխագական հակամարտության հարցում փորձում
 էր գործել բավականին մեծ զգուշավորության
 պաշտոնական հայտարարություններում հանդես
 գալով կա՛մ Վրաստանի տարածքային
 ամբողջականության պաշտպանության, կա՛մ
 խնդրի խաղաղ լուծման կոչերով: Նման զգուշավոր
 քաղաքականության էր պայմանավորված, որ
 Աբխազիայի Գերագույն խորհրդի նախագահ Վ.
 Արձիսբայի գլխավորած պատվիրակության
 հոլլիսյան այցը Թուրքիա չարժանացավ
 պաշտոնական ընդունելության¹²⁰: Արդեն
 օգոստոսին սկսված պատերազմում պաշտոնական
 Անկարան խուսափեց նաև աջակցություն հայտնել
 Աբխազիային: Թուրքիայում բնակվող մեծաքանակ
 արխագական և չերքեզական համայնքների
 ակտիվ լոբիստական գործունեության պայմաններում,
 երկրի իշխանությունները չէին կարող վարել
 սուր ընդգծված միակողմանի քաղաքականության
 հօգուտ Վրաստանի: Դրանով կարելի է բացատրել
 թուրքական իշխանությունների երբեմն
 անտրամաբանական գործողությունները, որոնք
 դժգուշություններին ալիք էին բարձրացնում
 Վրաստանում:

Սեպտեմբերին 1-ին թուրքական խորհրդանուն
 Աբխազիայում սկսված վրաց-արխագական
 պատերազմի վերաբերյալ Վրաստանի հասցեին
 երկրի նախագահ Թ.Օզալին խորհրդարանականների
 հնչեցված քննադատությունները բավականին
 սուր արձագանք գտան վրացական կողմում:
 Իրավիճակը շտկելու համար Մոսկվայում

¹²⁰Տե՛ս Ա. Ավիձբա, “Проблемы военно-политической истории Отечественной войны в Абхазии (1992-1993 гг.)”, Книга I, Сухум, 2013, стр. 456

Թ ու ը թ ի ա յ ի հ ա ռ ց ե ռ ո Վ ժ ա մ ա ն ա կ ա Վ ո ռ
հ ա ն ձ ն ա կ ա տ ա ռ Յ . Ա թ ը ն ջ ա ն հ ա ն դ ե ս ե կ ա Վ
հ ա յ տ ա ռ ա ռ ու թ յ ա մ ք , ո ռ ու մ Թ . Օ զ ա լ ի
խ ո ռ հ ռ դ ա ռ ա ն ու մ ու ն ե ց ա ծ ե լ ու յ թ ի մ ա ս ի ն
լ ու ը ե ը ան Վ ա ն ե ց ա պ ա տ ե ղ ե կ ա տ Վ ու թ յ ու ն :
Պ ա շ տ ո ն ա պ ե ս տ ա ռ ա ծ Վ ա ծ հ ա յ տ ա ռ ա ռ ու թ յ ու ն ու մ
ն շ Վ ու մ է ռ , ո ռ «Թ ու ը թ ի ա յ ի ք ա ղ ա ք ա կ ա ն
ղ ե կ ա Վ ա ռ ու թ յ ու ն ը մ ի ա ն շ ա ն ա կ կ ո ղ մ է
տ ա ռ ա ծ ա շ ը ջ ա ն ու մ ձ ն ա Վ ո ռ Վ ա ծ մ ի ջ պ ե տ ա կ ա ն
ս ա հ մ ա ն ն ե ռ ի ան ք ա կ տ ե լ ի ու թ յ ա ն ը : Թ ու ը թ ի ա յ ի
ն ա խ ա գ ա հ ի հ ա յ տ ա ռ ա ռ ու թ յ ու ն ն ե ը ի
պ ա շ տ պ ա ն ու թ յ ու ն Ա թ խ ա գ ի ա յ ի
գ ո ռ ծ ո ղ ու թ յ ու ն ն ե ռ ի , ո ռ ը ն ե ռ կ ա յ ա ց Վ ու մ է
Ա թ խ ա գ ի ա յ ի Չ Ո Ի մ ա մ լ ո կ ե ն տ ռ ո ն ը , չ ե ն կ ա ռ ո ղ
հ ա մ ա պ ա տ ա ս խ ա ն ե լ ի ռ ա կ ա ն ու թ յ ա ն ը , ո ռ ո Վ հ ե տ ն
թ ու ը ք ա կ ա ն կ ա ռ ա Վ ա ռ ու թ յ ու ն ը չ ի կ ա ռ ո ղ ա ջ ա կ ց ե լ
Վ ռ ա ս տ ա ն ի տ ա ռ ա ծ ք ա յ ի ն ա մ ք ո ղ ջ ա կ ա ն ու թ յ ա ն
խ ա խ տ մ ա ն ը »¹²¹: Կ ա ռ ճ ժ ա մ ա ն ա կ ա ն ց Վ ռ ա ց ա կ ա ն
մ ա մ ու լ ու մ տ պ ա գ ը Վ ե ց ն ա ն Թ թ ի լ ի ս ի ու մ
թ ու ը ք ա կ ա ն հ յ ու պ ա տ ո ս ու թ յ ա ն հ ե ռ ք ու մ ը , ո ռ ու մ
ա ս Վ ու մ է ռ «Թ ու ը թ ի ա յ ի գ լ խ ա Վ ո ռ
հ յ ու պ ա տ ո ս ու թ յ ու ն ը Թ թ ի լ ի ս ի ու մ լ ի ա գ ո ռ Վ ա ծ է
հ ա յ տ ա ռ ա ռ ե լ , ո ռ ա յ դ հ ա յ տ ա ռ ա ռ ու թ յ ու ն ը
հ ո ռ ի ն Վ ա ծ է ն ա պ ա տ ա կ ու ն ի ս տ Վ ե ռ ե լ Թ ու ը թ ի ա յ ի և
Վ ռ ա ս տ ա ն ի մ ի ջ և ձ ն ա Վ ո ռ Վ ա ծ ք ա ռ ի դ ը ր ա ց ի ա կ ա ն
հ ա ռ ա ք ե ռ ու թ յ ու ն ն ե ը , մ ո լ ո ռ ու թ յ ա ն մ ե ջ գ ց ե լ
հ ա ս ա ռ ա կ ու թ յ ա ն ը : Կ ա ռ և ո ռ է ն ա ն հ ա յ տ ա ռ ա ռ ե լ , ո ռ
ս ե պ տ ե մ ք ե ռ ի 1-ի ն Թ . Օ զ ա լ ը ե լ ու յ թ ո Վ հ ա ն դ ե ս չ ի
ե կ ե լ մ ե ջ լ ի ս ի ն ի ս տ ի ժ ա մ ա ն ա կ »¹²²: Թ ու ը ք ա կ ա ն
դ ի Վ ա ն ա գ ի տ ա կ ա ն ա ռ ա ք ե լ ու թ յ ու ն ն ե ռ ի

¹²¹ Տ ե ' ու Ա. Авидзба, “Проблемы военно-политической истории Отечественной войны в Абхазии (1992-1993 гг.)”, Книга I, Сухум, 2013, стр.564
¹²² Տ ե ' ու «Демократическая Абхазия», № 4, 19 сентября 1992 г.

հայ տարարությունները փաստացիորեն հաստատեց նաև Վրաստանի նախագահ Էդ. Շևարդնաձեն, ով վրացական հեռուստատեսությունը տված հարցազրույցում նշել էր, որ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը իրեն ուղղված նամակում «իր մտահոգությունն է հայտնել Վրաստանում ստեղծած իրավիճակի վերաբերյալ», ընդօժեցնով, որ Վրաստանի տարածքային ամբողջականությունը առաջնային խնդիր է ¹²³:

Աբխազիայի հարցում թուրքական կողմի հայտարարություններին նման չհամակարգվածությունը կարելի է բացատրել նրանով, որ թուրքական իշխանությունները փորձում էին բավարարել Թուրքիայի աբխազական համայնքի պահանջները, միևնույն ժամանակ փորձելով չվնասել Վրաստանի հետ ձևավորվող հարաբերություններին: Չի կարելի բացառել նաև Ս. Լակոբայի տեսակետը, որ ի պաշտպանություն Վրաստանի թուրքական կողմի հայտարարությունները կատարվել էին Արևմուտքի երկրների հետ խորհրդակցություններից հետո ¹²⁴: Սակայն դրան գուցա հեն անհրաժեշտ է նկատել, որ Ս. Դեմիրելի գլխավորած կառավարության համար առաջնային անհրաժեշտություն էր Վրաստանի և Աբխազիայի միջև առկա տարածայնությունների կարգավորումը, ինչը անհնարին էր վրացական գիտնականներին ձեռնարկած գործողությունների պայմաններում: Թուրքական իշխանությունների համար որոշակիորեն անսպասելի էր Աբխազիայում

¹²³ Տե՛ս С. Лакоба, “Абхазия – де-факто или Грузия де-юре? О политике России в Абхазии в постсоветский период, 1991-2000 гг.”, “Slavic Research Center in Hokkaido University”, Саппоро, 2001

¹²⁴ Նույն տեղում

ընթացող ռազմական գործողությունների
արձագանքը Թուրքիայում: Չնայած նրան, Վ.
Արձիսբային իր այցելության ժամանակ չէր
հաջողվել ստանալ թուրքական
իշխանությունների աջակցությունը և
ընդունելությունը, այնուամենայնիվ հաջողվել
էր մեծ ոգևորություն և հետաքրքրվածություն
առաջ բերել թուրքիայաբնակ չերքեզական և
աբխազական համայնքներում: Վերջիններիս
իրականացրած ակցիաները բավականին մեծ
հանրային հնչեղություն էին առաջացրել
Թուրքիայում: Երկրում ստեղծված իրավիճակը
կարող է բացատրել, որ Ս. Դեմիրելի գլխավորած
կառավարությունը և թուրքական խորհրդարանը
որոշակիորեն խստացրեցին իրենց դիրքորոշումը
Աբխազիայում ընթացող իրադարձությունների
հարցում: Ս. Դեմիրելը և այլ բարձրաստիճան
պաշտոնյաներ սկսեցին հանդես գալ Աբխազիայի
հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու
ահնրաժեշտության կոչերով, իսկ թուրքական
խորհրդարանում հոկտեմբեր-նոյեմբեր
ամիսներին տեղի ունեցած մի շարք լսումներ
հակամարտությունում Թուրքիայի որդեգրած
քաղաքականության վերաբերյալ: Միևնույն
ժամանակ թուրքական և ռուսական կողմերի
նախաձեռնություններով Եվրախորհրդարանում
հոկտեմբերի 2-ին լսումներ տեղի ունեցած
Աբխազիայում ընթացող իրադարձությունների
վերաբերյալ¹²⁵:

Թուրքական կողմի նման գործողությունները
բավականին սուր քննադատության էին

¹²⁵ Տե՛ս Ա. Гурам, “Абхазия: хроника необъявленной войны”, часть 2, Москва, 1993, стр. 132

արժանանում Թբիլիսիում, սակայն պետք է արձանագրել, որ դրանք էական ազդեցություն չէին ունենում երկկողմ հարաբերություններովրա: Դրա մասին են խոսում նույն ժամանակահատվածում Անկարայի և Թբիլիսիի միջև կնքված միջպետական պայմանագրերը: Արդեն 1992 թվականին Ս. Դեմիրելը պաշտոնական այցով մեկնում է Թբիլիսի, որտեղ էդ. Շևարդնաձեի հետ կայացած հանդիպման արդյունքում երկու երկրները ստորագրում են «Բարեկամության և համագործակցության վերաբերյալ» պայմանագիրը: Ըստ Վրաստանի նախագահի, այս պայմանագիրը «որակապես նոր գլուխ է բացում թուրք-վրացական բազմադարյան հարաբերություններին պատմությունում»¹²⁶: Նման զարգացումները արտացոլում էին այդ տարիների թուրքական մոտեցումը Աբխազական հակամարտության հարցում: Թուրքական իշխանությունները ներքին և արտին պահանջները բավարարելու համար հաճախ պաշտոնական մեթոններին հանդես էին գալիս Աբխազիայում իրավիճակի խաղաղ կարգավորման կոչերով, իսկ երբեմն նաև վրացական գործողություններին քննադատությամբ, սակայն շարունակում էր քայլ առ քայլ ամրապնդել Վրաստանի հետ հարաբերությունները: Միևնույն ժամանակ չի կարելի անուշադրության մատնել այն փաստը, որ Անկարան նաև փորձում էր հանդես գալ հակամարտությունում հնարավոր միջնորդի դիրքերին:

¹²⁶ Տե՛ս «Демократическая Абхазия», № 15, 25.11.1992

Վրաստանի իշխանությունները նույնպես
 Թուրքիային դիտարկում էին, որպես հնարավոր
 միջևորդ ստեղծված իրավիճակում: Նոյեմբերի 2-
 ին պաշտոնական Թբիլիսիսի դիմում է Թուրքիային
 Աբխազիայի հետ հարաբերություններում
 միջևորդական առաքելություն կատարելու
 համար¹²⁷: Ի պատասխան վրացական կողմի դիմումի
 թուրքական ԱԳՆ-ն անմիջապես
 խորհրդակցություններ է նախաձեռնում
 Աբխազիայում դիտորդական առաքելություն
 իրականացնելու համար ձևավորված
 խորհրդարանական խմբի հետ: Արդեն նոյեմբերի 3-
 ին թուրքական իշխանությունների
 նախաձեռնությամբ «Կարմիր կիսալուսնի»
 կազմակերպությունը 1000 տոննայի քարե գործական
 օգնություն է ուղարկում Աբխազիային և
 Վրաստանին¹²⁸: Սակայն թուրքական կողմին
 չհաջողվեց հաջողություն հասնել երկու կողմերի
 միջև խաղաղության հասնելու գործընթացում,
 ինչից հետո հակամարտության խաղաղ
 կարգավորման հիմնական միջևորդը դարձավ
 Ռուսաստանի Դաշնությունը:

Աբխազական ուժերի կողմից Սուխումի
 գրավումից և 1994 թվականի Թբիլիսիի և Վրաստանի
 միջև կնքված զինանադադարից հետո աբխազական
 հիմնահարցը կորցրեց իր սուր նշանակությունը
 վրաց-թուրքական հարաբերություններում:
 Այնուամենայնիվ թուրքական
 իշխանությունները շարունակում էին
 պաշտպանել Վրաստանի տարածքային
 ամբողջականությունը և չէին ճանաչում

¹²⁷ Տե՛ս Ա. Гурам “Абхазия: хроника необъявленной войны”, часть 3, Москва, 1993, стр. 132

¹²⁸ Նույն տեղում

Աբխազիայի անկախությունը: Եթե դիտարկենք Թբիլիսիի ունեցած տնտեսական և քաղաքական նշանակությունը Անկարայի համար, ապա ակնհայտ է դառնում, որ շատ հաճախ թուրքական իշխանությունները ստիպված էին զգալիորեն սահմանափակել իր քաղաքացիների գործունեությունը Աբխազիայում և պաշտոնապես հանդես գալ Վրաստանի տարածքային ամբողջականությունը պաշտպանող հայտարարություններով: Վրաստանի հետ հարաբերությունների խորացմամբ և ռազմավարական համագործակցությունամբ Երպայմանավորված, որ սկսած 1990-ականների երկրորդ կեսից թուրքական իշխանությունները հանդես եկան մի շարք նախաձեռնություններով, որոնք Եպես խոչընդոտում էին Աբխազիայի հետ առևտրի իրականացմանը¹²⁹:

Ձեռնարկած միջոցառումները բավականին զգալի վնաս հասցրեցին թուրք-աբխազական հարաբերություններին, սակայն նույնիսկ շրջափակման պայմաններում թուրքական նավահանգիստներից շատ հաճախ նավերը նավարկում էին դեպի Աբխազիա: Թուրքական իշխանությունների նման մեղմ վերաբերմունքը արժանանում էր Վրաստանի քննադատությունը, որը ամեն կերպ փորձում էր խոչընդել ցանկացած պետություն հնարավոր առևտրային գործունեությանը Աբխազիայում: Այդ նպատակին էր ուղղված 2004 թվականի օգոստոսի 3-ին Վրաստանի նախագահի ստորագրած «No. 313» հրամանագիրը, որով արգելվում էր նավարկությունը դեպի Աբխազիա և

¹²⁹ Տե՛ս «Abkhazian access to turkey curbed», The Jamestown foundation, 24.09.1996 (<https://goo.gl/bQONzz>)

աբխազական նավահանգիստներին մոտակայքում¹³⁰: Այս համատեքստում Թուրքիայի և Վրաստանի հարաբերություններում պարբերաբար խնդիրներ էին նկատվում Աբխազիայի մոտակայքում թուրքական նավերի ձերբակալությունների հետ կապված: Վրացական ուժերի գործունեության արդյունքում արդեն 1999-2003 թվականներին ընթացքում ձերբակալվել էր ավելի քան 40 նավ, իսկ 2004-2006 թվականներին դրանց թիվը ավելացավ ևս 22-ով¹³¹: Թուրքական կողմը այս փաստը բացատրում էր նրանով, որ Աբխազիա ուղևորվող նավերի մեծ քանակը կապված է երկրում գործող աբխազական համայնքի հետ: Աբխազիայում Թուրքիայի քաղաքացիների առևտրային գործունեության խնդիրը վրաց-թուրքական օրակարգում առավել ևրվածությունն առաջ բերեց 2009-2010 թվականներին: Նման ևրվածությունն աճի պատճառ դարձավ 2009 թվականի օգոստոսի 24-ին թուրքական «Buket» ևստանավի առգրավումը Վրաստանի սահմանապահ ծառայությունների կողմից: Նավապետին վրացական կողմը մեղադրանք առաջադրեց Աբխազիայի նավահանգիստ չարտոնագրված մուտք գործելու համար և դատապարտեց 24 տարվա ազատազրկման¹³²: Արդյունքում թուրքական կողմը մեղադրանքներ հնչեցրեց Վրաստանի հասցեին, որ նավը ձերբակալվել է ազատ ջրերում: Վրացական կողմի մեկնաբանությունները, որ նավը ձերբակալվել է Վրաստանի բացառիկ տնտեսական գոտում,

¹³⁰ Տե՛ս S. Kapanadze, “Turkish Trade with Abkhazia: An Apple of Discord for Georgia”, Turkish Policy Quarterly, Vol. 13, № 3, Istanbul, 2014, p. 64

¹³¹ Տե՛ս H. Kanbolat, “Georgia barrier to Turkish ships in Black Sea”, Abkhaz World, 01.09.2009 (<https://bit.ly/2MyYEJs>)

¹³² Տե՛ս “Georgia Detains Ship Captain Over Abkhazia”, Civil Georgia, 25.08.2009 (<https://goo.gl/LBuKX4>)

թուրքական կողմը համարում էր անբավարար՝ դատապարտելով Վրաստանի սահմանապահների գործողությունները: 2009-2010 թվականներին վրացական կողմը նույն հիմնավորմամբ իր վերահսկողություն տակ էր վերցրել ևս 4 թուրքական լաստանավ: Չնայած նրան, որ նախկինում էլ վրացական սահմանապահ ծառայությունները պարբերաբար ձերբակալում էին Աբխազիա ուղևորվող նավերը, սակայն վերոնշյալ դեպքերում վրացական շխանությունները որդեգրել էին սկզբունքորեն ավելի խիստ մոտեցումներ (ձերբակալված նավերը առգրավվում էին, անձնակազմը ենթարկվում էր վարչական տուգանքների, իսկ նավապետերը կալանավորվում էին):

Կարելի է դիտարկել, որ Աբխազիայում թուրքական գործունեության հարցում վրացական կողմի դիրքորոշման խստացումը արձագանքներ էր 2008 թվականի «Հինգօրյա պատերազմին» պաշտոնական Անկարայի որդեգրած քաղաքականությունը: Մասնավորապես վրացական շխանությունների քննադատության հիմնական պատճառը զինված բխումների ժամանակ և դրանից հետո Թուրքիայի դիրքորոշումն էր: Պատերազմի առաջին օրերին Թուրքիան փորձում էր չպաշտպանել կողմերից որևէ մեկին: «Մենք թուրք չենք տա Թուրքիային ուղղորդել մի կողմից դեպի մյուսը: Մենք կգործենք Թուրքիայի ազգային շահերին համապատասխան», -նշվում էր Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանի հայտարարությունում¹³³:

¹³³ Տե՛ս Ի. Kalın, “Turkey and NATO: Is non-alliance an option?”, Today’s Zaman, 04.09.2008, (<https://goo.gl/88Jyef>)

Միևնույն ժամանակ Ռուսաստանի և Վրաստանի միջև ընթացող ռազմական գործողությունների ժամանակ թուրքական կողմը ժամանակավորապես արգելեց ԱՄՆ ռազմականների մուտքը Սև ծովի ավազան՝ հիմնվելով Մոնտրոյի համաձայնագրի կետերի վրա¹³⁴: Վրաստանի իշխանությունները նաև թերահավատություն Եիս մոտենում ռազմական գործողություն հաջորդող շրջանում Թուրքիայի վարած քաղաքականությանը: Այս մասին Ե խոսում, որ Վրաստանը դարձավ միակ պետությունը, որը սկզբունքորեն մերժեց «Կովկասի կայություն և համագործակցության հարթակի» մաս կազմելը: Յարթակի գաղափարը ներկայացնելու համար Թբիլիսիի Երպաշտոնական այցով ժամանել Ռ.Թ. Երդողանը: Վրացական կողմը այս մերժումը հիմնավորում էր նրանով, որ իրենք չեն կարող բանակցային սեղանի շուրջ նստել մի պետության հետ, որը «բռնազավթել է իրենց տարածքների 20%-ը»¹³⁵: Ակնառու է, որ վրացական իշխանությունները Թուրքիայից, որպես Յյուսիսատլանտյան դաշինքի անդամ երկիր և ռազմական ուժերում կարևոր գործընկեր, ակնկալում էին վերջինիս աջակցությունը Ռուսաստանի հետառերեսման պարագայում:

Դեպքերի նման զարգացումը հանգեցրեց նրան, որ 2009-2010 թվականներին վրաց-թուրքական հարաբերություններում նկատվում էր հարաբերական «սառեցում»: Թուրքիայի քաղաքացիների գործունեության և նավերի գրավման վերաբերյալ քննարկումները կարևոր տեղ սկսեցին զբաղեցնել այդ տարիների երկկողմ

¹³⁴ Տե՛ս Zeyno Baran, “Will Turkey Abandon NATO?”, The Wall Street Journal, 29.08.2008 (<https://goo.gl/Dg87E5>)
¹³⁵ Տե՛ս “Erdogan Back Georgian Sovereignty. Caucasus Platform”, Today’s Zaman, 15.08.2008

հարաբերություններում: Երկկողմ մի շարք քննարկումներ տեղ գտան Վրաստանի նախագահ Մ. Սաակաշվիլիի և Թուրքիայի վարչապետ Բ. Թ. Էրդոգանի միջև, ինչպես նաև թուրքական մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ այցելեցին Վրաստան: Երկկողմ հարաբերությունները արևմտյան կապված Աբխազիայի հետ հանգեցրեց նրան, որ թե՛ Թուրքիան, թե՛ Վրաստանը նախաձեռնեցին բանակցային գործընթաց կապված Աբխազիայում թուրքական տնտեսական գործունեության վերաբերյալ: 2010 թվականի ընթացքում մի շարք հանդիպումներ տեղի ունեցան Անկարայում և Բաթումիում: Ըստ վրացական կողմից բանակցային գործընթացին մասնակցած Սերգի Կանապաձեի, չնայած նրան, որ կողմերը մոտ էին այս խնդրի շուրջ համաձայնության գալուն, սակայն դա այդպես էլ տեղի չունեցավ: Չատկանշական է այն հեղինակի նաև այն միտքը, որ թե՛ թուրքական, թե՛ վրացական պատվիրակությունները մեծապես գիտակցում էին, որ Աբխազիայում տնտեսական գործունեության իրականացումը դրական ազդեցություն կարող է ունենալ երկու երկրների համար¹³⁶: Թուրքիայի պարագայում դա հնարավորություն էր տալիս արդեն առանց որևէ իրավական սահմանափակման համաձայն երկկողմ ընթացակարգերի ազատ գործունեություն ծավալել Աբխազիայում: Միևնույն ժամանակ թուրքական իշխող ուժի նման հանգուցալուծումը հնարավորություն կտար ստանալ երկրում ապրող աբխազական և չերքեզական համայնքի աջակցությունը: Իր հերթին Վրաստանի

¹³⁶Տե՛ս S. Kapanadze, “Turkish Trade with Abkhazia: An Apple of Discord for Georgia”, Turkish Policy Quarterly, Vol. 13, № 3, Istanbul, 2014, p. 64

համար Աբխազիայում Թուրքիայի ազատ գործունեությունը հնարավորություն կտար հակակշիռ ստեղծել Ռուսաստանին:

Նմանօրինակ տրամադրությունների մասին են խոսում թուրք պաշտոնյաների Աբխազիա կատարած այցելությունները: Ակնհայտ է, որ այս կերպ Թուրքիան ցանկանում է բարձրացնել իր դերը տարածաշրջանում, այդ թվում, նաև Աբխազիայում: Անկարայի համար կարևորագույն խնդիր է Աբխազիայի դեմ կիրառվող ծովային շրջափակման խնդիրը, որը թուրք դիվանագետները փորձում են լուծել Վրաստանի և Աբխազիայի շխանությունների հետ ունեցած հանդիպումներում:

**2.2 ԱԲԽԱԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՆԸ ԹՈՒՐԹ-ՌՈՒՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1991-2010
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Աբխազական հիմնահարցը առանձին տեղ է զբաղեցնում նաև Թուրքիայի և Ռուսաստանի հարաբերություններում: Երկկողմ հարաբերություններում Աբխազիայի դերը առաջին հերթին անհրաժեշտ է դիտարկել երկու պետությունների կողմից Հարավային Կովկասի նկատմամբ որդեգրած տարածաշրջանային քաղաքականության համատեքստում: ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի և Ռուսաստանի միջև պայքար ձևավորվեց նախկինում խորհրդային միությունում կազմող մի շարք շրջաններում ազդեցություն համար, որոնց թվում էին Հարավային Կովկասը և Կենտրոնական Ասիան: Եթե Ռուսաստանը նպատակ ուներ վերահաստատել ԽՍՀՄ

փլ ու գ ու մ ի ց ո ղ ո շ ա կ ի ո ղ ե ն թ ու լ լ ա ց ա ծ
հ ե ղ ի ն ա կ ու թ յ ու ն ը , ա պ ա Թ ու լ թ ք ի ա ն ձ գ տ ու մ է ղ ի ղ
ու ն ե ց ա ծ պ ա տ մ ա կ ա ն , մ շ ա կ ու թ ա յ ի ն և կ ղ ո ն ա կ ա ն
կ ա պ ե ղ ի մ ի ջ ո ց ո վ ա մ ղ ա պ ն դ ե լ ի ղ դ ի ղ թ ե ղ ղ
վ ե ղ ո ն շ յ ա լ շ ղ ջ ա ն ն ե ղ ի պ ե տ ու թ յ ու ն ն ե ղ ու մ :
Պ ա տ ա հ ա կ ա ն չ է , ո ղ Յ ա ղ ա վ ա յ ի ն Կ ո վ կ ա ս ու մ
ա գ դ ե ց ու թ յ ու ն ն ե ղ ի պ ա յ ք ա ղ ի հ ա ղ ց ու մ գ լ խ ա վ ո ղ
խ ն դ ի ղ ղ տ ա ղ ա ծ ա շ ղ ջ ա ն ու մ ը ն թ ա ց ո ղ
հ ա կ ա մ ա ղ ա ղ ու թ յ ու ն ն ե ղ ի ն : Դ ղ ա ն ո վ է ղ
պ ա յ մ ա ն ա վ ո ղ ղ ա ծ , ո ղ 90-ա կ ա ն ն ե ղ ի ն ե ղ կ կ ո ղ մ
հ ա ն դ ի պ ու մ ն ե ղ ու մ հ ա ճ ա խ ք ն ն ա ղ կ վ ո ղ թ ե մ ա ն ե ղ ի ց
է ի ն Լ ե ո ն ա յ ի ն Ղ ա ղ ա ք ա ղ ու մ և Ա ք խ ա գ ի ա յ ու մ
ը ն թ ա ց ո ղ պ ա տ ե ղ ա գ մ ն ե ղ ղ : է թ ե Ա ղ ց ա խ ի
հ ի մ ն ա հ ա ղ ց ու մ պ ա շ տ ո ն ա կ ա ն Ա ն կ ա ղ ա ն ո ղ պ ե ս
կ ա ն ո ն հ ա ն դ ե ս է ղ գ ա լ ի ս ա դ ղ ղ ե ջ ա ն ա կ ա ն կ ո ղ մ ի
ա ջ ա կ ց ու թ յ ա մ ք , ա պ ա Ա ք խ ա գ ի ա յ ու մ հ ա ղ ց ու մ
թ ու ղ թ ա կ ա ն կ ո ղ մ ը ձ գ տ ու մ է ղ
հ ա մ ա գ ո ղ ծ ա կ ց ու թ յ ա ն ե գ ղ ե ղ գ տ ն ե լ
հ ա կ ա մ ա ղ ա ղ ու թ յ ա ն ու ղ ո ղ ա կ ի և ա ն ու ղ ո ղ ա կ
մ ա ս ն ա կ ի ց ն ե ղ ի հ ե տ :

Մ ի ն ն ու յ ն ժ ա մ ա ն ա կ ա ն հ ղ ա ժ ե շ տ է ը ն դ գ ծ ե լ , ո ղ
ա ղ դ ե ն 1980-ա կ ա ն ն ե ղ ի ն Մ . Գ ո ղ ղ ա չ ո վ ի ա ո ա ջ ք ա շ ա ծ
«Վ ե ղ ա կ ա ու ց մ ա ն » ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ու ն ը և «է ղ կ ա թ ե
վ ա ղ ա գ ու ղ ղ ի » վ ե ղ ա ց ու մ ը Մ ո ս կ վ ա յ ի և Ա ն կ ա ղ ա յ ի
հ ա ղ ա ք ե ղ ու թ յ ու ն ն ե ղ ու մ գ գ ա լ ի դ ղ ա կ ա ն
տ ե ղ ա շ ա ղ ղ ե ղ ա ո ա ջ ք ե ղ ե ց ի ն , ո ղ ո ն ք ա ն մ ի ջ ա կ ա ն
ա գ դ ե ց ու թ յ ու ն է ղ թ ո ղ ն ու մ դ ե ու ս ա յ դ ժ ա մ ա ն ա կ
ԽՍՀՄ մ ա ս կ ա գ մ ո ղ Ա ք խ ա գ ի ա յ ի ի ն ք ն ա վ ա ղ մ ա ղ ղ ի
վ ղ ա : 1982-1989 թ վ ա կ ա ն ն ե ղ ի ը ն թ ա ց ք ու մ
ս տ ո ղ ա գ ղ վ ե ց ի ն մ ի շ ա ղ ք ե ղ կ կ ո ղ մ պ ա յ մ ա ն ա գ ղ ե ղ ,
ո ղ ո ն ք հ ե տ ա գ ա յ ու մ կ ա ղ ո ո ղ հ ի մ ք դ ա ղ ձ ա ն
Թ ու ղ թ ք ի ա յ ի և Ռ ու ս ա ս տ ա ն ի հ ա ղ ա ք ե ղ ու թ յ ու ն ն ե ղ ի

համար : Մոսկվայի և Անկարայի
 հարաբերությունների ամրապնդմանն Երևանում
 Թուրքիայի նախագահ Թ.Օզալի և Մ.Գարբաշևիչի միջև
 կայացած հանդիպումը Մոսկվայում, որի
 արդյունքում մարտի 16-ին Երկու երկրների միջև
 կնքվեց «Ընկերության, հարևանության և
 համագործակցության մասին պայմանագիրը»¹³⁷ :
 Հարաբերությունների նման զարգացումները
 հնարավորություն տվեցին արդեն իսկ ԽՍՀՄ
 գոյության տարիներին թուրքական
 ընկերությունների գործունեություն
 ծավալել ԽՍՀՄ տարածքում՝ մասնակցելով տարբեր
 ծրագրերի իրականացմանը և նպաստելով մասնավոր
 ձեռնարկությունների թվի աճին : Տնտեսական
 ոլորտում թուրք-խորհրդային համագործության
 արդյունքում Աբխազիայում թուրքական
 ընկերության կողմից 1980-ականների վերջին
 կառուցվում է մինչև այժմ գործող Պիցուկայի
 «Սամշիտովայա Ռոշչա» հայտնի հյուրանոցը, որը
 բացվում է վրաց-աբխազական պատերազմի
 նախաշեմին¹³⁸ : Անհրաժեշտ է նաև նշել, որ այդ
 տարիներին Թուրքիայում բնակվող աբխազական
 համայնքի ներկայացուցիչները կրկին
 հնարավորություն ստացան այցելել իրենց
 պատմական հայրենիք, ինչը հետագայում ամուր
 հիմքեր նախապատրաստեց հայրենադարձության և
 ներդրումային ծրագրերով հանդես գալու համար :
 Թուրքիայի և ԽՍՀՄ հարաբերությունների
 սերտացումը տնտեսության տարբեր ոլորտներում
 այդ տարիներին պայմանավորված էր Մ.Գարբաշևիչի

¹³⁷ Պայմանագրի ռուսերեն տարբերակը տե՛ս Ռուսաստանի ԱԳՆ
 պաշտոնական կայքում (<https://bit.ly/2s4co79>)

¹³⁸ Տե՛ս B. Gültekin, “Questioning the Embargo on Abkhazia: Turkey’s Role in Integrating into The Black Sea Region”, Turkish Policy Quarterly, Vol 8, № 4, Istanbul, 2009, p. 77

կողմից շուկայի ազատականացմանը և մասնավորեցմանը ուղղված քաղաքականությունը: Անհրաժեշտ է նշել, որ արդեն ԽՍՀՄ փլուզումից հետո իրավահաջորդության սկզբունքով այս պայմանագրերի գործունեությունը տարածվեց նաև Թուրքիայի և Ռուսաստանի Դաշնության վրա:

Մոսկվայի և Անկարայի միջև երկկողմ հարաբերությունները զարգացման նոր փուլ թևակոխեցին ԽՍՀՄ փլուզումից հետո: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Թուրքիան կրկին հնարավորություն էր ստանալ ու Ռուսաստանի հետ մրցակցել Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայի թյուրքական պետություններում ազդեցության ամրապնդման հարցում: Նման դեպքերի զարգացմանը նպաստում էր նաև այն փաստը, որ Թուրքիան հանդիսանում էր Հյուսիսատլանտյան դաշինքի անդամ և դաշնակցային հարաբերություններ ուներ Արևմուտքի երկրների՝ մասնավորապես ԱՄՆ հետ: Սակայն հատկանշական է, որ կողմերը ազդեցության համար պայքարի փոխարեն շարժվեցին տնտեսության և այլ ոլորտներում համագործակցության մեծացմանն ուղղված ճանապարհով: 1992 թվականի առաջին վեց ամիսների ընթացքում փոխադարձ այցերով փոխանակվեցին երկու երկրների ԱԳ նախարարները: Հատկանշական է, որ երկու պետությունների համար առանցքային դերում էր տնտեսական ոլորտում համագործակցության սերտացումը: Միայն 1992-1996 թվականները ընկած հատվածում Թուրքիայի և Ռուսաստանի միջև ստորագրվեցին տասնհինգ պայմանագրեր և հոլշագրեր, որոնք վերաբերվում

Է ի ն համագործակցությանը գիտություն, կրթություն, մշակույթի, տեխնիկայի և տնտեսություն ոլորտներում, ինչպես նաև գինված ուժերի անձնակազմերի փորձի փոխանակման ծրագրերի իրականացմանը¹³⁹: Նույն ժամանակահատվածում նաև 4 անգամ Մոսկվայում պաշտոնական հանդիպումներ են տեղի ունենում Թուրքիայի վարչապետի կամ նախագահի մակարդակով¹⁴⁰: Յանդիպումների նման հաճախակիությունը մի շարք դրդապատճառների հետ զուգահեռ կարելի է կապել երկկողմ հարաբերություններում ամառային հարթությունների և պետական շահերի մատնանշման և համագործակցության հնարավոր ոլորտների տարբերակման անհրաժեշտությամբ: Այս ամենին զուգահեռ ԽՍՀՄ փլուզումը երկու երկրների հարաբերությունների օրակարգում ամառ բերեց մի շարք խնդիրներ, որոնցից ամառին հերթին հարկ է առանձնացնել Յարավային Կովկասում ազդեցության հաստատման համար մրցակցությունը Ռուսաստանի և Թուրքիայի միջև: Այս համատեքստում երկու պետությունների համար ամանցքային դարձավ Աբխազիայի հիմնախնդրի շուրջ մոտեցումների հստակեցումը: Կարելի է փաստել, որ թուրքական իշխանությունները որպես իրենց ազդեցության հիմնական գործիք սկսեցին դիտարկել նորանկախ պետությունների հետ տնտեսական սերտ հարաբերությունները: Դրան հակառակ Ռուսաստանը ձգտում էր կարճ

¹³⁹Տե՛ս Թուրքիայի Յանրապետության (<https://goo.gl/ghS82Z>) և Ռուսաստանի Դաշնություն (<https://goo.gl/yCwB9H>) ԱԳՆ պաշտոնական կայքերում
¹⁴⁰Նույն տեղում

Ժամանակում վերականգնել խորհրդային միություն փլուզումից հետո տարածաշրջանում թուլացած իր ազդեցությունը, ինչի համար օգտագործում էր տարբեր գործիքակազմ, իսկ երբեմն նաև դիմում էր ուժի կիրառության: Նման մոտեցումները նպաստեցին նրան, որ թուրքական կողմը Աբխազիայի հակամարտության կարգավորման հարցում առաջնային տեղ էր տալիս Ռուսաստանի հետ համագործակցությանը:

Այս համատեքստում ուշադրություն է արժանի 1992 թվականի օգոստոսի 26-ին Անկարայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրված խորհրդակցությունների մասին արձանագրությունը¹⁴¹: Նախատեսվում էր, որ կողմերը պետք է ստեղծեն խորհրդակցության մեխանիզմներ, որոնց նպատակն էր նպաստել ձեռք բերված պայմանավորվածությունների համագործակցության ամրապնդումը: Մասնավորապես փաստաթղթում նաև նշվում էր, որ Թուրքիան և Ռուսաստանը այս խորհրդակցությունների արդյունքում նաև պետք է քննարկվեն տարածաշրջանային և միջազգային խնդիրները: Այս պայմանագրի կնքումը, ինչպես նաև ավելի վաղ Ստամբուլում «Սևծովյան տնտեսական համագործակցության հռչակագրի» ստորագրումը մատնանշում էին թուրքական կողմի պատրաստակամությունը տարածաշրջանային հարցերի վերաբերյալ համակարգված քաղաքականության մշակել Ռուսաստանի հետ: Փաստացիորեն արձանագրությունների նախատեսվում էր, որ Աբխազական հակամարտության

¹⁴¹Տե՛ս А. Авидзба, “Проблемы военно-политической истории Отечественной войны в Абхазии (1992-1993 гг.)”, Книга I, Сухум, 2013, стр. 563

հարցով Ռուսաստանը և Թուրքիան պետք է գործել ն համակարգված, ինչպես երկկուստեք տեղեկացված լինելն միմյանց գործունենությունից խնդրահարույց հարցերի շուրջ: Բայց միևնույն ժամանակ ստորագրված փաստաթղթերը թուրքական կողմին չէր խանգարում հարաբերություններ կառուցել տարածաշրջանի պետություններին հետ:

Աբխազական հակամարտության և տարածաշրջանային մյուս խնդիրների հարցում թուրքական կողմին մանքաղաքականությունը նաև կապված էր եներգակիրների ոլորտում դեռևս 1980-ականների վերջից Մոսկվայից ունեցած զգալի կախվածության հետ: 1984 թվականին Մոսկվայի և Անկարայի միջև կնքված համաձայնագրի հիման վրա 1986 թվականի փետրվարին թուրքական «Բոթաշ» կազմակերպության հետ ստորագրված պայմանագրով նախատեսվում էր գազի մատակարարման ծավալները տարեկան աճել ացնել վեց միլիարդ խորհանարդ մետրով¹⁴²: Ոլորտում հարաբերություններին խորացմանն էր ուղղված 1997 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված միջպետական պայմանագիրը Սև ծովի ընդերքով անցնող «Երկնագույն հոսանք» խողովակաշարի կառուցման վերաբերյալ, որով մինչև 2025 թվականը Ռուսաստանը Թուրքիային պետք է մատակարարեր 365 միլիարդ խորհանարդ մետր գազ¹⁴³: 2001 թվականի մայիսին սկսվեց 396 կմ երկարությամբ նոր խողովակաշարի կառուցումը, որը ավարտվեց 2002 թվականի մայիսին: Արդեն նույն տարվա դեկտեմբերին գազամուղը հանձնվեց

¹⁴² Տե՛ս ОАО «Газпром»-ի կողմից հրապարակվող կազմակերպական բրյոշուրներում (<https://bit.ly/2KeP06E>)

¹⁴³ Տե՛ս «Об Итогах Визита Делегации ОАО «Газпром» В Турцию», Ռուսաստանի Դաշնություն <https://goo.gl/14E6at>

շահագործման¹⁴⁴: Էներգակիրների ոլորտում
 Ռուսաստանից ունեցած կախվածությունը չէր
 կարող մտահոգություններ չառաջացնել
 թուրքական քաղաքական շրջանակներում: Պետք է
 արձանագրել, որ թուրքական կողմը ստեղծված
 իրավիճակում ելքը տեսնում էր Վրաստանի և
 Ադրբեյջանի հետ նավթի և գազի արտահանման
 ոլորտում համատեղ նախագծերի իրականացման
 մեջ: Ռուսաստանի Էներգետիկ ազդեցությունը
 նվազեցնելու էր ուղղված Վրաստանի, Ադրբեյջանի
 և Կենտրոնական Ասիայի երկրների
 մասնակցությամբ «Արևելք-Արևմուտք Էներգետիկ
 միջանցքի ձևավորման քաղաքականությունը, որի
 շրջանակներում կառուցվեցին Բաքու-Թբիլիսի-
 Ջեյհան նավթամուղը և Բաքու-Թբիլիսի-Էրզրում
 գազամուղը: Վերոնշյալ ծրագրերի իրականացումը
 նաև հնարավորություն էր տալիս թուրքական
 կողմին տնտեսական քաղաքիչի միջոցով
 մեծացնել իր նշանակությունը Յարավային
 Կովկասի պետությունների շրջանում և
 միաժամանակ նվազեցնել Ռուսաստանից
 Էներգակիրների ոլորտում ունեցած
 կախվածությունը: Միևնույն ժամանակ այս
 Էներգետիկ ծրագրերի իրականացումը և
 Ռուսաստանից Էներգակիրների ոլորտում
 ունեցած կախվածության թուլացումը Անկարային
 թույլ կտա ավելի հիմնավոր ներգրավվել
 տարածաշրջանային հակամարտությունների, այդ
 թվում նաև Աբխազիայի հակամարտության,
 կարգավորման գործընթացին:

¹⁴⁴ «Երկնագույն հոսանք» խողովակաշարի մասին ավելի
 մանրամասն տե՛ս «Газпром»-ի պաշտոնական կայքում (<https://goo.gl/zInMir>)

1992-1993 թվականներին վրաց-աբխազական
 պատերազմի տարիներին և դրան հաջորդող
 ժամանակաշրջանում Թուրքիայի և Ռուսաստանի
 մոտեցումները Աբխազական հակամարտության
 վերաբերյալ բավականին նման էին միմյանց:
 Առաջին հերթին դա կարելի է բացատրել թե՛
 Թուրքիայում, թե՛ Ռուսաստանում առկա
 նույնանման խնդրի առկայությամբ: Թուրքիայի
 պարագայում խնդրահարույց էր քրդական հարցը,
 իսկ Ռուսաստանում 1990-ականներին կարևոր խնդիր
 էր Չեչենիան: Դրանով էր պայմանավորված նաև
 երկկողմ համագործակցությունը
 ազդարդյունաբերության ոլորտում: Արդեն 1992
 թվականին Մոսկվայում կայացած Բ. Ելցինի և Թ.
 Օզալի հանդիպման արդյունքում
 պայմանավորվածություն էր ստեղծվել
 Թուրքիայի 300 միլիոն ԱՄՆ դոլարին
 համապատասխան զինտեխնիկա մատակարարելու
 մասին: Ներկրվող ապրանքների թվում էին
 ուղաթիռներ, զրահամեքենաներ, ինքնաձիգներ,
 նռնակատներ և այլ զինատեսակներ: Չինամթերքի
 մատակարարումը շարունակվեց նաև արդեն հաջորդ
 տարիներին ընթացքում: Փաստացիորեն Թուրքիան
 դարձավ ՅՆՍԻՍատլանտյան դաշինքի անդամ
 առաջին երկիրը, որը զինամթերք էր գնում
 Ռուսաստանից: Չատկանշական է, որ թուրքական
 կողմը ստացված զինամթերքը օգտագործում էր
 երկրի ներսում գործող քրդական ուժերի դեմ
 պայքարում¹⁴⁵: Ռազմական ոլորտում
 համագործակցության էր ուղղված նաև 2002
 թվականի հունվարին երկու

¹⁴⁵Տե՛ս G. Winrow, “Turkey and the Newly Independent States of Central Asia and the Transcaucasia”, MERIA, Vol. 01, № 02, Herzliya, 1997, p. 4

կառավարություններին կողմից ստորագրված պայմանագիրը՝ ռազմական ու լոգիստիկ համագործակցության խորացման վերաբերյալ¹⁴⁶:

Արդեն սկսած 2000-ականների սկզբին նկատվող թուրք-վրացական հարաբերություններին սերտացմանը զուգահեռ աստիճանաբար սրվում էին հարաբերությունները՝ Վրաստանի և Ռուսաստանի միջև: 1990-ականներից և արդեն 2000-ականների սկզբին, երբ Ռուսաստանում նախագահի պաշտոնում Բ. Ելցինին փոխարինեց Վ. Պուտինը՝ ռուսական կողմը որդեգրեց նոր տարածաշրջանային քաղաքականություն: Ռուսական նոր իշխանությունները կարողացան հաջողությամբ գրանցել Չեչենական խնդրի լուծման հարցում, ինչից հետո Բ. Ելցինի կառավարման տարիներին տարածաշրջանային անհետևողական քաղաքականությանը փոխարինեց ռուսական ազգային անվտանգության խնդիրների վրա հիմնված քաղաքականությունը: Այս համատեքստում «Վարդերի հեղափոխությունից» հետո իշխանության եկած Մ. Սաակաշվիլիի գլխավորած վրացական կառավարության արտաքին քաղաքականությունում ավելի արտահայտվեցին Հյուսիսատլանտյան դաշինքին և Եվրոպական Միությանը անդամակցելու նույն կողմնակա գործընթացները: Արդյունքում ռուսական իշխանությունները, թե նախկինում փորձում էին պահպանել հարաբերական չեզոքությունը վրաց-աբխազական հակամարտությունում, ապա Մոսկվայի գործողություններում հետզհետե նկատվեց տեղաշարժի նպաստ Աբխազիայի: Այս

¹⁴⁶Տե՛ս Թուրքիայի Հանրապետության ԱԳՆ պաշտոնական կայքում (<https://goo.gl/ghS82Z>)

զարգացումները անմիջականորեն նաև իրենց հետքն էին թողնում Թուրքիայի և Աբխազիայի հետ հարաբերություններում: Արդեն 1998 թվականից Աբխազիայի բնակիչները հնարավորություն ստացան ձեռք բերել Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն: Ըստ Աբխազիայի նախագահ Վ. Արձինբայի, արդեն 2003 թվականին Աբխազիայի բնակչության մոտ 80%-ը ուներ նաև Ռուսաստանի Դաշնության քաղաքացիություն¹⁴⁷: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Թուրքիան չէր ճանաչում Աբխազիայի անկախությունը, իսկ 1996 թվականից նաև արգելել էր ԽՍՀՄ նմուշի անձնագրերով քաղաքացիների մուտքը երկիր, ուստի քաղաքացիությունը Աբխազիայի բնակիչներին թույլ էր տալիս ճանապարհորդել Թուրքիա: Իր հերթին սա Աբխազիային թույլ էր տալիս «ճամպրուկային առևտրի» միջոցով ապրանքներ արտահանել դեպի Թուրքիա և ներկրել այլ անհրաժեշտ ապրանքներ այնտեղից:

Մյուս կարևոր փոփոխությունը դա ուսաբխազական սահմանին գործող կարգավորումների փոփոխություններն էին: 1994 թվականից Ռուսաստանի և Աբխազիայի միջև սահմանին գործում էր «հատուկ կարգ», որով 18-65 տարեկան արական սեռի ներկայացուցիչներին արգելվում էր հատել պետական, ինչպես նաև հետազայում ուժի մեջ մտած ծովային և ցամաքային շրջափակումը: Արդեն 2000 թվականին սահմանը հատելու արգելքը վերացվեց նաև գորակոչային տարիքի արական սեռի ներկայացուցիչների համար, իսկ արդեն 2001 թվականից ուժի մեջ մտան նոր սահմանային


¹⁴⁷ Տե՛ս Ս. Ե. Թուջբա, «Постсоветская динамика российско-абхазских отношений», Современные исследования социальных проблем, № 3, 2015, стр. 267-268

կարգավորումներ, որով թույլատրվեց ԱՊՀ անդամ պետությունների քաղաքացիների մուտքը Աբխազիայի Ռուսաստանի տարածքից, իսկ արդեն 2006 թվականից նման արտոնություն ստացան նաև այլ պետությունների քաղաքացիները, ովքեր ունեին բազմակի մուտքի վիզա Ռուսաստան այցելելու համար: Այս փոփոխությունները իրենց հերթին արդեն լրացուցիչ հնարավորություններ էին ընձեռում Աբխազիա այցելել ցանկացող Թուրքիայի քաղաքացիների համար, որոնց զգալի մասը թուրքիայաբնակ աբխազական համայնքի ներկայացուցիչներն էին և գործարարները: Միևնույն ժամանակ Ռուսաստանի և Աբխազիայի սահմանին գործող սահմանային կարգավորումները վրացական կողմի անհնարին էր դարձնում վերահսկել Թուրքիայի կողմից շրջափակման պայմանների պահպանությունը և Թուրքիայի քաղաքացիները առանց այլ ընտրաքային ճանապարհների հեշտությամբ մուտք էին գործում Աբխազիա:

Աբխազիայի բնակչությանը ուսական քաղաքացիություն շնորհելը և ուս-աբխազական պետական սահմանին գործող սահմանափակումների վերացումը անուղղակիորեն նպաստում էր նաև թուրք-աբխազական հարաբերությունների խորացմանը: Ուսումնասիրության համատեքստում անհրաժեշտ է արձանագրել, որ Աբխազիայում պատերազմի ավարտից հետո մինչև «Յինգորյա պատերազմը» ընկած ժամանակահատվածում Աբխազիան և վերջինիս շուրջ ձևավորված իրավիճակը չէր հանդիսանում ուս-թուրքական տարածաշրջանային

հարաբերություններին առանցքային խնդիրներին ցմեկը, սակայն միևնույն ժամանակ Մոսկվայի Աբխազական հակամարտության հարցում որդեգրած շեշտադրումների փոփոխությունները անմիջապես անդրադառնում էին հատկապես Անկարայի և Սուխումի միջև ստեղծված ոչ պաշտոնական առևտրային հարաբերություններին վրա: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Ռուսաստանը, լինելով վերոնշյալ երկկողմ հարաբերություններին հիմնական միջնորդը, չէր խոչընդոտում դրանց խորացմանը, ինչը կարելի է բացատրել միշտ քգործունեությամբ: Առաջին հերթին Ռուսաստանի համար շահավետ էր, որ Աբխազական տնտեսության մեջ նաև այլ երկրներին ցեկած կապիտալը շրջանառությունը՝ նպաստելով երկրում ստեղծված ծանր տնտեսական վիճակի կարգավորմանը: Մյուս կողմից Աբխազիայի ծովային և ցամաքային շրջափակումը Վրաստանի կողմից և թուրք-վրացական առևտրի զգալի մասի Ռուսաստանի տարածքով արվելու փաստը ռուսական կողմին հնարավորություն էր տալիս չմտահոգվել թուրքական ազդեցության անկառավարելի աճի համար: Անհրաժեշտ է նաև ընդգծել Անկարայի և Մոսկվայի միջև ձևավորված ամուր տնտեսական հարաբերությունները և տարեցտարի ապրանքաշրջանառության ծավալներում նկատվող զգալի աճը իր հերթին հնարավորություն էր տալիս ռուսական կողմին անհրաժեշտության դեպքում ճնշումներ գործադրել Անկարայի վրա:

Աղյուսակ 2 Ներկրման և արտահանման ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված են Թուրքիայի վիճակագրությունից ինստիտուտի հրատարակած պաշտոնական տվյալներից (<https://goo.gl/ioEyix>)



Աբխազական հիմնահարցը Մոսկվայի և Անկարայի միջպետական հարաբերություններում կրկին առանցքային դեր սկսեց զբաղեցնել 2008 թվականին, երբ Ռուսաստանի և Վրաստանի միջև լարվածությունն մեծացումը վերաճեց ռազմական գործողությունների: Արդեն 2008 թվականի հունվարին ռուսական կողմը պաշտոնապես հայտարարեց 1996 թվականից գործող Աբխազիայի շրջափակման միակողմանի դադարեցման մասին:

Արդեւ նոյն տարվա օգոստոսին Յարավային
Օսիայում սկսված ռազմական
գործողութիւնները հանգեցրեցին նաև Կոդորի
կիրճում աբխազական ուժերի կողմից ձեռնարկված
ռազմական գործողութիւններին: Ռուսաստանի և
Վրաստանի միջև ռազմական բախումները էապես
ազդեցին Յարավային Կովկասում ձևավորված
աշխարհաքաղաքական իրավիճակի վրա:
Ռուսաստանը փաստացիորեն ցուցադրեց, որ իր
ռազմավարական նպատակներին հասնելու համար
պատրաստ է դիմել ցանկացած գործիքի, այդ թվում
նաև ռազմական միջամտութիւն: Արդյունքում
Կրեմլի գործողութիւնները ամրապնդեցին
վերջինիս դիրքերը Յարավային Կովկասում, որպես
տարածաշրջանային գերակա ուժ:

Ստեղծված պայմաններում թուրքական
իշխանութիւնները կանգնեցին բարդ իրավիճակի
առաջ: Մի կողմից Թուրքիան հանդիսանում էր
Ռուսաստանի գործողութիւնները քննադատող
ԱՄՆ-ի և ԵՄ հիմնական դաշնակիցը
տարածաշրջանում և արդյունավետ
համագործակցութիւններ հաստատել Վրաստանի
հետ էներգակիրներին տեղափոխման ոլորտում, իսկ
մյուս կողմից առկա էր Ռուսաստանից կախումը
նոյն էներգակիրներին ոլորտում և աճող
ապրանքաշրջանութիւնները երկու կողմերի միջև:
Ուստի թուրքական իշխանութիւնները ստեղծված
իրավիճակում փորձում էին պահպանել
հարաբերական անկողմնակալութիւնը:
Պաշտոնական Անկարան իր
հայտարարութիւններում հանդես էր գալիս
Վրաստանի տարածքային ամբողջականութիւն

պաշտպանությամբ, սակայն միևնույն ժամանակ փորձում էր իր գործողություններով չվնասել Ռուսաստանի հետ ձևավորված հարաբերություններին: Մասնավորապես թուրքական լրատվամիջոցները մատնանշում են, որ «Ռուսաստանի Գլխավոր շտաբի հայտարարությունը Մոնտրոյի կոնվենցիայի կետերի պահպանության մասին Թուրքիայում ընկալվեց, որպես նախազգուշացում», ինչի արդյունքում թուրքական կողմը ժամանակավորապես արգելեց ամերիկյան ռազմականների մուտքը Սև ծովի ավազան¹⁴⁸:

Ռուսաստանի հարցում թուրքական իշխանությունների մոտեցումը արտացոլվում է Ահ. Դավությանի՝ ստեղծված իրավիճակի վերաբերյալ մեկնաբանություններում: «Թուրք-ռուսական հարաբերությունները չեն կարող լինել ինչպես Ռուս-դանիական կամ Ռուս-նորվեգական հարաբերությունները... Ցանկացած այլ եվրոպական պետություն կարող է Ռուսաստանի նկատմամբ վարել մեկուսացման քաղաքականություն: Կարող է Թուրքիան անել դա: Ես խնդրում եմ հասկանալ Թուրքիայի շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական իրավիճակը... Եթե դուք տնտեսապես մեկուսացնեք Ռուսաստանին, Թուրքիան կարող է թույլ տալ դա իրեն: Մենք ստիպված ենք ընդունել, որ Թուրքիան 75-80%-ով կախված է Ռուսաստանից: Մենք չենք ցանկանում վճարել Ռուսաստանի, կամ Վրաստանի կողմից թույլ տրված ռազմավարական սխալների համար», նշում է այդ ժամանակ Թուրքիայի վարչապետի

¹⁴⁸ Տե՛ս A. Djavadi, “Russia Turns Up The Pressure On Turkey”, RFE/RL, 01.09.2008 (<https://bit.ly/2GLoypU>)

արտաքին քաղաքականության հարցով գլխավոր խորհրդական Ահմեթ Դավութօղլուն¹⁴⁹: Այս համատեքստում նաև չի կարելի անուշադրության մատնել նաև ներպետական զարգացումները: Թուրքիայի արևելյան աբխազական համայնքը բավականին մեծ ոգևորությամբ էր ընդունել Կրեմլի կողմից Աբխազիայի անկախության ճանաչումը և նմանօրինակ պահանջ էր դրում նաև թուրքական իշխանությանը:

Ստեղծված իրավիճակում հարաբերական չեզոքության քաղաքականությամբ կարելի է բացատրել թուրքական կողմի առաջ քաշած տարածաշրջանային անվտանգության նոր ձևաչափը: Անհրաժեշտ է արձանագրել, որ թուրքական կողմը տարածաշրջանային քաղաքական նախաձեռնություններին իրագործման ճանապարհին անհրաժեշտ էր համարում դրանց Ռուսաստանի հետ համաձայնեցումը: Այս համատեքստում կարելի է դիտարկել նաև այն, որ Անկարայի առաջարկած «Կովկասում կայունության և համագործակցության հարթակի» մասին քննարկումները մեկնարկեցին 2008 թվականի օգոստոսի 11-ին՝ Թուրքիայի նախագահ Ռ. Էրդոհանի և Ռուսաստանի նախագահ Դ. Մեդվեդևի միջև կայացած մոսկովյան հանդիպման շրջանակներում: Հանդիպումից հետո տևական ժամանակ ռուսական կողմը խոստովում էր հարթակի վերաբերյալ հստակ գնահատականներ տալուց: Մոսկվայի նման քաղաքականությունը նաև արտացոլվում էր ՌԴ բարձրաստիճան

¹⁴⁹Տե՛ս «Turkey's Top Foreign Policy Aide Worries about False Optimism in Iraq», Council on Foreign Relations, 19.09.2008 (<https://on.cfr.org/2KRUT0T>)

պաշտոնյաների տված հարցազրույցներում¹⁵⁰: Սերգեյ Լավրովը «Российская газета»-ի ն հոկտեմբերի 7-ին տված հարցազրույցում ողջունում էր թուրքական կողմի տարածաշրջանում խաղաղության պահպանմանն ուղղված ջանքերը¹⁵¹: Սակայն Լավրովի այս հարցազրույցից մոտ 2 շաբաթ անց ՌԴ Պետդոմայի ԱՊՀ երկրներին հետ կապերի հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալը՝ խոսելով ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի Յայաստանի կատարած այցի արդյունքների մասին, նշել էր, որ Յարավային Կովկասում անվտանգության հարթակի ստեղծման համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տարածաշրջանում տեղի ունեցած փոփոխություններին¹⁵²: Ըստ նրա, բանակցային գործընթացին պետք է մասնակցեն ոչ միայն Յայաստանը, Վրաստանը և Ադրբեյջանը, այլ նաև Աբխազիան և Յարավային Օսիան: Ռուսաստանի, ինչպես նաև հետագայում Վրաստանի, Ադրբեյջանի և Յայաստանի մոտեցումները խանգարեցին Անկարայի առաջ քաշած այս գաղափարի իրականացմանը: Ռուսաստանի կողմից օգոստոսի 25-ին Աբխազիայի անկախության ճանաչումից հետո Լրատվամիջոցներում սկսվեց շրջանառվել նաև Թուրքիայի կողմից անկախության ճանաչման հնարավորությունը: Նման տեսակետի ձևավորման դրդապատճառներին էր թուրքիայաբնակ արբխազական համայնքի Լոբիստական աշխատանքը

¹⁵⁰ Տե՛ս ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հարցազրույցը «Российская газета»-ի ն , 07.10.2008 (<https://goo.gl/pz5vtV>)

¹⁵¹ Ամբողջական հարցազրույցը տե՛ս “Россия не желает вмешательства третьих стран в процессы на Кавказе: мнение”, ИА REGNUM, 23.10.2008 (<https://goo.gl/zDgE9h>)

¹⁵² Յարավային Օսիայում ուսումնասիրացական օգոստոսյան պատերազմից Ռուսաստանը առաջին պետությունն էր, որ ճանաչել էր Աբխազիայի և Յարավային Օսիայի անկախությունները:

Երկրում, Վրաստանի հետ հարաբերություններում առկա տարածայնությունները Աբխազիայի վերաբերյալ, ինչպես նաև Թուրքիայի կողմից Կոստովոյի անկախություն ճանաչման փաստը¹⁵³: Նման խոսակցությունները ամրապնդվեցին 2009 թվականին թուրք դիվանագետ Ռենալ Չեվիքոզի Սուխում կատարած այցից հետո¹⁵⁴: Այս այցից հետո թուրքական «Milliyet» թերթում հրապարակված հոդվածում սկսում է շրջանառվել այն տեսակետը, որ թուրքական իշխանությունները պատրաստվում են գործարքի գնալ Կրեմլի հետ՝ պատրաստակամություն հայտնելով ճանաչել Աբխազիայի և Յյունսիային Օսիայի անկախությունը, եթե Ռուսաստանը ճանաչի Յարավային Կիպրոսի անկախությունը¹⁵⁵: Սակայն դեպքերի նման զարգացումները կարժամանականց հերքվեցին Ռուսաստանի ԱԳՆ նախարար Սերգեյի Լավրովի կողմից Սուխումում ուսանողների հետ կայացած հանդիպման ժամանակ¹⁵⁶:

Ռուսաստանի կողմից Աբխազիայի անկախության ճանաչումը իր հերթին ունեցավ նաև համապատասխան ազդեցություն թուրք-աբխազական առևտրային հարաբերություններին վրա: Մասնավորապես անկախության ճանաչումից հետո վրացական իշխանությունները Ռուսաստանի ԱԳՆ նախարարի պաշտոնական հաղորդագրությամբ ծանուցվեցին, որ «Աբխազիա ուղևորվող նավերի ձերբակալությունները կարող են հանգեցնել

¹⁵³ Տե՛ս Թուրքիայի ԱԳՆ պաշտոնական կայքը (<https://goo.gl/uvEBTo>)

¹⁵⁴ Տե՛ս “Abhazya’ya ilk Türk diplomat”, Sabah, 08.09.2009 (<https://goo.gl/wEPxRc>)

¹⁵⁵ Տե՛ս “KKTC’ye karşı Abhazya”, Milliyet, 21.09.2009 (<https://goo.gl/be1ZFu>)

¹⁵⁶ Տե՛ս “Russia Rejects Trade-Off With Turkey On Recognition Of Abkhazia, South Ossetia, Northern Cyprus”, RFE/RL, 06.10.2009 (<https://goo.gl/iwkcoH>)

գ ի ն վ ա ծ մ ի ջ ա դ ե պ ե ռ ի »¹⁵⁷: Պ ա շ տ ո ն ա կ ա ն
 ծ ա ն ու լ գ ու մ ի ց հ ե տ ո Ն ո վ ո ճ ո ս ի յ ս կ ի ց Ա բ խ ա զ ի ա
 տ ե դ ա փ ո խ վ ե ց ն ա ն ու ու ս ա կ ա ն ո ա զ մ ա ն ա վ ե ռ ի ց մ ե կ ը `
 «Ա բ խ ա զ ի ա յ ի տ ա ռ ա ծ ք ա յ ի ն ջ ը ե ռ ը պ ա շ տ պ ա ն ե լ ու
 հ ա մ ա ռ »¹⁵⁸: Ռ ու ու ս ա կ ա ն կ ո ղ մ ի ա յ ս
 գ ո ռ ծ ո ղ ու թ յ ու ն ն ե ռ ը հ ն ա ռ ա վ ո ռ ու թ յ ու ն է ի ն
 տ ա լ ի ս թ ու ռ ք ա կ ա ն ա ու տ ռ ա կ ա ն ն ա վ ե ռ ի ն
 մ ի ա ն գ ա մ ի ց ն ա վ ա ռ կ ե լ Ս ու խ ու մ ի ն ա վ ա հ ա ն գ ի ս տ ,
 ա ու ա ն ց վ ը ա ց ա կ ա ն ս ա հ մ ա ն ա պ ա հ ծ ո վ ա յ ի ն ու ժ ե ռ ի
 ու շ ա դ ը ու թ յ ու ն ը գ ը ա վ ե լ ու վ տ ա ն գ ի : Դ ը ա ն
 գ ու զ ա հ ե ո 2010 թ վ ա կ ա ն ի ն Ռ ու ու ս ա ս տ ա ն ի և
 Թ ու ռ ք ի ա յ ի մ ի ջ ա կ ն ք վ ա ծ պ ա յ մ ա ն ա գ ը ո վ ե ռ կ ու
 ե ռ կ ը ն ե ռ ի մ ի ջ ա վ ե ռ ա ց վ ե ց վ ի զ ա յ ի ն ու ե ժ ի մ ը , ո ը ը
 Թ ու ռ ք ի ա յ ի ք ա դ ա ք ա ց ի ն ե ռ ի ն հ ն ա ռ ա վ ո ռ ու թ յ ու ն
 ը ն ձ ե ու ե ց ա վ ե լ ի հ ե շ տ ու թ յ ա մ ք Ռ ու ու ս ա ս տ ա ն ի
 տ ա ռ ա ծ ք ո վ մ ու տ ք գ ո ռ ծ ե լ Ա բ խ ա զ ի ա ¹⁵⁹:

Պ ե տ ք է ար ձ ա ն ա գ ը ե լ , ո ը Ռ ու ու ս ա ս տ ա ն ի կ ո ղ մ ի ց
 Ա բ խ ա զ ի ա յ ի ա ն կ ա խ ու թ յ ա ն ճ ա ն ա չ ու մ ը Թ ու ռ ք ի ա յ ի
 ք ա դ ա ք ա ց ի ն ե ռ ի հ ա մ ա ռ ն ո ը ճ ա ն ա պ ա ռ հ ք ա ց ե ց դ ե պ ի
 Ա բ խ ա զ ի ա : Ռ ու ու ս ա ս տ ա ն ի հ ե տ ա ու ա ն ց վ ի զ ա յ ի ն
 հ ա մ ա կ ա ռ գ ը և ու ու ս -ա բ խ ա զ ա կ ա ն ց ա մ ա ք ա յ ի ն
 ս ա հ մ ա ն ի գ ո յ ու թ յ ու ն ը Թ ու ռ ք ի ա յ ի
 ք ա դ ա ք ա ց ի ն ե ռ ի ն թ ու լ յ լ է ը տ ա լ ի ս հ ե շ տ ու թ յ ա մ ք
 ն ե ռ դ ը ու մ ն ե ռ կ ա տ ա ռ ե լ Ա բ խ ա զ ի ա յ ու մ : Ս ա կ ա յ ն
 դ ը ա ն գ ու զ ա հ ե ո Թ ու ռ ք ի ա ն ա յ ժ մ ս տ ի պ վ ա ծ է
 Ա բ խ ա զ ի ա յ ի հ ե տ հ ա ռ ա ք ե ռ ու թ յ ու ն ն ե ռ ը կ ա ու ու ց ե լ
 Ռ ու ու ս ա ս տ ա ն ի հ ե տ հ ա ռ ա ք ե ռ ու թ յ ու ն ն ե ռ ի
 հ ա մ ա տ ե ք ս տ ու մ : 2008 թ վ ա կ ա ն ի ց հ ե տ ո Ռ ու ու ս ա ս տ ա ն ը
 ա ու ա ն ց ք ա յ ի ն ն շ ա ն ա կ ու թ յ ու ն ձ ե ո ք ք ե ռ ե ց
 Ա բ խ ա զ ի ա յ ի հ ա մ ա ռ թ ե ` ք ա դ ա ք ա կ ա ն , թ ե ` ո ա զ մ ա կ ա ն

¹⁵⁷ Տ ե ` ո “Russian Warns Georgia Against Ship Seizures”, Civil Georgia, 03.09.2009 (<https://goo.gl/besZE2>)
¹⁵⁸ Տ ե ` ո “Russia Sends Vessel for ‘Protection of Abkhaz Waters’”, Civil Georgia, 21.09.2009 (<https://goo.gl/u64Thf>)
¹⁵⁹ Տ ե ` ո “Russia and Turkey agree on visa-free travel”, Russia Today, 18.10.2010 (<https://goo.gl/FQ69g8>)

և թե՛ տնտեսական տեսանկյուններից: Դրանով է պայմանավորված, որ արտաքին քաղաքականության հարցում Սուխումը գործում է Մոսկվայի հետ համաձայնեցված: Դրանով է պայմանավորված, որ 2016 թվականին ռուս-թուրքական հարաբերություններում նկատված ևարման ժամանակ հակամարտությունից անմասն չմնաց Աբխազիան, ով նույնիսկ որոշակի պատժամիջոցներ սկսեց կիրառել թուրքական ընկերությունների դեմ¹⁶⁰: Թուրքիայի համար հավելյալ խնդիր է ստեղծվում Աբխազիայում ռուբլու օգտագործումը, իսկ վերջինիս անկայուն վիճակը հանգեցնում է նրան, որ Թուրքիայից ապրանքների ներկրումը շահավետ չի լինում աբխազական կողմի համար: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ Անկարան Չարավային Կովկասում իր գործունեությունը որոշակիորեն փորձում էր համապատասխանեցնել Մոսկվայի հետ, երկու երկրների միջև հնարավոր խնդիրները կանխելու համար:

Աբխազական հիմնախնդիրը շարունակում է առանձին տեղ գրավել թե՛ թուրք-ռուսական, թե՛ թուրք-վրացական հարաբերություններում: Թուրքական կողմը կարևորելով Ռուսաստանի և Վրաստանի հետ համագործակցությունը իր համար առանցքային մի շարք ոլորտներում ստիպված է Աբխազիայի հարցում վարել այնպիսի քաղաքականություն, որը չի վնասի վերոնշյալ պետությունների հետ հաստատված համագործակցությանը: Վրաստանի հետ հարաբերությունների համատեքստում Թուրքիան

¹⁶⁰ Տե՛ս Распоряжение Премьер-министра Республики Абхазия Артура Миквабия, 11.01.2016 (<https://goo.gl/D5awju>)

ի ր պաշտոնական հայտարարություններում մշտապես հանդես է գալիս Վրաստանի տարածքային ամբողջականության պաշտպանություն, իսկ առկա ապրանքաշրջանառությունը Աբխազիայի հետ քաղաքացիական պայմանագրերի անվերահսկելի գործունեությունում: Ռուսաստանի պարագայում Աբխազական հիմնախնդիրը դիտարկվում է Անկարայի և Մոսկվայի տարածաշրջանային քաղաքականության համատեքստում: Ռուսական կողմի համար առաջնային է Հարավային Կովկասում իր ազդեցություն ամրապնդման համար առկա հենակետերի պահպանումը, որոնց թվում է նաև Աբխազիան: Ներկա պայմաններում Ռուսաստանից Աբխազիայի ունեցած կախվածությունը ռուսական շխանություններին թույլ է տալիս մտավախություն չունենալ, որ Թուրքիային կհաջողվի Աբխազիայում ավելի գերակա դիրք զբաղեցնել քան Ռուսաստանը, ինչը նպաստում է նրան, որ թուրքական կողմը կարողանում է ազատ գործել Աբխազիայի տարածքում:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Ր Ո Ր Դ
Ա Բ Խ Ա 2 Ա 4 Ա Ն 3 Ա Մ Ա 3 Ն Ք Ի Ա 2 Դ Ե Ց Ո Ւ Թ 3 Ո Ւ Ն Ը Թ Ո Ւ Ր Ք Ի Ա 3 Ի
Ա Ր Տ Ա Ք Ի Ն Ք Ա Ղ Ա Ք Ա 4 Ա Ն Ո Ւ Թ 3 Ա Ն Կ Ր Ա
3.1 Ա Բ Խ Ա 2 Ա 4 Ա Ն 3 Ա Մ Ա 3 Ն Ք Ը Ե Կ Ա 2 Գ Ա 3 Ի Ն
Կ Ա 2 Մ Ա 4 Ե Ր Դ Ո Ւ Թ 3 Ո Ւ Ն Ն Ե Ր Ը Թ Ո Ւ Ր Ք Ի Ա 3 Ո Ւ Մ

Ժամանակակից Աբխազիայի տարածքից դուրս հաստատված ամենամեծաթիվ աբխազական համայնքը գտնվում է Թուրքիայում: Ըստ տարբեր աղբյուրների, Թուրքիայում բնակվող աբխազների թիվը տատանվում է 150.000-ից մինչև 300.000-ն ընկած միջակայքում: Անհրաժեշտ է մատնանշել, որ շատ դեպքերում ուսումնասիրված նյութերում հստակ միմյանցից չեն տարանջատվում հյուսիսկովկասյան իսլամադավան համայնքները, որոնց Թուրքիայում և Մերձավոր Արևելքի երկրներում անվանում են «չերքեզներ»: Վերջիններս կազմված լինելով տարբեր էթնիկ խմբերի ներկայացուցիչներից (ադրդներ, աբխազներ, կարաչայներ, նոդայներ, կաբարդիներ և այլն) գործում էին որպես մեկ միասնական համայնք և հաճախ հանդես էին գալիս միասնական դիրքորոշմամբ տարբեր հարցերի շուրջ:

Հյուսիսային Կովկասից և Աբխազիայից արտագաղթ դեպի Օսմանյան կայսրություն սկսվեց նկատվել արդեն XV դարի երկրորդ կեսից: Հիմնական պատճառներից կարելի է նշել իսլամադավան բնակչության շրջանում ուխտագնացությունների կատարողների թվի աճը և ստրկավաճառության զարգացմամբ: Սակայն արտագաղթը դեպի Օսմանյան կայսրություն մեծ ծավալներ ստացավ XIX դարի կեսերից, երբ Ռուսաստանի իշխանություններին վարած գաղութային քաղաքականության և «Կովկասյան

պատերազմում» ցարական ուժերի հաղթանակի արդյունքում կովկասյան լեռնաբնակները սկսեցին ընտանիքներով տեղափոխվել Օսմանյան կայսրություն: Պետք է արձանագրել, որ ցարական իշխանությունները ամեն կերպ փորձում էին նպաստել իսլամադավան բնակչության արտագաղթին երկրից: Այս մասին է վկայում 1862 թվականին Կուբանի շրջանի գործերի հրամանատար Ն. Եվդոկիմովի Կովկասյան բանակի Գլխավոր շտաբի պետ Կարցովին ուղղված նամակը, որում նշվում է, որ «լեռնացիների գաղթը դեպի Թուրքիա, կարևոր պետական քայլ է, որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում առանց զգալի ճիգերի ավարտել պատերազմը»¹⁶¹: Ռուսական իշխանությունների նման քաղաքականությունը պայմանավորված էր «Ղրիմի պատերազմում» կրած պարտությունից և ճորտատիրություն վերացումից հետո երկրում տիրող լարված իրավիճակով: Նման պարագայում Ռուսաստանի համար առաջնային խնդիր դարձավ Կովկասում իրավիճակի կայունացումը: Արդյունքում իշխանությունները ոչ միայն չէին խոչընդոտում բնակչության արտագաղթին դեպի Օսմանյան կայսրություն, այլ նաև խթանում էին, իսկ երբեմն ուղիղ իսկ բռնի արտաքսում էին իրենց բնակչության վայրերից: Առանձնակի ռազմավարական նշանակություն ունեցող Աբխազիայի իսլամադավան բնակչության տեղափոխությունը: Ըստ 1863-1869 թվականներին Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Ա. Կարցովի, 1866 թվականի արխազական

¹⁶¹Տե՛ս «Акты, Собранные Кавказской Археографической Комиссией», том XII, №889, Типография Главного Управления Наместника Кавказского, Тифлис, 1866–1904, стр. 1009

ապստամբությունն ից հետո տեղական իշխանությունների համար առաջնային է եղել շրջանի «թշնամական տրամադրված բնակչության թուրքիա տեղափոխվելու խնդրի լուծումը»¹⁶²: Ռուսական բանակի հրամանատարի գեկույցից կարելի է առանձնացնել ռուսական կողմի մտավախությունը, որ տեղաբնիկները կարող էին վտանգ ներկայացնել երկրի իշխանությունների համար պատերազմի դեպքում: Չեկույցում նշվում է, որ միայն է 1967 թվականի փետրվար-հունիսամիսների ընթացքում Օսմանյան կայսրություն է արտագաղթել ավելի քան 19.000 մարդ¹⁶³: Ռուսական իշխանությունների կողմից Աբխազիայի բնակչության արտաքսումը երկրից 1864-1878 թվականներին իրականացվեց մի քանի փուլով: Աբխազների առաջին զանգվածային արտագաղթը տեղի ունեցավ 1864 թվականի ապրիլի վերջին, երբ ռուսական բանակի առանձին գնդեր սկսեցին բռնի կերպով արտաքսել երկրի լեռնային շրջանների բնակչությանը՝ պահանջելով «անմիջապես հնազանդվել ռուսական բանակի պահանջներին և հնարավորինս շուտ լքել իրենց բնակության վայրերը»¹⁶⁴: Արտագաղթի մյուս զանգվածային ալիքը նկատվեց արդեն 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի ավարտին: Յատկանշական է, որ այդ տարիներին Աբխազների բռնի արտագաղթը իրականացվում էր թե՛ ժամանակավորապես Աբխազիայում տեղակայված օսմանյան բանակի

¹⁶² Տե՛ս «Кавказское краевое военно-народное управление. Всеподданнейший отчет Главнокомандующего Кавказской армией по Военно-народному управлению за 1863-1869 гг», Санкт-Петербург, 1870

¹⁶³ Նույն տեղում

¹⁶⁴ Աբխազիայի բնակչության տեղահանման մասին տե՛ս «Кавказ» թերթում, №44, 1864

կողմից, թե՛ հետագայում Ռուսական կայսրության կողմից¹⁶⁵:

Կովկասյան իսլամադավան բնակչության արտագաղթը դեպի Օսմանյան կայսրությունը բավականին դրական ընդունվեց նաև սուլթանական իշխանությունների կողմից: Օսմանյան իշխանությունները իրենց հերթին փորձում էին խթանել գաղթականների ներհոսքը, ինչի համար քարոզիչների և գործակալների միջոցով Հյուսիսային Կովկասի և Աբխազիայի բնակչության շրջանում ի հակադրություն ցարական գաղութային քաղաքականությանը փորձում էին ներկայացնել Օսմանյան կայսրությունում նրանց սպասվող արտոնությունները: Արդեն 1857 մարտին ընդունված մոհաջիրության մասին օրենքը բավականին արտոնություններ էր տալիս Օսմանյան կայսրություն տեղափոխված կովկասյան ժողովուրդներին: Մասնավորապես, ներգաղթյալները գտնվելու էին սուլթանի հովանու ներքո, նրանց տրամադրված հողերը ազատվում էին հարկերից, ինչպես նաև նրանք ազատվում էին գինվորական ծառայությունից 6-12 տարի ժամկետով կախված վերաբնակեցման վայրից: Օրենքի ընդունումից 3 տարի անց՝ 1860 թվականին Ստամբուլում ստեղծվում է մոհաջիրների հարցերով զբաղվող հանձնաժողովը, որի հիմնական առաքելությունը ներգաղթյալների տեղաբնակեցումն էր և անհրաժեշտ օգնության տրամադրումը:

¹⁶⁵ Տե՛ս Т. Ачугба, “Этническая история абхазов XIX–XX вв. Этнополитические и миграционные аспекты”, Сухум, 2010, стр. 102-104

Հյուսիսային Կովկասից գաղթականները
 ժամանում էին օսմանյան Տրապիզոնի և Սամսունի
 նավահանգիստները, որտեղից օսմանյան
 իշխանությունները բնակավայրեր էին
 հատկացնում նրանց կայսրության տարբեր
 շրջաններում: Բարձր Դուռը ներգաղթյալներին
 փորձում էր օգտագործել պատերազմների
 արդյունքում ամայացած վիլայեթները
 վերաբնակեցնելու, ինչպես նաև մեծամասամբ
 քրիստոնեաներով բնակեցված շրջանների
 դեմոգրաֆիկ պատկերը փոփոխելու համար:
 Պատական չէ, որ սկզբնական փուլում
 մոհաջիրները սկսեցին բնակվել Բալկանյան
 թերակղզում և Փոքր Ասիայի կենտրոնական
 շրջաններում: Հետագայում Բեռլինի
 պայմանագրից հետո, երբ արգելվեց չերքեզների
 բնակեցումը Օսմանյան կայսրության եվրոպական
 շրջաններում, նրանք նույնպես տեղափոխվեցին
 ասիական վիլայեթներ¹⁶⁶: Հատկանշական է, որ
 օսմանյան իշխանությունները փորձում էին
 գաղթականներին փոքր խմբերով վերաբնակեցնել
 կայսրության տարբեր շրջաններում¹⁶⁷:
 Ներգաղթյալները ստանում էին նախկինում
 չմշակված հողատարածքներ գյուղական
 համայնքներում: Վերջին տասնամյակների
 ընթացքում նկատվում է գյուղական
 համայնքներում բնակվող չերքեզների
 թվաքանակի նվազեցում, որի հիմնական պատճառը
 ուրբանիզացիայի և արտագաղթի մեծ ծավալներն
 են: Ըստ Հյուսիսկովկասյան

¹⁶⁶Տե՛ս K. Karpat, “Ottoman Population 1830-1914”, University of Wisconsin, Wisconsin, 1985, p. 65.

¹⁶⁷Օսմանյան իշխանությունները փորձում էին վերաբնակեցման
 ընթացքում պահպանել յուրաքանչյուր չերքեզական ընտանիքին
 դիմաց 4թուրքական ընտանիք համամասնությունը:

կազմակերպությունների տվյալների, արդեն 1995 թվականին հյուսիսկովկասյան համայնքի շուրջ 60%-ը բնակվում էր քաղաքներում: Ստամբուլին, Անկարային և Սամսունին զուգահեռ մեծաթիվ հյուսիսկովկասյան համայնքներ կան նաև Ադանայում, Ադափազարիում, Բուրսայում, Էսքիշեհիրում, Մերսինում, Սիվասում, Գազիանթեփիում, Իզմիրում և այլ քաղաքներում¹⁶⁸: Միևնույն ժամանակ տարբեր տեսակետներ կան Թուրքիայում բնակվող աբխազների և հյուսիսկովկասյան մյուս ժողովուրդների թվաքանակի վերաբերյալ: XIX դարում Օսմանյան կայսրությունում աբխազները բնակություն հաստատեցին 150-160 գյուղերում, սակայն արդի բնակավայրերի և բնակչության տվաքանակի վերաբերյալ պաշտոնական տվյալները բացակայում են¹⁶⁹: Տվյալների բացակայության հիմնական պատճառը Թուրքիայում անցկացվող մարդահամարի առանձնահատկությունն է, որում չի արտացոլվում բնակչության ազգային պատկանելությունը: Պաշտոնական տվյալներ կարելի է ստանալ միայն 1965 թվականին արված մարդահամարից, որում նաև առանձնացվել են լեզվական խմբերը: Ըստ այդ տվյալների, Թուրքիայի ավելի քան 4.500 քաղաքացիներ աբխազներ են որպես մայրենի լեզու, իսկ շուրջ 7500-ը օգտագործում են որպես երկրորդ լեզու: Այս տվյալները չեն կարող արտացոլել Թուրքիայում բնակվող աբխազների իրական թվաքանակը՝ հաշվի առնելով որդեռեսու XIX

¹⁶⁸ Տե՛ս L. Bezanis, “Soviet Muslim Emigrés in the Republic of Turkey”, Central Asian Survey, Vol. 13, № 1, Routledge, New York, 1994, p. 142

¹⁶⁹ Տե՛ս Г. Дзидзария, “Махаджирство и проблемы истории Абхазии XIX столетия”, издательство “Алашара”, Сухум, 1982, Стр. 373

դարից ներգաղթածների սերունդները տիրապետում են միայն թուրքերենին: Ըստ պրոֆեսոր Մ. Թոֆթի կատարած հարցազրույցների, ներկայումս Թուրքիայի տարածքում կամոտ 250 աբխազաբնակ գյուղ, իսկ աբխազական բնակչությունը 100.000-150.000-ի սահմաններում է¹⁷⁰:

Օսմանյան իշխանությունների վարած քաղաքականությունը նպաստեցին, որ մնացյալ հյուսիսկովկասյան ժողովուրդների նման աբխազական համայնքին հաջողվեց նշանակալից տեղ գրավել կայսրության հասարակաքաղաքական կյանքում: 1908 թվականին «Երիտթուրքական» հեղափոխությունը և 1876 թվականի սահմանադրության վերականգնումը հյուսիսկովկասյան համայնքներում առաջ բերեցին ժողովրդավարական տեղաշարժեր, ինչի արդյունքում սկսեցին ձևավորվել մի շարք հասարակական կազմակերպություններ: Անհրաժեշտ է նշել, որ մինչև XX դարի երկրորդ կեսը հյուսիսկովկասյան գրեթե բոլոր համայնքները գործում էին միասնական և ձևավորում էին հասարակական միավորներ առանց ազգային տարանջատումների:

Արդեն 1908 թվականի օգոստոսին Ստամբուլում կայացավ շուրջ 100 մասնակցից բաղկացած «Չերքեզական միություն և օգնության ասոցիացիայի» («Çerkess Ittihad ve Teavun Cemiyeti») հիմնադիր ժողովը, իսկ արդեն նույն տարվա նոյեմբերին կազմակերպությունը ստացավ նաև պաշտոնական գրանցում՝ դառնալով Օսմանյան կայսրությունում գործող առաջին չերքեզական

¹⁷⁰Տե՛ս M. Toft, “Multinationality, Regions and State-Building: The Failed Transition in Georgia”, *Regional & Federal Studies*, Vol. 11, Is. 3, Taylor & Francis, Abingdon, 2001, p. 129

հասարակական կազմակերպությունը¹⁷¹: Կազմակերպության հիմնական գործունեության ոլորտները դարձան մշակութային և կրթական ծրագրերի իրականացումը համայնքի համար, ինչպես նաև հայրենադարձության հնարավորությունը: Իր նպատակներին հասնելու համար ասոցիացիան 1911 թվականից սկսեց տպագրել «Gûâze» ամսագիրը: Պարբերականում տպագրվում էին չերքեզական համայնքի խնդիրներին և իրադարձություններին վերաբերյալ հոդվածներ: Մինչև 1914 թվականը տպագրվում է 58 համար, որոնք տարածվում էին կայսրության գրեթե ողջ տարածքում¹⁷²: «Չերքեզական միության և օգնության ասոցիացիան» նաև տպագրում էր բազմաթիվ գրքեր և հոդվածներ օսման երեսով, արաբերենով և ադրդերենով: Կազմակերպության ջանքերով նաև Ստամբուլում գործում էր չերքեզական միջնակարգ դպրոց, որտեղ դասավանդումը կատարվում էր իրենց իսկ կողմից կազմված ադրդերեն դասագրքերով¹⁷³:

Օսմանյան կայսրությունն ձևավորված հասարակաքաղաքական մթնոլորտը նպաստեց նրան, որ «Չերքեզական միության և օգնության ասոցիացիայի» աջակցությամբ 1919 թվականին հիմնադրվեց «Չերքեզ կանանց աջակցության ասոցիացիան» (Çerkes Kadınları Teavün Cemiyeti): Նորաստեղծ կազմակերպությունը, որը պետք է դառնար «Չերքեզական միության և օգնության

¹⁷¹Տե՛ս M. Arslan, “Circassian Organizations in the Ottoman Empire (1908–1923)”, Bogazici University, 2008, pp. 27-31

¹⁷²Տե՛ս H. Duman, “Osmanlı-Türk Süreli Yayınları ve Gazeteleri (1828-928)”, Ankara, 2000, s. 323

¹⁷³Տե՛ս А. Кушхабиев, “Деятельность общественных организаций Северокавказских диаспор в Турции”, Известия Дагестанского государственного педагогического университета. Общественные и гуманитарные науки, Махачкала, 2012

ասոցիացիայի» մասնաճյուղը, պետք է գրադվեր մանկատներում ապրող չերքեզ երեխաների իրավունքների պաշտպանությունը և դպրոցական կրթական ծրագրերի իրականացումը: Իր կարճ գործունեության ընթացքում կազմակերպությանը հաջողվել էր հիմնադրել «Չերքեզ աղջիկների մասնավոր դպրոցը» և տպագրել «Di Yane» ամսագիրը¹⁷⁴:

Այս կազմակերպություններիս գոլգահեռ Օսմանյան կայսրությունում 1917 թվականին Ստամբուլում ստեղծվում է «Կովկասյան քաղաքական հանձնաժողովը» («Şimali Kafkas Cemiyeti»): Հատկանշական է, որ կազմակերպությունը իր ֆինանսավորությունը ստանում էր էնվեր Փաշայից¹⁷⁵: Անհրաժեշտ է նշել, որ նոր կազմակերպության հիմնադրումը Օսմանյան իշխանությունների ձեռքում պետք է դառնար արդյունավետ միջոց Կովկասում ընթացող ազատագրական գործընթացներում իր ազդեցությունը ամրապնդելու հարցում:

Օսմանյան կայսրությունում ստեղծված կազմակերպությունները մեծապես գրադվում էին լուսավորչական գործունեությամբ՝ նպատակ ունենալով պահպանել ազգային ավանդույթները, լեզուն և մշակույթը: Սակայն Օսմանյան կայսրության կործանմանը գոլգահեռ փակվեցին նաև նորաստեղծ չերքեզական կազմակերպությունները: Արդեն 1918 թվականին Մուդրոսի գիւնադարի կնքումից իր գործունեությունը դադարեցրեց «Կովկասյան

¹⁷⁴Տե՛ս M. Arslan, “Circassian Organizations in the Ottoman Empire (1908–1923)”, Bogazici University, 2008, pp. 165-191

¹⁷⁵Նույն ստեղծում, p. 49

քաղաքական հանձնաժողովը»։ Մյուս
կազմակերպությունները իրենց
գործունեությունը շարունակեցին մինչև 1923
թվականը՝ Թուրքիայի Հանրապետության
ստեղծումը։

Լոզանի պայմանագիրը և Թուրքիայի
անկախությունը հռչակումը նոր խնդիրներ առաջ
քաշեցին աբխազական համայնքի համար։
Մասնավորապես Լոզանի պայմանագրով ազգային
փոքրամասնությունները սկսվեցին
տարբերակվել ըստ կրոնական պատկանալիության,
ինչի արդյունքում իսլամադավան աբխազները և
մյուս հյուսիսկովկասյան ժողովուրդները
էապես կորցրեցին իրենց իրավունքները՝
զրկվելով որպես ազգային փոքրամասնություն
դպրոցների, հասարակական կազմակերպություն
և մշակութային կենտրոններ ունենալու
հնարավորությունից¹⁷⁶։ Միևնույն ժամանակ
երկրում բավականին ամրապնդվեց Թուրքիայում
բնակվող ազգային փոքրամասնությունների
թուրքացման քաղաքականությունը։ Դրա
արտահայտումներից մեկն էր իշխանությունների
կողմից 1934 թվականին ընդունված «Ազգանունների
մասին օրենքը», որով արգելվում էր ոչ-թուրքական
ծագում ունեցող ազգանունների
կիրառությունը¹⁷⁷։ Թուրքական
իշխանությունների նման քաղաքականությունը
հանգեցրեց նրան, որ հանրապետության
հաստատումից հետո Թուրքիայում իրենց

¹⁷⁶Տե՛ս Լոզանի պայմանագրի անգլերեն տարբերակը, բաժին 3
(<https://goo.gl/E2J2Vm>)

¹⁷⁷Տե՛ս L. Bezanis, “Soviet Muslim Emigrés in the Republic of Turkey”, Central Asian Survey, Vol. 13, № 1,
Routledge, New York, 1994, p. 141

գործունեությունը դադարեցրեցին գրեթե բոլոր
չերքեզական կազմակերպությունները :

Թուրքիայում չերքեզական
կազմակերպությունները իրենց
գործունեությունը վերսկսեցին արդեն 1950-
ականներից, երբ երկրում իշխանություն է կազմ
«Դեմոկրատական կուսակցությունը» և հաստատվեց
բազմակուսակցական համակարգ : Պետք է
արձանագրել, որ երկրորդ համաշխարհային
պատերազմից հետո նկատված բարձր
ուրբանիզացիայի պարագայում, Թուրքիայի
բնակչությունը սկսեց գյուղական շրջաններից
տեղափոխվել քաղաքներ : Ներպետական
զարգացումներից անմասն չէր մնում նաև
աբխազները և հյուսիսկովկասյան մյուս
ժողովուրդները : Եթե նախկինում գյուղական
համայնքներում, որտեղ մեծամասամբ բնակվում
էին միևնույն էթնիկ խմբիկներ կայացուցիչներ,
հնարավոր էր հեշտունիամբ պահպանել ազգային
մշակույթը, ապա արդեն քաղաքներում ազգային
փոքրամասնությունները կանգնում էին իրենց
ինքնությունը կորցնելու վտանգի առաջ :
Պատահական չէ, որ նոր հիմնադրվող
կազմակերպությունները առանցքային
ուղղությունը դարձավ ազգային մշակույթի
պահպանումը և բարոզը : Արդեն 1953 թվականին
Ստամբուլում հիմնադրվեց «Կովկասյան
մշակութային ասոցիացիան» («Kafkas Kültür Derneği»-ն կամ
«KKD»-ն), որը սկսեց գործել հաջորդ տարում
ստեղծված «Ներգաղթյալների և փախստականների
թուրքական ֆեդերացիա» («Turk Gocmen ve Mülteci Dernekleri
Federasyonu») կազմակերպության կազմում : Մյուս

Այս անկախ կառույցը 1961 թվականին ստեղծված «Անկարայի հյուսիսկովկասյան մշակութային ասոցիացիան» էր («Ankara Kuzey Kafkas Kultur Dernegi») ¹⁷⁸: Կազմակերպությունները ունեին բավականին փոքր ֆինանսավորում, ինչի արդյունքում նրանց գործունեությունը բավականին սահմանափակ էր: 1960-1980 թվականներին ստեղծված բազմաթիվ հասարակական կազմակերպությունները մեծապես գործում էին մշակութային դաշտում և խոստովում էին քաղաքական խնդիրներ քարտեզագրելու: Դրան էր նպաստում նաև թուրքական իշխանությունների խիստ քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների հարցում: Պետք է առանձնացնել 1967 թվականին հիմնադրված «Կովկասյան Աբխազիայի մշակութային ասոցիացիայի» («Kafkas Abhazya Kültür Derneği») հիմնադրումը, որը դարձավ աբխազական համայնքի կողմից ստեղծված ամենաազդեցիկ կառույցներից մեկը:

1980 թվականին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման հետևանքով երկրում կասեցվեց ազգային կազմակերպությունների գործունեությունը: Աբխազական և չեքեզական կազմակերպությունների գործունեությունը հատկապես նոր թափստացավ 1980-ականների երկրորդ կեսից, երբ Թուրքիայում հաղթահարվեց հեղաշրջումներից հետո ստեղծված քաղաքական ճգնաժամը: Միևնույն ժամանակ «Երկաթե վարագոյրի» վերացումը հնարավորություն տվեց դեռևս XIX դարում Օսմանյան կայսրություն գաղթածների սերունդներին այցելել իրենց

¹⁷⁸ «Անկարայի հյուսիսկովկասյան մշակութային ասոցիացիայի» մասին տե՛ս «Կովկասյան ասոցիացիաների ֆեդերացիայի» կայքում, (<https://goo.gl/L39Qge>)

պատմական հայրենիք և ծանոթանալ տեղի իրականությունը: Այս փոփոխությունները իրենց ազդեցությունը ունեցան նաև աբխազական և մյուս հյուսիսկովկասյան համայնքների վրա: Եթե նախկինում հյուսիսկովկասյան ժողովուրդները, ինչպիսիք էին աբխազները, կարաչայները, չեչենները և այլ ավելի փոքրաթիվ համայնքները միասնական գործում էին չերքեզական կազմակերպությունների կազմում, ապա 1980-ականներին համայնքները հնարավորություն ունեցան ստացան կապեր հաստատել համապատասխան ինքնավար հանրապետությունների հետ և հիմնադրել առանձին ազգային կազմակերպությունները: Բայց միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ այս տարիներին սկսվեց նկատվել նաև միությունների և կազմակերպությունների դաշնությունների ձևավորվելու գործընթացը: Այս համատեքստում կարևոր քայլ էր 1989 թվականին Անկարայում «Մեծ գաղթի» 125 ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպումն էր: Այս միջոցումների շրջանակներում կազմակերպված հանդիպումներին ակտիվ մասնակցություն ունեցան տարբեր երկրներում գործող չերքեզական համայնքների ներկայացուցիչները, ինչը խթանեց հետագայում տարբեր կազմակերպությունների միջև համագործակցության մեծացմանը¹⁷⁹:

Արդեն առաջին արդյունքները նկատվեցին 1990 թվականի հոկտեմբերի 18-ին, երբ դեռևս 1987 թվականին Անկարայում հիմնադրված «Կովկասի

¹⁷⁹Տե՛ս E. Taymaz, “Kuzey Kafkas Dernekleri”, Türkiye’de Sivil Toplum ve Milliyetçilik, İletişim yayıncılık, İstanbul, 2001, s. 455–456

մշակույթային ասոցիացիան» («Kafkas Kültür Derneği»¹⁸⁰)
համակարգող մարմին դարձավ թվով 11
հյուսիսկովկասյան կազմակերպությունների
համար¹⁸¹: ԽՍՀՄ փլուզումը, Հյուսիսային Կովկաս
այցելելու հնարավորությունը, ինչպես նաև
Աբխազիայում և Չեչնիայում սկսված ռազմական
գործողությունները նպաստեցին նրան, որ
հյուսիսկովկասյան համայնքներում
մշակույթային խնդիրներին զուգահեռ
առանցքային դեր ստացավ նաև իրենց պատմական
հայրենիքին մարդասիրական օգնության
տրամադրումը և հայրենադարձության
կազմակերպումը: Այս խնդիրները լուծելու
նույն ժամանակահատվածում աշխատանքները
ավելի արդյունավետ
դարձնելու էր նույն ժամանակահատվածում
կազմակերպությունների խմբավորումը
տարբեր միություններում: Այս զարգացումների
տրամաբանական շարունակությունը
դարձավ այն, որ արդեն 1993 թվականի
հոկտեմբերին «Կովկասի մշակույթային
ասոցիացիայի» կողմից
կազմակերպված հանդիպման արդյունքում
20 կազմակերպությունների նախաձեռնությամբ
Անկարայում ստեղծվեց «Կովկասյան ասոցիացիան»
(«Kafkas Derneği» կամ KAFDER)¹⁸²: Ստեղծված
դաշնային կառույցը փաստացիորեն
դարձավ հյուսիսկովկասյան համայնքները
ներկայացնող գլխավոր կառույցը, որը իր
աշխատանքները

¹⁸⁰ Չ շ փոթել 1953 թվականին Ստամբուլում ստեղծված «Կովկասի մշակույթային ասոցիացիայի» հետ, որը դադարեց գործել 1980 թվականին ռազմական հեղաշրջումից հետո:

¹⁸¹ Տե՛ս մինչև 1994 թվականը «Կովկասյան ասոցիացիայի» կողմից տպագրվող «Marje» պարբերականում . U. Mehmet, «Adighe Cumhuriyeti», Marje, Ankara, Temmuz 1992, s. 19

¹⁸² Տե՛ս Ö. Şahim, “Gündem”, Marje, Ankara, Haziran 1992, s. 40

իրականացնում էր շուրջ 23 մասնաճյուղերի միջոցով:

Միևնույն ժամանակ Աբխազիայում և Չեչնիայում իրավիճակի ևարվածությունը նպաստում էր նրան, որ Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասյան համայնքը երկրի իշխանություններին պահանջում էին ավելի ակտիվ ներգրավվածություն հակամարտության կարգավորման հարցում: Այս հարցում համայնքի աշխատանքները ավելի համակարգված իրականացման էր ուղղված 1992 թվականի օգոստոսի 23-ին կովկասյան մշակութային կազմակերպությունների կողմից «Կովկաս-Աբխազիա համերաշխություն հանձնաժողովի» («Kafkas-Abhazya Dayanisma Komitesi») կամ KADK) ստեղծումը¹⁸³: Յիմնադրման պահին կազմակերպության առանցքային նպատակն էր մարդասիրական օգնության տրամադրումը Աբխազիային և վրացական կողմի գինված գործողությունները դատապարտող միջոցառումների իրականացումը: Միևնույն ժամանակ կարևոր էր նրանց կողմից Աբխազիայի վերաբերյալ հանրային տեղեկատվության մեծացմանը ուղղված միջոցառումները: Ներկայումս կազմակերպության առաջնահերթություններն են Աբխազիայի անկախության ճանաչումը Թուրքիայի կողմից, տարածաշրջանում խաղաղության պահպանումը, Աբխազիային աջակցություն տրամադրելը և Աբխազիայի նկատմամբ գործող շրջափակման վերացումը¹⁸⁴: Յատկանշական է, որ

¹⁸³ «Կովկաս-Աբխազիա համերաշխություն հանձնաժողովի» մասին տե՛ս կազմակերպության պաշտոնական կայքում (<https://goo.gl/8bvQaD>)
¹⁸⁴ Նույն տեղում

կազմակերպության մեծագույն աջակցություն էին ցուցաբերում նաև հյուսիսկովկասյան այլ կազմակերպություններնույնպես:

Թուրքիայի ազգային փոքրամասնություններին համար էական փոփոխություններ բերեցին Եվրամիության հետ հարաբերություններում գրանցված զարգացումները: 1999 թվականի Յեյսուիսկիի գագաթնաժողովի արդյունքում Բրյուսելը պաշտոնապես Թուրքիային ճանաչեց որպես ԵՄ-ին անդակացելու հավակնորդ: Արդյունքում թուրքական իշխանությունները որդեգրեցին ավելի ազատական մոտեցում ազգային փոքրամասնություններին հարցում: Վերջիններս հնարավորություն ստացան դասավանդել իրենց լեզուն, մշակույթը, ինչպես նաև կազմավորել դաշնություններ: Նման զարգացումները հանգեցրեցին նրան, որ 2003 թվականին լուծարվեց KAFDER-ը, իսկ անդամասոցիացիաները ստացան անկախ կազմակերպությունների կարգավիճակ: Սակայն կարճ ժամանակաց` նույն տարվա հուլիսամսին, 50 կազմակերպություններ ստեղծեցին «Կովկասյան ասոցիացիաների դաշնությունը» («Kafkas Dernekleri Federasyonu» կամ KAFFED): Մինչ օրս գործող կազմակերպությունը կարևորագույն կապող օղակ է թուրքական իշխանություններին և հյուսիսկովկասյան համայնքների միջև: «KAFFED»-ի գործունեության առանցքային ուղղություններն են լեզվի դասընթացների կազմակերպումը, «Նարթ» ամսագրի տպագրությունը, Յյուսիսային Կովկասում ուսանողների

փոխանակման ծրագրերի, ամառային դպրոցների և այլ ցելոլթյունների իրականացումը¹⁸⁵:

«KAFFED»-ին գուգահեռ 2003 թվականին Անկարայում իր գործունեությունը սկսեց 50 կազմակերպություններից բաղկացած «Միացյալ կովկասյան ասոցիացիաների դաշնությունը»: Վերջինիս կազմում մեծամասնությունը կազմում էին աբխազական և ադրդական կազմակերպությունները: Դաշնության առանցքային գաղափարը միացնական կովկասյան պետության ստեղծումն էր 1918 թվականին ստեղծված Հյուսիսային կովկասի Լեռնային հանրապետության նմանությամբ:

Այս խոշոր միավորումներին գուգահեռ 2000-ականներից սկսեցին ձևավորվել նաև առանձին դաշնություններ, որոնք ներկայացնում էին Թուրքիայում բնակվող հյուսիսկովկասյան առանձին էթնիկ խմբի շահերը: Թեմայի ուսումնասիրության շրջանակներում անհրաժեշտ է ընդգծել 2010 թվականին ստեղծված «Աբխազական ասոցիացիաների դաշնությունը» («Abkhaz Dernekleri Federasyonu»), որի մեջ ընգրկվեցին այդ տարիներին գործող գրեթե բոլոր խոշորագույն աբխազական կազմակերպությունները, որոնց թվում էին «Անկարայի Աբխազական մշակութային ասոցիացիան», «Բոլոնի աբխազական մշակութային ասոցիացիան», «Դյուզեի աբխազական մշակութային ասոցիացիան», «Ինեգյուլի աբխազական մշակութային ասոցիացիան» և «Ստամբուլի կովկաս-աբխազական մշակութային

¹⁸⁵ «Կովկասյան ասոցիացիաների դաշնության» գործունեություն մասին տեղեկությունները տես կազմակերպության պաշտոնական կայքում (<https://goo.gl/KGtdrw>)

ասոցիացիան»¹⁸⁶: Ըստ դաշնության
սահմանադրության, կազմակերպության
աշխատանքային հիմնական ղեկավարություններին
թվում են աբխազական մշակույթի և լեզվի
պահպանությունը սփյուռքում, գործարար կապերի
խթանումը համայնքում, Աբխազիայի անկախության
միջազգային ճանաչմանը ղեկավար
գործունեությունը իրականացումը և թուրք-
աբխազական երկկողմ պաշտոնական
հարաբերություններին ստեղծմանը ղեկավար
քայլերի իրականացմանը:

Անհրաժեշտ է նշել, որ նշված
կազմակերպություններին գնդահեն տարբեր
ժամանակահատվածներում Թուրքիայի տարածքում
գործել են նաև բազմաթիվ այլ
կազմակերպություններ, որոնք մեծամասամբ
զբաղվել ազգային արժեքների պահպանությամբ,
իսկ ավելի ուշ շրջանում լոբբիստական
գործունեությամբ ի օգուտ Աբխազիայի և մյուս
հյուսիսկովկասյան շրջանների:
Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սկսած
XX դարի առաջին տասնամյակից ի թիվս այլ
հյուսիսկովկասյան համայնքների աբխազական
սփյուռքը բավականին ակտիվ մասնակցություն է
ունեցել հասարակական
կազմակերպություններում, որոնք
ներկայացնում էին հյուսիսկովկասյան բոլոր
էթնիկ խմբերին միասին: Չնայած նրան, որ մյուս
հյուսիսկովկասյան համայնքների հետ
համագործակցությունը շարունակում է մնալ

¹⁸⁶ «Աբխազական ասոցիացիաների դաշնության» գործունեություն
հիմնական ղեկավարների և իրականացրած ծրագրերի մասին տե՛ս
կազմակերպության պաշտոնական կայքում (<https://goo.gl/2W7XBs>)

բավականին բարձր մակարդակի վրա, վերջին տասնամյակներին ընթացքում սկսեցին ձևավորվել հասարակական կազմակերպություններ, որոնք ներկայացնում էին միայն թուրքիայում բնակվող արխազական համայնքը: Կարելի է նշել, որ գրեթե բոլոր կազմակերպություններում առանցքային ուղղություններն են արխազական մշակույթի և Լեզվի պահպանությունն և Արխազիայի միջազգային ճանաչմանն ուղղված Լոբբիստական գործունեության իրականացումը:

3.2 ԱՐԽԱԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սկսած 1980-ականների երկրորդ կեսից թուրքիայի արխազական և հյուսիսկովկասյան համայնքները ներկայացնող կազմակերպությունները ակտիվորեն սկսեցին մասնակցել երկրում ընթացող քաղաքական գործընթացներին: Եթե նախկինում համայնքային կազմակերպությունները իրենց գործունեությունը իրականացնում էին ազգային մշակույթի և Լեզվի պահպանության, ինչպես նաև Լուսավորչական գործունեության ոլորտներում, ապա այժմ օրակարգում առանցքային տեղ զբաղեցրեցին հայրենադարձությունը և Հյուսիսային Կովկասի միջազգայնորեն չճանաչված հանրապետությունների օգտին իրականացվող Լոբբիսգը թուրքիայում: Գործունեություն ուղղություններին փոփոխությունները առաջին հերթին կարելի է կապել XX դարի վերջին տարածաշրջանում գրանցված զարգացումների հետ: ԽՍՀՄ գոյության վերջին տասնամյակում խորհրդային իշխանությունների

կողմից որդեգրած նոր քաղաքականությունը հնարավորություն տվեց շուրջ մեկուկես դար առաջ Օսմանյան կայսրությունն արտագաղթած հյուսիսկովկասյան ժողովուրդների սերունդներին այցելել իրենց պատմական հայրենիք: Պատահական չէ, որ ի թիվ մյուս հյուսիսկովկասյան համայնքների Թուրքիայում բնակվող աբխազ բնակչության շրջանում լայն տարածում գտավ հայրենադարձության գաղափարը: Արդեն 1990-ականների սկզբին Աբխազիայում վերաբնակություն հաստատեցին շուրջ 3000 Թուրքիայի քաղաքացիներ, որոնց ճնշող մեծամասնությունը էթնիկ աբխազներ էին¹⁸⁷: Արդյունքում աբխազական համայնքի հետաշխատող հասարակական կազմակերպություններում առանձին գործունեության ոլորտ դարձավ հայրենադարձությունը և պատմական հայրենիք այցելությունների կազմակերպումը: Մինչ օրս հասարակական կազմակերպությունների կողմից Թուրքիայում բնակվող ծագումով աբխազերի տասարդների համար կազմակերպվում են ամառային դպրոցներ և փոխանակման ծրագրեր Աբխազիայում:

